

ՄՀԵՐ ՍԱՀԱԿՅԱՆ

ՉԻՆԱՍԱՆԻ «ՄԵԿ ԳՈՏԻ,  
ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ»  
ՆԱԽԱԶԵՇՈՒՄԹՅՈՒՆ  
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ



Silk Road • Մետաքսի ճանապարհ • 丝绸之路 • Шелковый путь  
• One Belt, One Road • Մեկ գոտի, մեկ ճանապարհ • 一带一路  
Один пояс, Один путь • Silk Road • Մետաքսի ճանապարհ •  
• Шелковый путь • One Belt, One Road • Մեկ գոտի, մեկ ճանապարհ •  
• 一带一路 • Один пояс, Один путь • Silk Road • Մետաքսի ճանապարհ •

32 (53)

Ա-15

հ2

Միեր Մահակյան

ՉԻՆԱՍԱՆԻ

«ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ»

ՆԱԽԱԶԵՇՆՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

5929

Երևան  
2018

Գիրքը հրատարակվում է  
«Նորագալեք» ԳԿՀ Գիտական-փորձագիտական խորհրդի  
որոշման հիման վրա

Գիտական խմբագիր՝  
ՎԱԼԵՐԻ ՊՈՂՈՅԱՆ  
Թիվիստվայական գիտությունների թեկնածու

### Սահման Մեկը

ԶԻՆԱՏՈՒՄ «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ»  
ՆԱԽԱՉԵՇՈՒՌՈՒԹՅՈՒՆՆԱՌ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ /  
Մ. Ասհակյան - Եր.: «Նորագալեք» ԳԿՀ, 2018. - 144 էջ +  
ներդիր 20 էջ:

Աշխատությունն վերլուծվել է Զինատումի «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» (ՄԳԱՃ) նախաձեռնության ազդեցությունը համաշխարհյին բաղադրատևասական իրադրույթան վրա, գևահառվել է ՄԳԱՃ և այսամեջ նույնականացնելու պարագայի անվտանգության տևասակյանից, ինչպես նաև ներկայացնել են մի շարք առաջարկներներ, որոնց միջոցով Հայաստանը կվարողանա ենթարկվել այդ նախաձեռնությունում:

Նախատեսված է արտաքին բաղադրականության պատասխանություն, դիմունագուների, միջազգային գետների, արեւագիտների, շնչագուների, տնօտագետների, ուսմունքների և ընթերզող լայն շրջանակների համար:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	5
ՃՐԵՑ ԳԻՐՔ՝ ԷՒՇՏ ԺԱՄԱՆԱԿԻՆ, ՃՐԵՑ ՏԵՂՈՒՄ	7
ԳՈՏԻՆ 1. ԶԻՆԱՏՈՒՄ «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» ՆԱԽԱՉԵՇՈՒՌՈՒԹՅՈՒՆՆԱՌ ՎԻԱՍԱԿՆԵՐԸ, ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԸ ԵՎ ԱԱՎԱՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՅԸ	11
1.1 «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» Նախաձեռնության մեկնարկը և ազդեցությունը	14
1.2 «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» Նախաձեռնության նպատակները և առանձնահատկությունները	21
1.3 «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» Նախաձեռնության գևահառվել Զինատումի ազգային անվտանգության տեսակելունից	28
1.4 Վեհաժամանակորելով «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» միջազգային հարաբերությունների տեսությունների տեսակելունից	42
ԳՈՏԻՆ 2. «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» ՆԱԽԱՉԵՇՈՒՌՈՒԹՅՈՒՆՆԱՌ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԵՍՈՒՐՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ-ՀԲՀԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՍՏԳՈՐԾՄԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՇԱՆԿԱՐՆԵՐԸ	56
2.1 «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» Ներդրումների համար տրամադրվող ֆինանսավարկային հիմնական արդյունները	56
2.2 Հայ-Հինական ֆինանսարաններին համագրծակցության հետակարգները «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» նախաձեռնության շրջանակներում	69

<b>ԳԼՈՒԽ 3. «ՄԵՏԱՔՄԻ ՃԱՆԱՊԱՐՀ ՏԱՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ»</b>	
ՅԱՄԱՐԱԲՆ ՀԱՌԱՎԱԿԱՆ ՎԵՏ ՄԴԱՎԱՑԲՈՒԵՐԸ	
«21-ՐԴ ԴԱԻԻ ՄԵՏԱՔՄԻ ԾՈՂԱՑԲՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ»	
ԵՎ ԴՐԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾԲՈՒԵՐԸ	
ԸՆԴԻԳԿԱՆ ՀԵՇԽԱԿԱՐԵՐԸ ..... 73	
3.1 «Անտարի ճանապարհ ԽՆՏԽԱԼԿԱՆ գոտու» ցամաքային հիմնական վեց միջազգեները ..... 73	
3.2 «21-րդ դարի մետարխի ծովային ճանապարհի» ուղիները ..... 95	
3.3 «Մեկ գոտի, մեկ ճանապարհում» Հայաստանի ենթակառուցվածքների ընդդրկման հեռանկարները ..... 98	
<b>ԳԼՈՒԽ 4. «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀԸ» ՇՐՋԱԼԱՎԿԵՐՈՒՄ</b>	
ՀԱՅ-ՉԻՆԻԱԿԱՆ ՀԱՅԱՎՈՐՈՎԱՅՇՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒՄՆԵՐԸ ՌԱԶՄԱՔՄԱՆՔԱԿԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ	
ԴԻՎԱՆԱԳԻՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ..... 105	
4.1 Հայ-չինական ոսպժատեխնիկական, ուսգմարդարական համագործակցության խորացան և ախտադրյան համարյակները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» ցրչանակներում ..... 105	
4.2. ՀՀ քաղաքացիների համար Շինաստանի Հոնկոնգի հաստի վարչական շրջան այցելելու մուտքի արտոնագիրը հանելու գլահատականը ՄԳՍՃ-ում ՀՀ մասնակցության տեսանկյունից ..... 112	
4.3 Չինաստանի հայկական համայնքը որպես հայկական «փափուկ ուժի» գործոն օգտագործելու հնարավորությունները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» հայտանենությունում ..... 117	
4.4 Հակոբյան դիվանագիտուրան և շախափուրունը «Մեկ գոտի, մեկ ճանապարհում» ..... 127	
<b>ԱՍՓՈՓՈՒՄ</b> ..... 129	
Օգտագործված գրականության ցանկ և հարցազրույցներ ..... 135	

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԵՆՔ Ասիական եկամուտցվածքային ներդրումների բանկ
- ԱԶԲ Ասիական զարգացման բանկ
- ԱԻՏՀ Ասիա-խաղաղօվկիանոսյան տնտեսական համագործակցություն
- ԱՄՀ Արժույթի միջազգային հիմնադրամ
- ԲՇՀՍՄ Բանզայակց-Չինաստան-Հնդկաստան-Մյանմար տնտեսական միջազգը
- ՁՆԲ ԲՈՀՀԸ (BRICS) զարգացման նոր բանկ
- ԵՄ Եվրոպական միություն
- ԻԱ Խաղաղապահ առարելություններ
- ԿԳՆ Կայուն զարգացման նպատակներ
- ԿԺԾՀ Կորեայի Ժողովրդական Ժողովրդավարական Հանրապետություն
- ՀԱՀ Հայաստանի ամերիկյան համալսարան
- ՀՀԳՀՍ Համատէկ խաղաղ գոյակցության հիմք սկզբունքներ
- ՀՀ Հայաստանի Հակառակետություն
- ՀԱԵԱ Հարավարևելյան Ասիայի երկրների ասոցիացիա
- ՀՈՆԿՈՆԳ Հոնկոնգի հատուկ վարչական շրջան
- ՀԱԿ Հայիշ անցարային կետ
- ՄԳՍՃ Մեկ գոտի, մեկ ճանապարհ
- ՄԾՃ 21-րդ դարի մետարխի ծովային ճանապարհ
- ՄՄԵ Մեծ Մեկոնգի ենթառարածաշրջան

ՄՃՏԳ	Մետարի ճանապարհ տնտեսական գոտի
ՄՃՀ	Մետարի ճանապարհ հիմնադրամ ՄԴՀ
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՄԱԿ ԱԽ	ՄԱԿ Անվտանգության խորհուրդ
ՆԵԱՍԿ	Նոր Եվրասիական մայրացամաքային կամուրջ
ՇՀԿ	Շանհայի համագործակցության կազմակերպություն
ՉԱԱԲ	Չինաստանի արդյունաբերական և առևտրային բանկ
ՉԱԱԲ	Չինաստանի արտահանման և ներմուծման բանկ
ՉԲ	Չինաստանի բանկ
ՉՉԲ	Չինաստանի զարգացման բանկ
ՉԺՀ	Չինաստանի ժողովրդական Հանրապետություն
ՉԺԲ	Չինաստանի շինարարական բանկ
ՉԿԱԱՍՄ	Չինաստան-Կենտրոնական Ասիխ-Արևմտյան Ասիխ տնտեսական միջանձը
ՉինաՀայ	Չինաստանի հայկական համայնք
ՉՀԹԾՄ	Չինաստան-Հնդկաչին թերակղզի տնտեսական միջանձը
ՉՊԱՄ	Չինաստան-Պակիստան տնտեսական միջանձը
Մինծիան	Մինծիան-Ռուսարական ինքնավար շրջան
ՓՀԻ	Փոխառության հառուկ իրավունք

**ԹԻԾ ԳԻՐՔ՝  
ԹԻԾ ԺԱՄԱՆԱԿԻՆ, ԹԻԾ ՏԵՂՈՒՄ**

Ես նախընտրում եմ այսպես վերևագրել իմ հակիրճ խոսք Սիեր Սահակյանի ընթերցողի սեղանին դրված «Չինաստանի «Մէկ գոտի, մէկ ճանապարհ» նախաձեռնությունը և Հայաստանը» գրքի վերաբերյալ, և կարծում եմ, որ չեմ սխալվում: Թեկուզ այն պարզ պատճառով, որ զիրքն իր տեսակի մէջ առաջինն է և միակը հայկական իրականությունում:

Ցավալի է այս փաստը, որ Հայաստանը վատ գիտ Չինաստանը, և ավելի վատ է, որ եւս է մոտ այդ կարևորագոյն երկրի հետ փոխշահավետ համագործակցություն զարգացնելու հնարակորությունից: Միեշներ Հայաստանում հետարքրությունը «Հնաշշարիիկ» երկրի նկատմամբ հետզետ տէ աճում է:

Առանց սիալվելու մէծ հավանականության կարելի է ասել, որ զիրքը ճանապարհային քարտեզ է դեպի Չինաստան Հայաստանի առաջանայու համար:

Սիեր Սահակյանի ուսումնասիրությունում քաղաքացիության, տնտեսագիտության խոր և համակրզմանի վերլուծության են ներարկվում Չինաստանի ներքին և արտաքին

քաղաքականության այն ասպեկտները, որոնք թի են ուսումնասիրվել կամ զրեթ չեն ուսումնամիջութեալ հայ մասնագետների կողմից: Սակայն զրի ամենամեծ արժեքը այն է, որ հեղինակը հայ ընթերցողներ առաջին անգամ հանգամանորեն ներկայացնում է շինական «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» խմա՝ «Մետարքի ճանապարհ» համաշխարհային մասշտաբի նախաձեռնությունը:

Արդ, մեզ լավ հնարավորություն է ընձեռված բազմակողմանիորեն ծանոթանալ «Մետարքի ճանապարհի» ներշնական նշանակությանը, այն հեռանկարներին, որոնք բացվում են տարածաշրջանային երկրների և տարբեր մարզամարզների համար այդ համապարփակ նախաձեռնության շնորհիվ:

Առաջին հայացից տնտեսական նշանակություն ունեցող «Մետարքի ճանապարհի» շրջանակներում Մեկը Սահմանականը մեզ ծանոթացնում է այդ ծրագրի աշխարհաբարձրական և միջազգային սեփանություններին, որոնք ներառված են շինական դեկավարության ներկայացրած մկրոններում:

Ուսումնասիրությունում կարևոր տեղ է գրագում Շինաստանի հարաբերությունների զարգացման դինամիկան հարևանների, Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածքների պետությունների, ինչպես նաև ԱՄՆ-ի, ԵՄ-ի և Ռուսաստանի հետ:

Հեղինակի անդրադառնում է XXI դարի մարդկության համար ահազնացող վտանգին՝ խլամական ահաբեկչությանը, որը, ինչպես պարզվում է, սպառնալիք է ներկայաց-

շինաստան «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» ՆԱԽԱՇԵՐՋԱՌԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ Նույն իր կափենտրոնից շատ ենուու գտնվող Շինաստանին և նրա քաղաքանականական նախաձեռնությանը ևս:

Այդուհանդեռ, Մեկը Սահմանականի աշխատության ամենամեծ արժեքը «Մետարքի ճանապարհի» միջազգային ուսումնարարական, տնտեսական և տղակալ-մշակութային ասպեկտների մատչելի բացատրությունն է, և ամենակարևորը՝ դրա պարակնի նշանակությունը Հայաստանի համար:

Մենագրությունը հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն «Մետարքի ճանապարհի» առումով, այլև հայ-շինական երկկողմ հարաբերությունների զարգացման համար: Այսուղ ևս Մեկը Սահմանական կոնկրետ է: «Հայաստանում Շինաստանի հետ համագործակցությունը կարող են զարգացնել ոչ «սովորական» գիևստեսակների բնազմազում: Կարելի է համատեղ կառուցել ոռուսացված գիևստեսակների և անօդաչու թօշող սարքերի ուսումնարդյունաբերական կենսորուն Հայաստանում, որի արտադրանքը կարելի է սպառնել Մերձավոր Արևելքում և ԵԱՏՄ-ում», - առաջարկում է նա:

Եշխատությունում հեղինակն առաջարկություններ է առնել նաև Արցախի հարցում հայ-շինական հնարավոր համագործակցության վերաբերյալ:

Եվ վերջինը Երկար տարիներ ապրելով, սովորելով և աշխատելով Շինաստանում՝ Մեկը Սահմանական ակտով դեր է խաղացել հայկական համայնքի կազմակրթման և դրացման գործընթացում: Իր ուսումնասիրությունում նա համոզի կերպով ցույց է տայիր այս հնարավորությունները, որոնց տիրապեսում է տեղի հայությունը հայ-շինական հնար-

բությունների գարզացման գործում: Այդ պրոտենցիալը չի կարելի հաշվի չառնել:

Այս գիրքը պերճախոս վկայությունն է այն բանի, որ հանձինս Մեկը Սահմանական մենք ունենք բարձրակարգ պրոֆեսիոնալ-չինագետ, որոնց կարելի է հաշվել մատուցելի վրա Նրա հետարավորությունները հայ-չինական հարաբերությունների գարզացման գործում ակտիվորեն չօգտագործելն աններելի վրիհարում կլիներ:

**Արման Նավասարդյան  
Արտակարգ և լիազոր դեսպան,  
քաղաքական գիտությունների թեկնածու, դրցենս  
7 հուլիսի 2018թ.**

ԳԼՈՒԽ 1.  
ՉԻՆԱՍՍԱՏԱՆԻ «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ»  
ՆԱԽԱԳԵՋՈՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ,  
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԱՆՎԱՆԳԱՅԻՆ ԳՈՐԾՈՂՆԸ

21-րդ դարի երկրորդ տասնամյակում Չինաստանի Կոմունիստական կուսակցությունը, որում այժմ առանցքային և նախաձեռնող դեր է խաղում նախագահ Սի Շինփինը՝ հենվելով տնտեսական զարգացման արդյունքում ձեռք բերված հաջողությունների վրա, զգայի փոփոխությունների և ենթարկում Չինաստանի արտարին քաղաքականությունը:

21-րդ դարի շինական քաղաքականությունը կարելի է բաժանել երկու մասի:

Առաջին շրջանը մինչ Սի Շինփինն էր, երբ Չինաստանը փորձում էր գործել խոր պաշտպանությունից և շատ շիառվել միջազգային գործերին, խնդիրներ չստեղծել մըսու համաշխարհային խաղաղողների և առաջին հերթին՝ ԱՄՆ-ի հետ: Չին բարձրաստիճան պաշտոնականների հայտարարություններում գերակշռում էր այն միտքը, որ Չինաստանն ինքն է զարգացող երկիր և չնայած աշխարհի զարգացող շատ երկրներ կցանկանային Չինաստանը տեսնել ավելի ակտիվ, սակայն այն նման հնարավորություն չունի:

Երավիճակը փոխվեց Սի Շինփինի ժամանակաշրջանում. նրա օրոք Շինաստանը փորձում է դուրս գալ ստվերից և ստանձնել ակտիվ դերակատարություն, ՍԳՄԾ-ի միջոցով իր վրա վերցնել համաշխարհային տնտեսական դաշտի նախագծումը, ինչը կամրապնդի Պեկինի դիրքերը միջազգային ասպարեզում։ Կարելի է փաստել, որ այս առումով համաշխարհային քաղաքական դաշտում հետաքրքիր փոփոխություններ են տեղի ունենում։ Թրամփան ԱՄՆ-ը դարձել է համաշխարհայինացման հակառակորդը, որի ջատագովն եր ու առաջին պաշտպանը մինչ Օբամայի հեռանալը, իսկ Արևելքի կարմիր դիլոգավրը՝ Շինաստանը, որը դարեր շարունակ մեկուսանալու փորձ ունի, հանդես է գալիս որպես համաշխարհայինացման ջատագով։<sup>1</sup>

Խոսելով Շինաստանի արտաքին քաղաքականության արդի զարգացումների մասին՝ չին հետազոտող Զոն Ֆեյենը նշում է, որ երկրի աշխարհաքաղաքականության տևալական է և փոխվել, քանի որ նրա տնտեսական ազդեցությունը սպանել է արևելքից անդին [1, թ. 49]:

Շինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիայի Սահմանակից Երկրեմբի ուսումնասիրությունների շինական ինստիտուտի ղեկավար Սին Գուանչնն, իր հերթին, նշում է, որ ուկրաինական ճգնաժամը ցույց տվեց, որ Եվրասիական ռազմավարական ոլորտը նոր հարթակի կարիք ունի, որը կիամապատասխանի տեղի պայմաններին։ Ըստ

Շինաստան-Մեծ Չին, Մեր Ճամապարհություն և Ամերիկայի մասնակի շինական ՍԳՄԾ նախաձեռնությունը կարող է դառնալ նաև Եվրասիական տարածաշրջանի անվտանգությանը նպաստող գործոն [2, թ. 151]։ Այսինքն Շինաստանը փորձելու է դուրս գալ հետաքրքիրներյան տարածաշրջանային դերակատարի կարգավիճակից և ստեղծելով վերոիիշյալ ըները՝ ապահովել Շինաստանի անվտանգությունն ու տնտեսության կայուն զարգացումը ևս տարածաշրջանից դուրս վերածվելով ուժի համաշխարհային կենտրոնի։ Այս զարգացումները հաշվի առնելով եւ Հայաստանը պետք է կարգավորի հարաբերությունները Շինաստանի հետ։

Մինչև արտաքին աշխարհում առանձին ազգեցիկ բնույթայի Շինաստանը նախ պետք է լուծի ներքին, սոցիալ-տնտեսական խնդիրները։ Ըստ Շինաստանի ղեկավարների ճանապարհային քարտեզի՝ մինչև Շինաստանի Կոմունիստական կուսակցության ստեղծման 100-ամյակը՝ 2021 թվականը կուսակցության համար պետք է ապահովել քարեկեցիկ կյանք, հասարակության համար պետք է ապահովել քարեկեցիկ կյանք, իսկ մինչև 2049 թվականը, եթե Շինացիւները կնշեն Շինաստանի ժողովրդական Հանրապետության հիմնական իրավունքները, այս պետք է վերածել քարավաճ, հզոր, ժողովրդավարական, ներդաշնակ, ժամանակակից սոցիալական երկրի [2, թ. 156]:

Այս ճանապարհային քարտեզով երկրի տնտեսական զարգացումը և անվտանգությունն ապահովելու համար Շինաստանի ղեկավարությունը 2012թ. Կոմունիստական կուսակցության 18-րդ Ազգային համաժողովի ընթացքում զարգացման 13-րդ հիմքամյա պլանում (2016-2020թթ.) երեք

<sup>1</sup>\*Արմենիա և Կիтай: Բարոյական հայրենիք\*, Գոլոս Արմենիա, 2017,  
<http://golosarmenii.am/article/56362/armeniya-kitaj-rastushchij-interes>

հիմնական ռազմավարությունների մեջ առաջինը նշել է ԱԳՍԴ և սահմանադրության իրագործումը [3, p. 549], որը բաղկացած է ԱՃՏԳ-ից և ՄԾՃ-ից:

### 1.1 «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» և սահմանադրության մեկնարկը և ազդեցույթունը

ԱՃՏԳ համաշխարհային մեկնարկը կարելի է համարել 2013թ. սեպտեմբերի 7-ը, երբ Հինաստանի նախագահ Սի Շինիփինը Ղազախստանի «Նազարբաև» համալսարանում հայտարարեց պատմական «Մետարժի ճանապարհի» եիման վրա նոր տնտեսական գոտու առնեմիան անհրաժեշտության մասին: Նա մասնավորապես կարևորեց իննօ գործոն, որոնց հիման վրա Պեկինը պատրաստվում էր համագործակցել Վենտրոնական Ասիայի պետությունների հետ: Այս կտերի քննարկման և հետազոտման կարևորությունն այն է, որ հետազոտման մեջ ԱՃՏԳ-ն ավելի լայն աշխարհագործություն ընդունեց, դրանք առանցքային դարձան այս տնտեսական գոտում գործակող երկների համար:

Նշված իննօ գործոններն են:

1. Պարբերաբար անցկացնել քաղաքական խորհրդակցություններ, որոնց նպատակը պետք է լինի տարածայնությունները նվազագույնի հասցենը և տարածաշրջանային տնտեսական խնտեղացիոն գործընթացների ապահովումը:

<sup>1</sup>«Մեկ գոտի, մեկ ճանապարհի» առաջին մասը՝ «Մետարժի ճանապարհ տնտեսական գոտին»՝ կ իրդիրական խնկ երկրորդ մասը՝ «մեկ ճանապարհ», արտահայտում է «21-րդ դարի մետարժի ծավալիս ճանապարհը»:

2. Զարգացնել և ստեղծել նոր տրանսպորտային ուղիներ, որոնք միմյանց կեապէն Արևելյան, Արևմտյան և Հարավային Ասիան ու կիրառեն այդ տարածաշրջանների տնտեսության և գրուաշրջության զարգացումը:
3. Նպաստել ազատ առնտրային հարաբերությունների հաստատմանը, վերացնել ներդրումների ծավալների ավելացմանը խանգարող խոշնդրությունները:
4. Վերափոխել դրամային շրջանառության կանոնները, հետզետեւ անցում կատարել տարածաշրջանային երկրների դրամեներով առնտրին, ապահովել տվյալ դրամային միավորների կոնվերտացիան:
5. Նպաստել տվյալ երկրների քաղաքացիների միջև շփումների ակտովիացմանը [4, p. 315-319]:

Այս կտերի հիմնական փիլիսոփայությամբ էլ կարելի է կառուցել հարաբերությունները Հինաստանի հետ: Այսինքն՝ կառուցել հարաբերությունները Հինաստանի և Հինաստանի անվտանգության պաշտովման նախագծության գործակիցը բարձրացնելու համար արդյունավետություններ կազմակերպել երկու երկրների ուղարկացությունները մասնակերպել երկու երկրների ուղարկացության մասնակցությամբ, ուսումնասիրել և օգտագործել ազատ առնտրի գոտիներ բացելու հարաբերությունները, ապահովել հայկական և չինական դրամների կոնվերտացիան, երկրով առնտրում օգտագործել հայկական և չինական դրամները, կառուցել և համատեղ շահագործման հանձնել տրանսպորտային ուղիներ և այլն:

Հահագործման հանձնել տրանսպորտային ուղիներ և այլն:

2013թ. հոկտեմբերի 3-ին Սի Շինիփինը, այս անգամ ար-

դեմ Ինդոնեզիայում, հայտարարեց ՄԳԱՀ նախաձեռնության ՄԾՀ հատվածի մեկնարկի մասին։ Նա նշեց. «Հարավապարելյան Ասիան դեռ հին ժամանակներից համարվել է «Մետարքի ծովային ճանապարհի» կարևոր հանգույցը։ Չինաստանը կյարացի ծովային համագործակցությունը Հարավապարելյան Ասիայի երկրների ասցիացիայի (ՀԱԵԱ) հետ, իսկ Չինաստան-ՀԱԵԱ հիմնադրամը, որը ստեղծել է Չինաստանի կառավարությունը, պետք է օգտագործի համատեղ շահերով ՄԾՀ-ի հիմնադրամն համար» [4, p. 321]:

Կարճ ժամանակահատվածում ՄԳԱՀ-ն դրս եկավ գույտ տարածաշրջանային մակարդակից և ձեռ բերեց համաշխարհային նշանակություն։ 2014-2016թթ. Չինաստանի և ՄԳԱՀ մասնակից երկրների միջև առևտուրը գերազանցեց \$3 տրին-ը, չինական ներդրումները այդ երկրներում անցան \$50 մլրդ-ն։ Չինական ընկերությունները հիմնեցին 56 համատեղ տնտեսական գոտիներ 20 երկրներում, որի շնորհիվ այդ երկրները \$1.1 մլրդ-ի շահույթ ստացան հարկերից և ստեղծվեց մոտ 180 հազ. աշխատատեղ։ 2016թ. օգոստոսի 17-ին Սի Շինփինը հայտարարեց, որ ՄԳԱՀ-ին միացել են հարյուրից ավելի երկրներ և միջազգային կազմակերպություններ, որոնցից 30-ի հետ ՄԳԱՀ-ն կառուցելու պայմանագրեր են կը վել, իսկ 20-ի հետ համագործակցություն է սկսվել միջազգային արդյունաբերության ոլորտում [3, p. 550]:

Չինական դիվանագիտությանը հաջողվեց համագոր-

<sup>3</sup> Full Text of President Xi's Speech at Opening of Belt and Road Forum, Xinhua, 2017.  
[http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c\\_136282982.htm](http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c_136282982.htm)

շրաբնաւոր, Մեծ Գում, Մեծ Ճանապարհ։ Համաշերտություններ են Համական ՄԳԱՀ-ի և Ռուսաստանի ԵԱՏՄ-ի, ՀԱԵԱ-ի «Փոխկապակցման գլխավոր պլան», դագախական «Պայծառ ճանապարհ», թուրքական «Միջին միջանցք», մոնղոլական «Զարգացման ճանապարհ», վիետնամական «Երկու միջանցք» մեկ տնտեսական շրջան, բրիտանական «Հյուսիսային ուժային կենտրոն» և լիհական «Մարդ ճանապարհ» նախաձեռնությունների հետ։ Այսինքն՝ չինական կողմն ազգեցույթան գոտիների համար ոչ թե հականարդության մեջ մուավ տվյալ պետությունների հետ, այլ օգտագործելով սեփական տնտեսական առավելությունը՝ համագործակցություն սկսեց հիշյալ ծրագրեր ՄԳԱՀ-ին համակցելու համար, ինչն էլ մեծացրեց Չինաստանի ազգեցույթյունը։

Թեև Եվրոպական միությունը (ԵՄ) Չինաստանի առաջն առևտարային գործընկերն է՝ երկու կողմերը 2015թ. համաձայնեցին ներդաշնակություն ապահովել ՄԳԱՀ-ի և ԵՄ ներդրումային ծրագրերի միջև, բայց, ինչպես նշում է Եվրոպական բարեփոխումների կենտրոնի դեկազր Յան Բոնդը, «ընդհանուր առևտար, ԵՄ-ը և Չինաստանն ունեն համապատասխան ներուժ ՄԳԱՀ-ում համագործակցելու համար, բայց դեռևս չկան կոնկրետ նախագծեր» [5, p. 8]։ Այսինքն՝ ԵՄ Չինաստան հարաբերություններն ընթանում են ուղղահայց ձևով, և ՄԳԱՀ-ն դեռևս որոշիչ դեր չի խաղում, բայց ԵՄ

<sup>4</sup> Առյօն տեղայն։

<sup>5</sup> Առյօն տեղայն։

<sup>6</sup> 2016թ. ընթացքում ԵՄ-ը Չինաստանի ներմուծել է 344.6 մլրդ եվրոյի ապրանքանի 170.1 մլրդ եվրոյի ապրանք։ St o European Commission, China, [http://ec.europa.eu/trade/policy/countries-and-regions/countries/china/index\\_en.htm](http://ec.europa.eu/trade/policy/countries-and-regions/countries/china/index_en.htm)

անդամ մի շաբթ երկրներ ակտիվորեն ներգրավված են չինական նախաձեռնությունում:

Եվ այսպես, 2017թ. մայիսի 14-15-ը Պեկինում տեղի ունեցավ ՄԳՍՀ համաժողովը, որի մասնակիցների կազմում էին Ռուսաստանի, Արգենտինայի, Չիլի Լատինայի, Բելառուսի, Չիլիի, Չեխիայի, Ինդոնեզիայի, Ղազախստանի, Ղրղզստանի, Թիվայի, Լատինայի, Ֆիլիպինների, Շվեյցարիայի, Թուրքիայի, Ռեփերտուանի, Վիետնամի, Կամբոջայի, Երովափայի, Ֆիֆի, Շունաստանի, Հունգարիայի, Խուախայի, Մալայզիայի, Մոնդուխայի, Մյանմարի, Պակիստանի, Լիսաստանի, Աերբիայի և Բաղադրիայի դեկավարները<sup>7</sup>: ՄԳՍՀ համաժողովն մասնակցում էին նաև Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) զիսավոր քարտուղար Անտոնիո Գուտիերեսը, Համաշխարհային բանկի նախագահ Ջիմ Յոն Կիմը, Արժույթի միջազգային իիմնադրամի (ՄԱՀ) դեկավար Քրիստին Լազարոյը: Չինական ՄԳՍՀ հեղինակությունն էլ ավելի բարձրացավ, երբ ՄԱԿ զիսավոր քարտուղար Գուտիերեսը համեմատականներ անցկացրեց ՄԱԿ Կայուն զարգացման նպատակների (ԿՁՀ) և ՄԳՍՀ-ի միջի՝ նշելով, որ երկուսի տեսլականի հիմքում ընկած է համաշխարհային զարգացումը: Նաև կարևոր ՄԳՍՀ-ի և ԿՁՀ-ի միջի կապերի խորացումը<sup>8</sup>:

<sup>7</sup> 应习近平主席邀请，目前29个国家元首和政府首脑确认出席论坛（29 Presidents and heads of state invited by President Xi Jinping）出席论坛（29 Presidents and heads of state invited by President Xi Jinping）出席论坛（29 Presidents and heads of state invited by President Xi Jinping），2017, <http://www.xinhuanet.com/world/2017/>

<sup>8</sup> At China's Belt and Road Forum, UN Chief Guterres Stresses Shared Development Goals, Beijing, 2017, <https://www.un.org/development/desa/en/news/sustainable/belt-and-road-forum.html>

Չինաստանի «Մեր գոյն, Մեր գալուպուց» և պատշաճության մեջ նշանակած լրացրությունը չինական կողմը հայտարարեց, որ 2013-2016թթ. չինական ներդրումները կազմել են մոտ \$60 մլրդ, և որ ՄԳՍՀ մասնակից պետություններին բաժին կհասնի չինական կողմի խոստացած հավելյալ ևս \$14, 5 մլրդ-ի ներդրում:

Չինաստանի նախագահ Սի Շինփինի՝ ՄԳՍՀ Միջազգային համագործակցության համաժողովի բացման խորսից կիսելով՝ կարելի է նշել հետևյալ կարևոր ուժերձները ու դրանց վերուժությունները, որոնք նաև փորձեց ուղղել աշխարհին<sup>9</sup>:

### 1. Խաղաղություն և համագործակցություն

Կոմունիստական կուսակցության ղեկավարությունը, հաշվի առնելով անցյալի փորձը, երբ Չինաստանը պատրազմների պատճառով հայտնվում էր քաղաքական և տնտեսական ծանր իրավիճակներում, փորձում է պահպանել խաղաղություն և կայունություն, ինչն էլ հնարավորություն կուտապահովել տնտեսության զարգացումն ու կայունությունը: Հնարքքրական է, որ Չինաստանը փորձում է նաև տնտեսական ներդրումների, առևտրական փոխահավետ կապերի շնորհիվ խրացնել իր և այս երկրների միջև տնտեսական հարաբերությունները, որոնց հետ ունի տարածքային վեճեր կամ քաղաքական լարված հարաբերություններ: Այս բայի միջոցով Չինաստանը փորձում է որոշակի փոխահավետ կապվածություն ստեղծել, որպեսզի այդ երկրները հետա-

<sup>9</sup> Full Text of President Xi's Speech at Opening of Belt and Road forum, Xinhua, 2017, [http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c\\_136282982.htm](http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c_136282982.htm)

զայում գերծ մնան ռազմական գործողություններից: Զինաստանում այս ռազմավարությունը կոչվում է «կապոն» (捆爆戦略/Կնոբանց շհնունք): Տվյալ երկրների շարքին կարելի է դասել ԱԱՆ-ը, Հնդկաստանը, Ճապոնիան, Թուրքիան, Ֆիլիպինները և այլն:

## 2. Բաց և ընդունուել համագործակցություն

Զինաստանը, որը տևական ժամանակ ինքնաստեկուսացման փորձ ունի, ներկայումս ակտիվիտեն առաջ է տանում համաշխարհայնացման գաղափարախոսությունը, փորձում է ազատ առևտորի պայմանագրեր կնքել տարբեր երկրների հետ, ինչի միջոցով կապահովվի երկրում արտադրված ապրանքների մուտքը տվյալ երկրների շուկաներ:

3. Համատեղ խաղաղ գոյակցության հիմք սկզբունքը (ՀնԳՀՍ) [33], որոնց մեջ մտնում են.

1. Հարգել մյուս պետությունների ինքնիշխանությունն ու տարածքային ամրողականությունը
2. Բացառի ազրեւխան երկլորդ հարաբերություններում
3. Չափանվել այլ պետությունների ներքին գործերին
4. Ապահովել հավասարության և փոխադարձ օգուտի սկզբունքը միջազգական հարաբերություններում
5. Հասնել խաղաղ գոյակցության:

Վերութեալ ՀնԳՀՍ կետերի ընդունումը նաև ՄԳԱՀ-ում կարելի է հանգել այն եղանակությանը, որ Զինաստանը փորձում է հարեան երկրներին, որոնց հետ ունի տարածքային վեճեր, ցույց տալ, որ Պեկինը այս երկրների հետ տնտե-

շուստության գոտի, ՄԵԿ համապատասխանություններ են հասանալու ականական հարաբերությունների զարգացումը վեր է դասում տարածքային և զաղափարախոսական վեճերից և տարածայնություններից:

Այս կետերը ներառելով՝ Զինաստանը փորձում է ապահովության զգացում ստեղծել միջազգային հանրությունում և փարատել այս կամացները, որ Զինաստանը հղորանալով՝ փոսեզում է համաշխարհային անվտանգությունը, և հնարավոր է, որ հետազոտությունները կամաց մուտքագրությունը կազմակերպված կումուխստական գաղափարախոսության սեփական տարրերակը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է փաստել, որ Զինաստանը իրագործելով ՄԳԱՀ-ն քայլ առ քայլ ամրացնում է դիրքերը համաշխարհային ասպարեզում և մեծացնում իր ազեղցությունը. Այս հիպոթեզի լավագույն ապացույցը 2017թ. ՄԳԱՀ համաժողովն էր, որի ընթացքում Պեկինը դարձել էր միջազգային հարաբերությունների հիմնական թատերաբեմ: Ներկա էին քանինը պետության գեկավարներ: Կարենք է փաստել նաև, որ եթե սկզբնապես ՄԳԱՀ-ն նախատեսված էր Կենտրոնական, Հարավային և Արևելյան Ասիայի համար, ապա կարծ ժամանակում այս նախաձեռնությունը դրա եկամ հիշյալ տարածաշրջանների շրջանակից մեջացնելով Զինաստանի ազդեցության ոլորտը:

## 1.2 «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության նպատակները և առանձնահատկությունները

Զինաստանի ՄԳԱՀ նախաձեռնության նպատակները պաշ-

տոնապես նշված են «Մէտարսի Ճանապարհ տևուեսական գոտու» և «21-րդ դարի մէտարսի ծովային ճանապարհի» համատեղ կառուցման տեսլականն ու գործողությունները» փաստաթուում, ըստ որի՝ ՄԳՍԱՀ նախաձեռնության նպատակներն են՝ նպաստել Ասիական, Եվրոպական, Աֆրիկյան մայրցամաքների և դրանց հարակից ծովերի կապվածությանը, ստեղծել և ամրացնել համագործակցությունը ՄԳՍԱՀ երկայնքով, իմանել գործառնական, բազմաշերտ և բարարայական կապի ցանցերը։ Այս բայցերի արդյունքում չինացիներն ակնկալում են, որ նախաձեռնության շրջանակներում փոխկապակցած նախագծերը կօգնեն միավորել և համակարգել ՄԳՍԱՀ երկայնքով սիրոված երկրների զարգացման ռազմագործությունները, կիամախմբեն այս տարածաշրջանի շոշափելի ներուժը և կիստանեն ներդրումներն ու ապրանքների սպառումը [6]:

Իր երթին, չինագետ Ռախիս Եպիխինան կարծում է, որ չինացիները նախաձեռնել են ՄՏՏԳ-ն, որպեսզի նոր լիցք հաղորդեն չինական տնտեսությանը, որի աճը դաշտակելու միտումներ է գրանցում։ Ներդրումներ կատարելով մերձավոր և հեռավոր երկրների արդյունաբերություններում և ներքալառուցվածքներում՝ չինացիներն իրենց ապրանքների համար ճանապարհ են հարթում դեպի այդ երկրներ [60]:

ՄԳՍԱՀ պաշտոնական հիմնավորումն այն է, որ Չինաստանի տնտեսական աճը հնարավոր կիխն արագացնել երեք վերոհիշյալ նախաձեռնության շրջանակներում զարգացվեն ներքալառուցվածքները, նվազագույնի հասցեն առնտրին

Չինաստան «Մեկ գոտի, մեկ ճանապարհում» և շաբաթական

խոշնորոշող հանգամակերպությունը, ներդաշնակեցվեն ստանդարտները, ամբազնդվի ներգետիկ փոխկապակցությունը և այլն [7, թ. 7]:

Ինչպես նշված է Չինաստանի ազգային զարգացման և բարեփոխումների հանձնաժողովի հրատարակած «Մէտարսի Ճանապարհ տևուեսական գոտու» և «21-րդ դարի մէտարսի ծովային ճանապարհի» համատեղ կառուցման տեսլականները գործողությունները» փաստաթուում ՄԳՍԱՀ-ն ծածկում է պատմական «Մէտարսի ճանապարհը», բայց այն բաց է մասնակցել ցանկացող բոլոր երկրների և միջազգային կառույցների համար։ Այսինքն՝ ՄՏՏԳ և ՄԾՁ շրջանառության մեջ դրվագ քարտեզները սահմանափակող ընույթ չեն կրում։ Նախաձեռնությանը կարող են մասնակցել այն երկրները, որոնք կլարողանան լավ հաշվարկված, փոխչափավուն ծրագրեր ներկայացնել չինացիներին։

Չինական ՄԳՍԱՀ-ն ուսումնաբիրելիս անհրաժեշտ է ուշագրություն դարձնել այն փաստի վրա, որ չինացիներն այն ընդունչելու համար օգտագործում են նախաձեռնությունները։ Այսինքն՝ նրանք փորձում են ընդգծել, որ սա միակողմանի իրագործվող ծրագիր կամ ընդամենը օգնություն չէ, այլ նախաձեռնություն է, և եթե նախաձեռնություն է, ապա դրա շրջանակներում սեփական թիվնես-ձեռնարկներով պետք է հանդիսանալ նաև նետարքքրվող մյուս երկրները։

Չինաստանի Պետական խորհրդի խորհրդական, պրոֆեսոր Շի Խնամը նշում է, «Կարևոր է, որպեսզի ՄԳՍԱՀ մասնակից երկրներն ըմբռնեն, որ նրանք պետք է անմիջական

մասնակցություն ունենան և Չինաստանի հետ համատեղ համակարգեն ՄԳԱՀ նախաձեռնությունը» [8, p. 208]: Չին վերլուծաբան Սուե Լին, իր երթին, շարունակելով վերոհիշյալ փաստարկը, գրում է, որ Չինաստանն իրականում ի վիճակի չէ միայնակ նախազգել և իրազրծել ՄԳԱՀ մասնակից բոլոր երկրների ենթակառուցվածքների և տնտեսության արդիականացման գործընթացները: Չինաստանն իր ուժից ներածին շափով պատրաստ է համագործակցել, բայց ՄԳԱՀ մասնակից երկրներն իրենք պետք է նախաձեռնող լինեն և ներկայացնեն հնարավոր ծրագրերը [9, p. 244]: Ուստի, չինական կողմը պատրաստ է ՄԳԱՀ շրջանակներում քննարկել գործնկեր երկրներից ներկայացված բիզնես-նախաձեռնություններն ու ֆինանսավորել, եթե դիմո՞ր կողմը չինացիներին ապացուի, որ ֆինանսական ներքրությունների կամ չինական տեխնիկայի և տեխնոլոգիաների տեսրով ստացված փարկային գծերի արդյունքում Չինաստանը կոնկրետ շահույթ կստանա:

Այսուամենայնիվ, ՄԳԱՀ շրջանակներում Չինաստանը պատրաստակամություն է հայտնում նաև «չհատուցված» օճանդակություն տրամադրել այս երկրներին, որուր ի վիճակի չեն ինքնուրույն, լուրջ, գործնական նախաձեռնություններով համեստ գալ:

Չինաստանի նախագահ Սի Շինֆինը ՄԳԱՀ համաժողովի բացման արարողության ժամանակ նշել է, «Գալիք երեք տարիների ընթացքում Չինաստանը զարգացն երկրներին և միջազգային կազմակերպություններին որպես օգնություն

շրջանավայր՝ մեր գոտի, մեր ճշնակացն՝ և անսահման ուժական մասնակիության կենամակարդարկը: Մենք 2 մլրդ ռենմինթի շափով սննդի օգնություն կտրամադրենք զարգացող երկրներին և 1 մլրդ կիաուկացներ Հարավ-Հարավ համագործակցության օճանդակության հիմնադրամին: Չինաստանը կսկսի նաև «100 ուրախ ոտուն», «Ազրատության հաղթահարման 100» և «Առողջապահության և վերականգնման 100» ծրագրերը ՄԳԱՀ մասնակից երկրներում: Չինաստանը աղքատության դեմ պայքարող կազմակերպություններին կտրամադրի 1 մլրդ ռենմինթի, որպեսզի երանք իրազրծեն համագործակցային ծրագրեր, որոնք կարող են օգտագույնել ՄԳԱՀ մասնակից երկրներին»<sup>10</sup>:

Ի լրում վերոհիշյալ, Չինաստանը ոչ հզոր երկրներին ժամանակ առ ժամանակ տրամադրում է նաև արտադրությունից հանգած, ներքին և արտաքին շուկայում մեծ պահանջարկ չունեցող տեխնիկական շտապ օգնության մերենաներ, ավտորուսներ և այլն: Այս քայլով Պեկինը երկու նպատակ է հետապնդում:

1. Տվյալ երկրներ ուղարկել մեփական արտադրության տեխնիկական հետազայտում որանց պահեստամակեր մատակարարելու նպատակով:
2. Օգնություն տրամադրելու հանգամանքն օպտագործելու որպես փափով ուժի գործադրման միջոց՝ տվյալ

<sup>10</sup> 1 դրամը հավասար է մոտ 6.5 ռենմինթի: Օգտագործվում է նաև յուան անգամում:

<sup>11</sup> Full Text of President Xi's Speech at Opening of Belt and Road Forum, Xinhua 2017, [http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c\\_136282982.htm](http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c_136282982.htm)

Երկրներում ամրապնդերով սեփական հեղինակություն՝ որպես պատասխանառու ուժ:

Այսպիսակ Զինաստանը ստեղծում է Արևմուտքից անկախ, Ներկայության տնտեսական ցանց, որտեղ սպառում է սեփական արտադրյանը, ներդրումների և վարկերի տրամադրման միջոցով ստեղծում է բարարար պայմաններ՝ սեփական քաղաքական և տնտեսական նկրտում՝ առանձին ազգեցրյան գոտի դառնալու քաղաքականությունը, իրագործելող համար: Անկինը հնարավորություն է ստանում նաև տվյալ երկրում շրջանառության մեջ դնել սեփական արժույթը, որն ամրագրված է ԱՍՀ-ում որպես միջազգային պահուստային ակտիվ:

Այս գոտում հայտնված երկրները սեփական կամքով կամ Արևմուտքի թեկադրանքով ի վիճակի չեն լինի հրաժարվել Զինաստանի հետ համագործակցությունից:

Ամերիկահայ գործարար, բիզնես-ուզամավարություններ մշակող Ձեռն Փրիջանը նշում է. «Քանի որ Զինաստանը ֆինանսավորում է մեծ և կարեղոր տարբեր ենթակառուցիածքային ծրագրեր, այն վերածվում է շատ երկրների հովանավորի: Այս նոր կարգավիճակը տնտեսական և բիզնես-հերթական միջոցներում է ընձեռում շինական ընկերություններին» [62]:

Հարց է առաջանում, իսկ ի՞նչ կշահեն զարգացող և զարգացած երկրներ Զինաստանի նախաձեռնությանը միանալու դեպքում: Մասնակցելով շինական նախաձեռնությանը

Շինաստանը մենք գույք, ՄԵԿ ՃԱՆ, ԱՊՐԱՐԴ, ՆԱԽԱՅԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՐ ՀԱՅԱՍՏԱՆ և ներդրումներ ստանալով՝ այս երկրները կարողանան վերականգնել համաշխարհային տնտեսական զգնածամի պատճառով թուլացած տնտեսությունը, որի արդյունքում կամրապնելն սեփական երկրների անվտանգությունն ու պետականությունը: Նրանք տնտեսական բազմաթիվ օրականություններով կապավորեն աշխարհի երկրորդ տնտեսության հետ, կառանան վերջինիս ստեղծած ժամանակակից տեխնոլոգիաները: Այս երկրները, որոնք հաջողությամբ կրաքրութեն նախատեսված ծրագրերը, կատանան տնտեսական զգալի օգուտներ: Ճիշտ է՝ ՄԳՎԱ և նախաձեռնությունն որոշակիորեն կմեծացնի Զինաստանի ազգեցրյանն այս երկրներում, բայց նրանք եւ հնարավորություն կատանան իրենց ձայնը լույս դրանել Պեկինում [10, c. 69]:

Իսկ ի՞նչ կլորցնեն այս մասնակից երկրները<sup>12</sup>, որոնք հաջողություն չեն գրանցի ՄԳՎԱ և նախաձեռնության շրջանակներում իրագործվող ծրագրերում: Այս երկրները, որոնք կվանտնեն ստացված վարկերն ու ներդրումները, ստիպված կլինեն միջազգային կառույցներում որոշ դեպքերում բվեար-

<sup>12</sup> Միջազգային առաջարկում մշտական օվկտոբրյան խնորդացի կոնկրետ և գործադրության առողջ վերաբերյալ օրինակ ցուցաբեր Հունաստանը: Զինաստանի ուղակալարության հրավերում ՄԱՆՀ համաժողովին մասնակցելու համաստանի ներկայացուցանքը նշում է Համաստանի վերակառությունը և Միջերկրական ծովում գտնվող հովանական առվագահանությունը մերք, որի շնորհիկ մուտքագրությունը Համաստանը Հինաստանի վերապայի կաշուրքի մուտքագրությունը Համաստանը մեջը: Այսինքն ոչ թէ Հինաստանը և հովանական առվագահանությունը աշխատող հովանական առվագահանությունը, այդ հովանական և համարդիք հովանական մշտական գումար կրեմի թէ հովանական բարեկարգությունը և հովանական գումարը կրեմի թէ հովանական բարեկարգությունը:

կել Պեկինի հրահանգներով կամ ռազմաբազաներ, ռազմապարական նշանակության հանքեր տրամադրել վերջինիս:

Ճգնաժամային իրավիճակների դեպքում չինական գինված ուժերը կարող են օգտագործել տվյալ երկրների օրանակայանները, նավահանգիստները և այլն [7, p. 22]:

Ինչպիսի, վերոհիշյալ նպատակներն իրազրծելու համար Չինաստանը կարիք կունենա ամրապնդել սեփական անվտանգությունը:

### 1.3 «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության գիտական մեջ Չինաստանի ազգային անվտանգության տեսանկյունից

#### 1.3.1 Սույն հետազոտության արդյունքում հայտնաբերված՝ Չինաստանի անվտանգությանը սպառնացող յոթ հիմնական գործոն

Հաշվի առնելով Չինաստանի դեմ ԱՄՆ ծրագրած զավման և ձևավանդները՝ այդ երկիրը կկարողանա դիմակայի։ ԱՄՆ-ին միայն այն պարագայում, եթե իր շրջակայրում կայուն և տնտեսապես զարգացած անվտանգության գոտիներ առեղջի, որոնք Վաշինգտոնը չի կարող վերահսկել։ Այսինքն՝ իր շրջակայրում ստեղծելով անվտանգության գոտի, Չինաստանը կապահովի տնտեսության կայուն աճն ու կամրապնդի սեփական անվտանգությունը։ Տեսն այս հանգամանքից է կամված նաև Չինաստանում Կոմունիստական կուսակցության գլխավոր իշխանություն «լինել-չինելու» հարցը։

Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը եղ համարակալի

Որո՞նք են այն հիմնական գործոնները, որոնք կարող են վտանգել Չինաստանի քաղաքաւութեական անվտանգությունը։

1. 2011թ. ԱՄՆ հայտարարած շրջադարձը դեպի Ասիա-խաղաղօվկիանոսյան<sup>13</sup> տարածաշրջան [12], որի հիմնական նպատակն է զարգել Չինաստանը և այդուղև ապահովել ուժերի հավասարակշուրությունը, բոլոյլ չտալ որ այն գերիշխող դիրք ձեռք բերի համաշխարհային տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող այս առանձըում։
2. Չինաստանի տնտեսական երկրորդ գործելեր Միացյալ Նահանգների նախագահ Դոնալդ Թրամփի առաջ բաշած՝ տնտեսությունում հովանավորության (պրոտեկցիոնիզմի) ամրապնդման գաղափարախոսությունը [13, p. 45] վտանգում է ԱՄՆ շուկայում չինական կազմակերպությունների դիրքերը, որի հետաքրքրեն անմիջականորեն իրենց ազդեցությունը կթողնեն չինական տնտեսության վրա<sup>14</sup>։ Ուստի, Չինաստանի անհրաժեշտ է գտնել նոր շուկաներ, որոնք հետազայում կկարողանան փոխարինել ամերիկանին։

<sup>13</sup> 2017թ. այս անվանումը փոխարինվել Ցինկա-խաղաղօվկիանոսյան, որպեսի թուղթին առ Հնդկականության իրեւ [11, p. 47].

<sup>14</sup> 2016թ. Չինաստան-ԱՄՆ առևտուց կազմեն է \$578.2 մլրդ, որից \$115.6 մլրդ-ն Չինաստանի ենթարկա արտաքինքն ծավալն է, իսկ \$462.6 մլրդ-ն Չինաստանի ԱՄՆ արտաքինքն թիվն է ԱՄՆ պավագրող Չինաստանի հետ առևտուց կազմել է \$347.0 մլրդ։ Office of the United States Trade Representative, The People's Republic of China, <https://ustr.gov/countries-regions/china-mongolia-taiwan/peoples-republic-china>

3. Ժամանակ առ ժամանակ շին-ամերիկյան հարաբերությունները սրվում են նաև Հարավշինական ծովում [14], որի Մալակայի նեղուցով է Չինաստանը ներկրում սեփական տնտեսության համար առանցքային նշանակություն ունեցող չմշակված նավի մոտ 80%-ը [15, p. 12]: Սպառնալիք կա, որ Չինաստան-ԱՄՆ հետավոր բախման դեպքում ԱՄՆ ռազմածովային ուժերը շրջափակման կենտրոնին վերոհիշյալ նեղուցը, ինչն անդառնայի հարգած կիասցին շինական տնտեսությանը:
4. Չինական քաղաքները թիրախավորում են Չինաստանի քաղաքացի խալամադագավան ահարեկիչները, ովքեր ուղղորդվում կամ ներշնչվում են սահմանակից կամ Մերձավոր Արևելքի խալամական երկրներում առկա մոլեսանց կրոնական զարաֆարներով [16, p. 235]: Մերձավոր Արևելքում Չինաստանի հասուլիք պատվիրակ Վո Շիլը նշում է, որ վերջին տարիներին ահարեկական հարձակումների պատճառով Չինաստանը զգալի կորուստներ է կրում: Իրաքի և Միջիայի ահարեկիչներին են միանում նաև Չինաստանի Միջերկան-Ույղուրական ինքնազար շրջանի ուղրու բնակիչները, ինչը սպառնալիք է ստեղծում Չինաստանի անվտանգության համար: Չինաստանն ու աշխարհը մեծապես կշահեն, եթե լուծվեն Իրաքի և Միջիայի հիմնախնդիրները<sup>15</sup>:

<sup>15</sup> Bai Tiantian, China at Risk from Syria Spillover, Global Times, 2014, <http://www.globaltimes.cn/content/873090.shtml>

5. Չինաստանը միջարդների հասնող ներդրումներ է կատարում շատ երկրներում, որոնց մի մասում անկայուն իրավիճակ է և ահարեկական հարձակումները վտանգում են այդ երկրներում [17] գումարով չինացիներին [7, p. 16] ու չինական ներդրումները<sup>16</sup>:
6. Կորեական միջուկային հիմնահարցի շուրջ տիրող անօրոշ իրավիճակը ևս լուրջ մարտահրավեր է թե՝ Չինաստանի, թե՝ ամբողջ Արևելյան Ասիայի համար, քանի որ միջուկային պատերազմի վտանգը սպառնում է հօդուղիեցել այս տարածաշրջակի տնտեսական և անվտանգային համակարգերը: Կժշշչ միջուկային գինանցը նկատի ունենալով՝ ԱՄՆ-ը և Ճապոնիան մեծանում են իրենց զորամահավորումների և ռազմական տեխնիկայի քանակը Չինաստանի արևելյան սահմանների մոտ՝ անմիջական սպառնալիք ստեղծելով նաև Պեկինի համար [18, pp. 39-56]: Վերօհիշյալ հանգամանքները ևս բացասաբար են անդրադարձում Արևելյան Ասիայում ՄԳԱՀ արագ զարգացման ընթացքի վրա:
7. Տարածքային վեճերը և տարածաշրջանային գերիշխանության համար պայքարը Ճապոնիայի և Հնդկաստանի դևմ նույնպես սպառնում են Չինաստանի անվտանգությանը: Չին-Ճապոնական, չին-հնդկական հարաբերությունների լարվածության պատճառով երբեմ ստեղծվել են համաշխատ պատճենական հարաբերությունները:

<sup>16</sup> James M. Dorsey, Chinese Extradition Request Puts Crackdown on Uyghurs in the Spotlight, Modern Diplomacy, 2018, <http://moderndiplomacy.eu/2018/02/13/chinese-extradition-request-puts-crackdown-uyghurs-spotlight/>

փում է պայքունավոտանգ իրավիճակ. ինչպես տեղի ունեցավ 2017թ., երբ չին և հնդիկ զինվորականներն անգամ ձեռնամարտի բռնվեցին Լադյախում և Դոկլամում, և միայն ռազմական դիվանագիտության միջոցով հաջողվեց լիցքարափել իրավիճակը<sup>17</sup>. Ճապոնիան իր հերթին Չինաստանի աճող ազդեցությունը զայելու և սեփական դիրքերը ամրապնդելու համար սկսել է վերականգնել ռազմական կարողություններն ու \$110 մլրդ-ի հասնող հիմնադրամ է ստեղծել, որը պատրաստ է ֆինանսավորում տրամադրել Հարավային և Հարավարևելյան Ասիայում ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի համար [7, pp. 19-20]:

ԱՄՆ Պաշտպանական ազգային համարարանի վերլուծարան Զոել Կութսոուն նշում է. «Մի կողմից՝ շրջանառում է այս միտքը, որ տնտեսական աճն ու կապերի ամրապնդումը կնպաստեն Չինաստանի սահմանամերձ նահանգների կայունացմանը, եներգակիրների մատակարարման անվտանգությանը և կօգնեն Չինաստանին՝ մեծացնելու սեփական ռազմավարական ազդեցությունը: Այսու կողմից՝ Չինաստանը կառերևափ տարրեր մարտահրավերների հետ՝ սկսած սահմանշրջությունից մինչև ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Հնդկաստանի հետ ռազմավարական մրցակցությունը: Այս մարտահրավերներին դիմակայելու համար Պեկինից կպահանջվի

<sup>17</sup>China Asks India to Withdraw Troops from Doklam, CGTN, 2017, [https://news.cgtn.com/news/3d556a4e:355944e/share\\_p.html](https://news.cgtn.com/news/3d556a4e:355944e/share_p.html)

ՀԻՆԱՍՏԱՆԻ «ՄԵԿ ԳՈՅՔ, ՄԵԿ ՃԱՌԱՊԱՐՀ» ՆԱԽԱՇԵՇՈՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ մանրակրիստ մշակված դիվանագիտություն, ոյսկերը կանունական և գեահատելու կարողություն» [7, p. 3]:

Դունալի Թրամփի իշխանության գալուց հետո ԱՄՆ-ը արդին բացահայտ մարտահրավեր նետեց Չինաստանին, երբ 2017թ. դեկտեմբերին հանրությանը ներկայացված «ԱՄՆ Ազգային անվտանգության ռազմավարությունում» սեփական անվտանգությունը վտանգոր մարտահրավերների մեջ զիհանգական ահարգեկիշների, հրանի, Կծժ-ի, Ռուսաստանի հետ միասին հիշատակեց նաև Չինաստանը [19, p. 25]:

Փաստաբերություն նշվում է, որ Չինաստանը փորձում է փոխարինել ԱՄՆ-ին Հնդկա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, ընդլայնել պետության կողմից դեկավարվող սեփական տնտեսության հասանելիությունը և վերակարգավորել տարածաշրջանն ըստ իր հայեցողության [19, p. 25]: Այս նախադասության տողատակերում կարելի է կարծիք կազմել, որ ԱՄՆ-ը թեև ուղղակիորեն չի նշել ՄԳՎԱՀ-ն, բայց հենց դա է նկատի ունեցել, քանի որ տվյալ տարածաշրջանում Չինաստանը վերիիշյալ նախաձեռնության միջոցով է փորձում պրոյեկտել տարածաշրջանային զարգացումները:

Չինական նախաձեռնությունը հարվածում է նաև 2011թ. սեպտեմբերին ԱՄՆ առաջ բաշած «Մետարքի ճանապարհին» [20, p. 191], որը նախատեսված ունի ԱՄՆ-ի կողմից վերահսկվող քաղաքատնտեսական կայակ ստեղծել Ավելաստանի, Կենտրոնական և Հարավային Ասիայի երկների միջն, որից հետո այս գործակցության ձևաչափը պետք է ձգվեր դեպի Մերձավոր Արևելք [17]:

Չինաստանը որպես ազգային անվտանգությանը սպառնացող մարտահրավիք դիտարկելով՝ Վաշինգտոնում փորձելու են, համագործակցելով Չինաստանի տարածաշրջանային երկու հիմնական մրցակիցների՝ Հնդկաստանի և Ճապոնիայի հետ, խոշնորուել վերջինիս ազդեցության գործոնի՝ ՄԳՄԸ առաջիշտաղացմանը:

### 1.3.2 «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» որպես Չինաստանի անվտանգության հիմնախնդիրների լուծման գործիք

Իսկ ինչպէ՞ս է Չինաստանը պատրաստվում օգտագործել ՄԳՄԸ-ն սեփական տնտեսության զարգացման կայունությունն ու անվտանգությունն ամրապնդելու գործում։

1. Զարգացնելով ՄԳՄԸ նախաձեռնության ցամաքային թևը՝ ԱՃՏԳ-ն, Չինաստանը հյուսում է համաշխարհային երկարուղային, ավտոճանապարհային, զարանավարմուղային սարդուստայներ, որոնց միջոցով Պեկինը նպատակ ունի այլրեստրանքային ցամաքային ճանապարհներ ստեղծել, եթե հարեանների՝ Վիետնամի, Ճնշկաստանի, Ճապոնիայի, Ֆիլիպինների հետ ունեցած տարածքային վեճերի պատճառով, որոնք երակրում են նաև ԱՄՆ-ի կողմից, փակվեն Հարավինական և Արևելաշխական ծովերով աշխարհի հետ կապող ուղիները։

2. Չինաստանը փորձում է ՄԳՄԸ նախաձեռնության միջոցով իր ազդեցությունն ունենալ համաշխարհային տնտեսությունը պրոեկտելու գործում, որի միջոցով միշարք երկրների հետ ստեղծում է ֆինանսատեսական

դաշտ, որը կզործի Արևմուտքից անկախ, և Արևմուտք-Չինաստան հեարավոր հակամարտության դեպքում Պեկինը մեկուսացման մեջ չի հայտնվի։

3. Չինաստանը կառուցում է արհեստական, պաշտպանական նշանակություն ունեցող կղզիներ Հարավինական ծովում, որոնց նպատակն է ապահովել չինական նավերի անցուղարձը ՄԳՄԸ-ի ՄԸ հասովածություն։
4. ՄԳՄԸ-ի շնորհիվ Չինաստանը նպատակ ունի նաև բարեկավիկ հյուսիսարևմտյան նահանգների անվտանգությունը։ Կայունացնելով սահմանակից և Սերձավոր Արևելյի իշխամայական երկրների տնտեսական և քաղաքական իրավիճակը՝ Պեկինն ամրապնդում է նաև Չինաստանի անվտանգությունը, քանի որ վերոհիշյալ երկրներում ներքին անկայունության և խճճուրությունների պատճառով առաջացող խլամական ծայրահեղական շարժումներն ու զաղափարները ներթափանցում են նաև Չինաստանի Սինծիան նահանգ, որտեղ ընակչության զգալի մասն խլամայական, բյուրքական ծագում ունեցող ույղուրներն են [30]։ Այս պատճառով էր նաև, որ 2017թ. Ժնևում գործող ՄԱԿ գրասենյակում Չինաստանի նախագահ Սի Շինփինը հայտարարեց սիրիացիների համար ևս 200 մլն ռենմինբիի օգնություն տրամադրելու մասին [31]։

<sup>30</sup> China Builds New Military Facilities on South China Sea Islands: Think Tank, Reuters 2017, <https://www.reuters.com/article/us-southchinasea-china-islands/china-builds-new-military-facilities-on-south-china-sea-islands-think-tank-idUSKBN19L0JF>

5. Չինաստանը մեծացնում է իր դեքը ՄԱԿ խաղաղապահ առարկություններում. եթե ուշադրություն դարձնենք Չինաստանի մասնակցությանը վերոհիշյալ գործողություններին [34, p. 54], ապա կտևենքն, որ դրանք հիմնականում այն տարածաշրջաններում են, որտեղ կատարվում են չինական ներդրումներ: ՄԳՄՃ նախաձեռնության շրջանակներում Չինաստանը ձգտելու է նաև մեծացնել ռազմատեխնիկական, ռազմաբաղադրական համագործակցությունը մասնակից երկրների հետ, որն առաջին հերթին նշանակում է տվյալ երկրների և Չինաստանի ռազմական գերատեսչությունների միջև կապերի ամրապնդում, համատեղ ռազմադրույնաբերական կենտրոնների ստեղծում, տվյալ երկրներում ռազմական բազաների կամ դրանց նմանատիպ կառույցների ձևորդերում, չինական արտադրության սպառագինությունների արտահանման ծավալների ավելացում: Այս քայլերով Չինաստանը կփորձի ապահովել սեփական ներդրումների ապահովությունը ՄԳՄՃ մասնակից երկրներում:
6. Չինաստանն ակտիվացնում է մասնակցությունը համաշխարհային նշանակության հիմնահարցերի լուծման գործում, որպեսզի մեծացնի իր դեքը ու կշիռ աշխարհում, իսկ երեւն էլ խառնակած լինելով այս հարցերում մյուս երկրներից զիջումներ կորզելու համար դրանք առնադրի առարկա է դարձնում և օգտագործում սեփական շահերը սպասարկելու համար: Օրինակ՝ Չինաս-

տանն ակտիվ դերակատարում ունեցավ իրանական միջուկային հիմնախնդրի շուրջ բանակցություններում և «Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրի» կերպով հիմնական բանակցողներից էր: Չինաստանն ակտիվություն է ցուցաբերում նաև Կորեական միջուկային հիմնախնդրի խաղաղ հանգուցարուժման գործում և Կորեական թերակղզու առաջնորդում է ոչ պատերազմին, ոչ անկայունությանը, ոչ միջուկային գեներին սկզբունքներով [43, p. 44]:

7. Ճապոնիայի և Հնդկաստանի հետ խորացնելով տնտեսական հարաբերությունները՝ Չինաստանը փորձում է «կապել» այս երկրների տնտեսություններն իր հետ այնպես, որ նրանք հետզհետև բոլովացնեն իրենց ընդգծված հակաշինական դիրքորոշումը: Այս գործում էլ Չինաստանը փորձում է ճապոնիային և Հնդկաստանին շահագրգիռ որպեսզի ընդգրկվեն ՄԳՄՃ նախաձեռնություններում: Օրինակ՝ Չինաստանը Հնդկաստանին փաստարկում է ՄՃՏԳ Բանզարիշ-Չինաստան-Հնդկաստան Մյանմար տնտեսական միջանցրում համագործակցության անհրաժեշտությունը [42, p. 35], ինչը երկու կողմերին հետարարություն կտա օգուտ քաղել և մեղմել տարածայնությունները: Այսպիսով, կարելի է փաստել, որ Չինաստանը փորձում է ՄԳՄՃ-ի օգտագործել նաև տարածքային և տարածաշրջանային վեճերը մեղմելու գործում:

8. Զինաստանը խորացնում է ռազմաբաղարձական համագործակցությունը Ռուսաստանի հետ, որի շնորհիվ փորձում է պայմանվել ուժերի հավասարակշռությունը ԱՄՆ-ի հետ Հարավային, Հարավարևելյան և Կենտրոնական Ասիայում: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև այն հանգամանքը, որ Ռուսաստանն ու Զինաստանը պայմանավորվածություն են ձեռք բերել ԵԱՏՄ-ն ՄԳՄ-ին համակցելու շրջք: Նրանք սերտորեն են համագործակցում են նաև ՍԱԿ Ան-ում, Շահնայի համագործակցության կազմակերպությունում (ՇՀԿ) և ԲՈՀՀ<sup>19</sup> շրջանակներում, որտեղ փորձում են հանդես գալ միասնական ուժերով և պաշտպանել միմյանց շահերը:

Որոշ հետազոտողներ փորձում են ՄԳՄ-ն եերկայացնել նաև որպես Զինաստանի «Մարշալի պլան» [44, p. 17], որի միջոցով վերջինս փորձում է ռազմաբաղարձական, տնտեսական առավելություն ստանալ աշխարհում: Զինաստանի արտաքին գործերի նախարար Վահ Ցին կորականապես հերթում է տվյալ միտքը: Խոսելով տարբերությունների մասին՝ նա նշել է, որ ՄԳՄ զարգաֆարն ավելի հին է, քան «Մարշալի պլանին»: Որովհետև կրում է «Մետարխի ճանապարհի»

<sup>19</sup>ԲՈՀՀ անդամ երկրներ են Բրազիլիան, Ռուսաստանը, Անգլիանաևանք, Ֆրանսիան ու ՀԱՀ-ը, իսկուհի է BRICS անդամների հասունացումը: Տե՛ս Միեր Մահակյան, «Ո՞ւ է տառմայ Զինաստանի, Ռուսաստանի, Հայկաստանի, Բրազիլիայի և ՀԱՀ կառուցած ձևադրիքը», 2015, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=13854](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13854)

շրաբնաւորությունը, ուստի ուղարկությունը եւ շաբաթական 2000-ամյա ողին: Իսկ ավելի երիտասարդ է, քանի որ ՄԳՄ-ն առաջացել է համաշխարհայնացման ժամանակաշրջանում: Այն ընդգրկուն համագործակցության արյունը է, ոչ թե աշխարհաբաղարձականության, ուստի չպետք է դիմարկվի Մարտ պատերազմի հետագած մտածելսկերպով [45]:

Թեև, ըստ իս, ՄԳՄ-ն ամբողջովին «Մարշալի պլանի» կոկտերինակը չէ, քանի որ երկու հակադիր բնետերի միջև զաղախարձակն պայքարի հետևանք չէ, ինչպատճեն առկա էր ԽԱՀՄ-ի և ԱՄՆ-ի միջև, բայց, մյուս կողմից, համամիտ չեմ Զինաստանի արտաքին գործերի նախարարի այն փաստարկի հետ, որ ՄԳՄ-ն աշխարհաբաղարձական ընույթ չի կրում, թանձնությունում հենց այս նախաձեռնության շնորհիվ Զինաստանը փորձում է առաջնահերթ իր ազդեցությունը տարածել Կենտրոնական, Հարավային և Հարավարելյան Ասիայում, որպեսզի իր շուրջը ստեղծերլ կայուն իրավիճակ՝ նպաստի սեփական անվտանգային ուժաւորությունը մեծացնանք, իսկ հետո, եթե ՄԳՄ-ի հետ կապված նպատակներն իրավանանք՝ իր ազդեցությունը տարածի նաև Մերձավոր Արևելքում, Արևելյան Եվրոպայում և այլ տարածաշրջաններում:

Համեմայնդեպս, պետք է նաև նշել, որ չինացիները, թեև մի կողմից ՄԳՄ-ի միջոցով ակտիվ և նախաձեռնող քաղաքականություն են վարում, բայց մյուս կողմից սրանի գիտակցում են, որ դեռևս չունեն ռազմական և տնտեսական այն հզարությունը, որ բացահայտ մարտահարվելու նետեն ԱՄՆ-ին ու նրա դաշնակիցներին: Այս փաստարկի վառ ապացույցը

կարելի է գտնել նաև Շինաստանի Հասարակական գյուղությունների ակադեմիայի միջազգային հարաբերությունների ուսումնասիրությունների ինստիտուտի դեկանը Զան Յունիքի արտահայտած հետևյալ մորում. «Թեև Շինաստանն աստիճանաբար հզրանում է, բայց ԱՄՆ գերիշխող դիրքերը դեռևս սասանված չեն: Շինաստանը չունի գերակա տնտեսական ուժ, ինչպիսին ուներ (տարածաշրջանում) մինչև նոր ժամանակաշրջանը, և չի կարող ապահովել իր հարևանների անվտանգությունը: Մասնակցելով տարածաշրջանային հարաբերություններին՝ Շինաստանը պետք է զարգացնի իր դիվանագիտության իջանները» [11, թ. 15]:

Իրենց հերթին, չին հետազոտողներ Լյու Ֆընը, Լի Սինը, Լի Շուանչուանը, Ծիան Չիսիանը, Զան Շիեփինն ու Յան Յունը գրում են, որ Շինաստանի ներկայիս արդյունաբերական արտադրության կառուցվածքը մեծապես տարրերվում է ոյորուի առաջատարներից՝ ԱՄՆ-ից և Ճապոնիայից: Եթե նոյնինք Շինաստանը շարունակի տնտեսական զարգացման ներկա տեսակերպ՝ կպահանջնի մի քանի տասնամյակ, որպեսզի հասնի նրանց: Այնուամենայնիվ, Շինաստանի ներկա հզրությունները թույլ են տալիս նրան համախմբել միուս զարգացող երկրներին և համատեղ իրագործել ՄԳԱՀ-ն [20, թ. 193]:

Ուստի, իրագործելով ՄԳԱՀ-ն՝ Պեկինը փորձելու է տնտեսական և քաղաքական անքանչեկի կապեր ստեղծել սեփական նախաձեռնությանը մասնակցող երկրների հետ՝ հետազոյում ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների կողմից շրջա-

ռահմասուր՝ «Մեկ գօտ, Մեկ ձևսպամբ» ՆԱԽԱՇԵՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ Եր ՀԱՅԱՍՏԱՆ Փակման մեջ չխայտնվելու համար, և որպեսզի կարողանալ լուծել իր առջև դրված խնդիրները:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ ՄԳԱՀ նպատակների իր իրագործումն անմիջականորեն իր ազդեցությունն է ունենալու Շինաստանի ազգային անվտանգության ապահովման և ազդեցության ոլորտներն ընդլայնելու գործում: Այսինքն, եթե չինացիներին հաջողվի սեփական միջոցները ներդնելով ՄԳԱՀ մասնակից երկրներում՝ ապահովել դրանց զարգացման և կայունացման շեորիկ հավելյալ արժեքների վերաբերք Շինաստան, Հարավչինական ծովը շրջանցող ցամաքային ճանապարհների միջոցով ստեղծել արտահանվող և ներմուծվող ապրանքների անվտանգ այլընտրանքային ուղիներ, ՄԳԱՀ-ի միջոցով և վագեցնել ԱՄՆ ազդեցությունը Հարավարեւյան, Արևելյան և Կենտրոնական Ասիայում ու խոյս տալ կոստիսից՝ «Մետաքսի ճանապարհ», իսկ հարավից՝ Հնդկա-խաղաղօվկիանոսյան կոչվող ԱՄՆ զավման մեխանիզմներից: Շահնայի համագործակցության կազմակերպության միջոցով կայունացնել Կենտրոնական Ասիան և սեփական Սինծիան նահանգը, բարելավել և կայունացնել հարաբերությունները հետ, ապա ՄԳԱՀ-ի կղամնա Շինաստանի անվտանգության և ազդեցության կարևոր գործիքը:

Այսպիսով, Սի Շինինի ժամանակաշրջանում Շինաստանը զգույշ, բայց ինքնավտուահ, ՄԳԱՀ-ն ունենալով որպես հիմնական գործիք, ակտիվացնում է սեփական արտաքին քաղաքականությունը՝ պաշտպանողականից անցնելով նա-

խաձենողականի, որի շնորհիվ փորձում է իր շուրջը ստեղծել թե՝ անվտանգության գոտի, թե՝ տարածել սեփական ազդեցությունը՝ պահպանելով տնտեսության զարգացման տեմպերը:

1.4 «Քերիմաստավորելով «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» միջազգային հարաբերությունների տեսարժությունների տեսանկյունից  
Միջազգային հարաբերությունների տեսարժություններից ռեալիզմի, լիբերալիզմի, մարքսիզմի, իդեալիզմի, և ուղղերական խնսությունների առաջարկած մեթոդներն օգտագործելով՝ փորձենք վերլուծել ՄԳՄՃ-ն:

#### Ուսակներ և ՄԳՄՃ-ն

Ուսակներ տեսանկյունից Զինաստանի դեկավարները կոնկրետ հաշվարկներ են կատարել, ըստ որոնց, հաշվի առնելով սեփական ազգային շահերը՝ փորձում են ՄԳՄՃ-ի առջև դրված նպատակների իրազործման միջոցով պաշտպանել սեփական տնտեսության առաջընթացը, ամրապնդել անվտանգությունը, տարածել սեփական ռազմաքաղաքական ազդեցությունը։ Ինչպես վերը նշվեց, Զինաստանը ՄԳՄՃ-ն փորձում է օգտագործել քաղաքական և տնտեսական առանձին թերու դաշնակու համար, սա համապատասխանում է ռեալիզմի դպրոցի ներկայացուցիչ Հանս Մորգենթաուի առաջ բաշած իմպերիալիզմի քաղաքականությանը, որը հատուի է այն երկրներին, որոնք փորձում են մեծացնել իրենց ազդեցության գոտիները և փոխել ուժերի հավասարա-

շու, ԱՍՏԱՆԻ «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» ՆԱԽԱՇԵԽԾՈՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

կշուրջունը հօգուտ իրենց [54, с. 70-76]:

Փորձենք վերլուծել ՄԳՄՃ-ն ռեալիզմի դպրոցի 4 հիմնական ուղղություններով [32, թ. 133], որոնք, ըստ ռեալիստների, անհրաժեշտ է դիտարկել միջազգային քաղաքականությունը վերլուծելու համար [52, թ. 150].

#### 1. Խնդրային

Զինաստանը փորձում է ստանայ մոտ երկրների համերաշխությունը ՄԳՄՃ-ի վերաբերյալ և դրա միջոցով ստեղծել սեփական համախումբը, որտեղ թե՝ կհամագործակցի, թե՝ խմբի մոտ անդամների հետ միասնական ձականով պայքարի դրու կզա մրցակից խմբերի դեմ։

#### 2. Եսասիրություն

Զինաստանի դեկավարությունը փորձում է ցույց տալ որ Պեկինը ՄԳՄՃ շրջանակներում գործում է մեկը բոլորի, բոլորը մեկի համար սկզբունքով։ ՄԳՄՃ-ն քննութագրելու համար Պեկինը շրջանառության մեջ է դրել «Համընդհանուր ճակատագրի համայնք» և «Ըստիանոր շահերի համայնք» բնորոշումները, որտեղ խոսվում է աղքատ և հարուստ երկրների հավասարության մասին, ինչը հակասում է վերոհիշյալ Եսասիրության տեսությանը։

#### 3. Քառու

Զինաստանը փորձում է նպաստել պատերազմի և քառոսի մեջ գտնվող տարածաշրջանների կայունացմանը, քանի որ դրանք կարող են իրական սպառնալիք դառնալ ՄԳՄՃ հաջող իրականացման համար և սահմանափա-

կում են Չինաստանի մաներելու հետափորությունները: Օրիենտ՝ Պեկինը ներդրումներ է կատարում Պակաստանի Բաղուջատան և ահանգում, որտեղ քառային իրավիճակ է տիրում, քանի որ տեղի իշխանությունները չեն կարողանում վերահսկել իրավիճակը: Սեփական ներդրումների անվտանգությունն ապահովելու և նահանգում կարգուկանոնի հաստատմանը նպաստելու համար Չինաստանը փորձում է միջնորդի դեր խաղալ բայուց անջատողականների և Պակաստանի միջն, որպեսզի կարգավորում մտցին այս տարածքում<sup>20</sup>:

#### 4. Ուժի իշխանություն

Այս ուղղության հիմնական միտքն այն է, որ քառային իրավիճակում խմբայնության և եսասիրության համատեղումը միջազգային հարաբերությունները գրանում է մեծ մասամբ ուժի դիրքերից վարդող և անվտանգության ուղղված քաղաքանություն [53, p. 133]: Հստ ուալիզմի ուղղության, թե՝ խմբայնությունը, թե՝ եսասիրությունը վերաբերում են և՝ ներքին, և՝ արտաքին քաղաքականությանը [53, p. 134]:

Չինաստանի ներկային արտաքին քաղաքականության կարևոր տարրը՝ ՍԳՍԾ-ն, ըստ իս, միայն մասամբ է համապատասխանում ուալիզմի «ուժի իշխանության ուղղությանը»: Չինացիները փորձում են ՍԳՍԾ-ի միջոցով ամրապնդել սեփական անվտանգությունը, տարա-

ծել ազդեցությունը, բայց և փորձում են քառային իրավիճակներում գերծ մնալ ուժային տարբերակով հարցերը լուծելոց, ավելի շատ օգտագործում են դիվանագիտությունն ու փափուկ ուժի քաղաքականությունը: Համեմատնեապս, եթե հաշվի առնենք այս հանգամանքը, որ ուժի քաղաքականության հիմնական բաղկացուցիչը քանակն է, ապա Չինաստանը շարունակում է հզրացնել սեփական ուազմական հզրությունները և ներկայում ԱՄՆ-ից հետո աշխարհում քանակաշինության վրա գումար ծախտող երկրորդ երկիրն է:

Սակայն սա էլ պատճառ է դառնում, որ միջազգային հանրության որոշ անդամներ ուսալիզմի դպրոցի առաջ քաշած «Անվտանգության երկնտրակի տևության» մտավախություն ունենան [53, p. 142], քանի որ, չնայած Չինաստանը հայտարարում է, թե հզրանալու ղեպում չի ձգտելու գերիշխանության կամ ազգեցության գոտիները զավթելուն [31], բայց նրա ուզմական և տևեսական աձոն ուժը ստիպում է, որ տարածաշրջանի երկրները սպառնալիք զգան նրանից և նոյնպես մտածեն զինվելու մասին:

Համեմատնեապս, Չինաստանի դեկավարների ելույթները մերժում են պատերազմի միջոցով սեփական նպատակներին հասնելու անհրաժեշտությունը, ինչպես նաև փորձում են իրենց հետորաքանությամբ մերժել ուսալիզմի տևության մեջ ուրիշների վրա իշխելու [53, p. 135] և Մարդարականի առաջ

<sup>20</sup> China Woos Pakistan Militants to Secure Belt and Road Projects, Financial Times, 2018. <https://www.ft.com/content/063ce350-1099-11e8-8cb6-b9ccc4c4dbbb>

քաշած՝ ուժի միջոցով հարցերը լուծելու գաղափարախոսությունները [54, с. 37-39]:

Դեկինի վարած քաղաքականության մեջ նկատվում էն նաև նեռուայիզմի՝ պաշտպանական ռեալիստների ուղղության տարրեր, այն է՝ Շինաստանը, հզորացնելով իր տևողությունն ու բանակը, ամրապնդում է սեփական անվտանգությունը, միջազգային ասպարեզում ակտիվ քաղաքականություն վարելով և մեծացնելով մասնակցությունը ՄԱԿ խաղաղապահ առաքելություններին՝ մեծացնում է իր ազդեցությունը, բայց միևնույն ժամանակ փորձում է աշխարհին ցուց տալ, որ իր հզորացումը չի պատճենում այլ երկրների անվտանգությանը [53, թ. 139]:

Սեփական անվտանգությունն ԱՄՆ երկու զապաշապիկներից՝ «Մետարսի ճանապարհից» և Հնդկա-խաղաղօվկիանոսյանից ապահովելու նպատակով Շինաստանի առաջ քաշած ՄԳՄԸ նախաձեռնությունը կարելի է մեկնարանել նաև նեռուայիզմի հիմնադիր Թեներ Վալթը «Սպառնայիրի հավասարակշռության տեսությամբ» [53, թ. 138-142]: Զարգացնելով ՄԳՄԸ ցամաքային թևը՝ Շինաստանը հավասարակշռում է ԱՄՆ առաջ քաշած «Մետարսի ճանապարհը», առաջ տանելով ՄԾՃ-ն՝ հավասարակշռում է Հարավչինական ծովում ԱՄՆ-ի և Պահանջնակիցների կողմից եկող վտանգները, որոնք կրում են ռազմական, տնտեսական, աշխարհագրական ներգործության ազրեսիվ սպառնալիքներ: Այստեղ կարելի է եզրակացնել, որ ըստ ռեալիզմի դպրոցի «Գերիշխութ կայունության տեսության», ԱՄՆ-ը փորձում է պահ-

պանել միջազգային հարաբերություններում միակ գերտերության կարգավիճակը՝ փորձելով թույլ չտալ Շինաստանի՝ որպես երկրորդ գերտերության, կայացումը, ինչը կարող է բառու առաջացնել Ներկայի աշխարհակարգում: Այս պատճառով ԱՄՆ-ը Շինաստանի դեմ օգտագործում է նաև նեռուայիզմի «Հարձակողական ռեալիստների տեսությունը» [53, թ. 139], որով փորձում է ապահովել սեփական հզորացումը, թույլացնել Շինաստանը, որպեսզի վերջինս չամրապնդվի այնքան, որ ըստ ռեալիզմի տեսության «Ուժի փոփոխության տեսության»՝ մարտահրավեր նետի ԱՄՆ գերիշխանությունը սասանելու նպատակով:

### Մարքիզը և ՄԳՄԸ-ն

Մարքիզմի տեսության հետևյալ միտքը, ըստ որի՝ միջազգային, համընդիմանուր շահեր հետապնդող քաղաքականություն կարող է առաջանալ միայն այն դեպքում, եթե ի հայտ գա ընդհանուր կանոններով գործող համաշխարհային շուկա, որոշակիորեն համընկանում է ՄԳՄԸ նախաձեռնության փիլիստիկայության հետ: Սակայն ՄԳՄԸ-ն և, ընդհանրապես, արդի Շինաստանի ներքին և արտաքին քաղաքականությունը հակասում են մարքիզմի այն մտքերին, որոնք կոչ են անում ոչխացնել մասնավոր սեփականությունն ու դասակարգերը, պրոլետարական հեղափոխության միջոցով վերջ տալ կապիտալիստական հասարակարգի գերիշխանության աշխարհում [55, թ. 164], վերացնել ոչ միայն սոցիալական տարրերությունները մարդկանց միջն, այլև վերացնել ազգա-

յին պետությունների սահմանները [54, սր. 47-49]: Սին հաստատեց Զինաստանի կողմից ՄԳԱԾ շրջանակներում ՀՆԳԱԾ-ին հավատարիմ մնալը: Զինաստանը հարգում է վյուս երկրների ինքիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը, չի պատրաստվում խառնվել մյուս երկրների ներքին գործերին, կարողում է հավասարությունը և փոխադարձ օգնությունը միջավետական հարաբերություններում, կողմ է երկկողմ հարաբերություններում ազդեսիայի բացառամանը և խաղաղ գոյակցությանը: Այսինքն՝ Զինաստանը փորձում է ցույց տալ, որ չի շարժմելու մարքսիզմի առաջ բաշած ուղիղվ, այն է՝ համաշխարհային պրոլետարական հեղափոխություն չի կազմակերպելու, ինչպես նաև չի արտահանելու կոմունիզմը:

Զինաստանն, ըստ իս, իր հուսորդաբանության մեջ պահպանում է մարքսիզմը որպես պետական գաղափարախոսության կարևոր տարր, քանի որ դրա միջոցով Կոմունիստական կուսակցությունն ապահովում է իր լեզիտիմությունն ու կազմ ԶԺՀ աստղածան ենու, բայց արտաքին քաղաքականության մեջ դատարկ է օգուազործել այն: Այս հիպոթեզի փաստարկը հետևյալն է. Զինաստանի նախագահ Սի Շինփինը, մի կողմից, նշում է, որ Զինաստանի Կոմունիստական կուսակցությունը մարքսիստական կուսակցություն է, մարքսիզմը կոմունիստների էությունն ու համոզմունքն է [3, թ. 68], բայց մյուս կողմից հստակեցնում է, որ մարքսիզմ տեսությունը պետք է թարմացվի, որպեսզի համապատասխանի ներկա իրողություններին [3, թ. 69]:

### Իդեալիզմը և ՄԳԱԾ-ն

Զինաստանի նախագահ Սին իր ելույթներում խոսում է մեծ և փոքր ազգերի հավասարության, բռնլերին օգնելու, քաղաքականության մեջ բարյուական նորմերի պահպանման և օրենքի գերակայության մասին [31], ինչը համապատասխանում է իդեալիզմի տեսությանը [54, թ. 68-70]: Իմ կարծիքով՝ Սիի ելույթներում իդեալիզմին բնորոշ տարրերի առկայությունն ավելի շատ պոպուլյարական բնույթ է կրում, և շինացիները ՄԳԱԾ-ն նախաձեռնել են սեփական շահերն առաջ տանելու և ազդեցության ոլորտներն ընդլայնելու նպատակով: Արդար է նաև այն հակամանը, որ շինացիները փորձում են սեփական շահերը փոխկապակցել մյուս երկրների հետ և հնարավորություն ընձեռնել, որ երանք է օգուտներ քաղեն ՄԳԱԾ-ից, ինչը կնպաստի նախաձեռնության հեղինակության աճին:

### Լիբերալիզմը և ՄԳԱԾ-ն

«Երկարածեկով Սի Շինփինին ելույթները, որոնցում կարևոր վում են տարրեր ազգերի շահակենա համագործակցությունը, գործարար կապերը, առևտուրի ազատականացումը [56], խաղաղության պահպանումը, ուժի միջոցով այլ երկրների ներքին գործերին խառնվելու անբույլարելիությունը, ճանապարհերի կառուցումը, ընդհանուր, միջազգային տեսեսական ստանդարտների, դրամական միավորների ներմուծումը, կարելի է փաստել, որ այս գաղափարները համընկնում են լիբերալիզմի տեսության հիմնադրությներին [54, թ. 39-46]: Հե-

տարրքրական է, որ ՄԱԿ-ում ունեցած ելույթում Սին, խոսելով ՍԳՄՀ-ի մասին, հիշատակեց նաև լիբերալիզմի ներկայացուցիչներից Հերման Շենի հետևյալ միտքը. «Ոչ թե պատերազմ և ոչչացում, այլ խաղաղություն և հաշուություն» [31]:

### Նեոլիբերալ ինստիտուցիոնալիզմը և ՄԳՄՀ-ն

Չինաստանի ներկա արտաքին քաղաքականությունը ներկա է նաև նեոլիբերալ ինստիտուցիոնալիզմի սկզբունքներից, բայց որոնց՝ Պեկինը փոքրուն է ստեղծել միջազգային քաղաքանակական ինստիտուտներ, որոնց միջոցով կմեծացնի փոխկապվածությունը մյուս երկների հետ, արյունուրում՝ կամրապնդի իր անվտանգությունն ու կընդլայնի սեփական ազդեցության գոտիները:

Չինաստանի արտաքին քաղաքականությունը նեոլիբերալ ինստիտուցիոնալիզմի վառ օրինակ էն ԱԵՆԲ հիմնադրումը և ԲՌՀՀՀ-ի, ԲՌՀՀՀ զարգացման նոր բանկի, ՇՀԿ-ի ստուգման գործում որպես համահիմնադիր հանդես զարդարության ակտիվ քաղաքականություն է վարում նաև ՄԱԿ-ում և այդ կազմակերպության պահպանման ու ամրապնդման ջատագովներից է: Պեկինը կազմակերպում է տարբեր միջազգային կառույցների համաժողովներ, որոնցից կարելի է հիշատակել 2017թ. ՀԱԵԱ դեկավարների ոչ պաշտոնական հանդիպումը, «Մեծ քանչակի» հանդիպումը Հանցու քաղաքում, ԲՌՀՀՀ առաջնորդների հանդիպումը Սյամենսիմ, Ասիայում փոխորդակցության և վստահության միջառումների խորհրդաժողովի գագաթաժողովը և այլն [56]:

Հետաքրքիր է ՄԳՄՀ-ն ըստ նեոլիբերալ ինստիտուցիոնալիզմի տեսարյան ինստիտուտ ու է, թե՞ ոչ Կարելի է փաստել, որ ՄԳՄՀ-ն դեռևս ինստիտուտ չէ, բայց նկատվում են նեոլիբերալ ինստիտուցիոնալիզմի դպրոցի ներկայացուցիչների՝ Բարբարա Կորեմենսովի, Զարլ Լիփսոնի և Դունկան Մինդայի առաջ քաշած հինգ սկզբունքներից երկուսը [57, թ. 213]. ընդհանուր խնդիրների կենտրոնացումը և ընդհանուր շահերի ձևագործումը: ՄԳՄՀ-ն ինստիտուտ կոչվելու համար չունի դեռևս հետեւյալ երեք տարրերը. անդամակցության հաստակ ձևաչափ, ինստիտուտի դեկավարման հստակ օրենքներ, վշակված ձևում մեխանիզմներ, որոնց միջոցով կարելի է դիմակայել մարտահրավերներին:

ՄԳՄՀ-ում նկատվում է նաև նեոլիբերալ ինստիտուցիոնալիզմի «Միջավետական ակումբ տեսուրյանք» [57, թ. 211] բնորոշ տարր, ըստ որի՝ Չինաստանը, առևելելով սեփական «ՄԳՄՀ ակումբը», փորձում է փոխել համաշխարհային կարգում առկա ստատուս-ընթացքը՝ այս ակումբից դրույ մնացող երկրներին քողնելով դժվար ըստրության առջև՝ միանալ թե՝ չմիանալ ՄԳՄՀ-ին:

Ըստ իսկ հիմնվելով վերոհիշյալ մեթոդի վրա, կարելի է շահմածայել չին տնտեսագետ Դրն Հայշինի՝ ԵՍ-ը ՄԳՄՀ-ի հետ որպես միջազգային համագործակցության չորրորդ սերնիք մոդել միևնույն սանդրակում դասակարգելու հետ: Այսինքն, եթե ԵՍ-ն ունի միջազգային ինստիտուտին բնորոշ վերահիշյալ հինգ ատրիբուտները, ապա ՄԳՄՀ-ն դեռևս ոչ [22, թ. 232]:

Այսպիսով, ՄԳԱԾ նախաձեռնությունը միջազգային հարաբերությունների տևառությունների տևասելցունից վերլուծերով՝ կարելի է փաստել, որ դրանում հիմնականում առկա են ռեալիզմի, նեռուալիզմի, լիբերալի ինստիտուցիոնալիզմի տարրեր (տե՛ս Աղյուսակ 1): Կարևոր է նշել, որ ՄԳԱԾ-ի հակասության մեջ է մարքսիզմի հետևյալ հիմնական գաղափարների հետ, որոնք են՝ մասնավոր սեփականության և դասակարգերի ոչչացումը, պրոլետարական հեղափոխության միջոցով կապիտալիստական հասարակարգի գերիշխանությանն աշխարհում վերջ տալը և այլն: Հենց այս գարգացումների և միջազգային հարաբերությունների տևառությունների առաջարկած մեթոդների միջոցով կարելի է կառուցել հարաբերությունները Չինաստանի հետ ՄԳԱԾ շրջանակներում:

## Աղյուսակ I

ՄԳԱԾ համապատասխանությունը ն անհամապատասխանությունը ռեալիզմի, նեռուալիզմի, մարքսիզմի, իրերակազմի, նեռլիբերալիստուցիոնալիզմի տեսություններին

Տեսություն-ՄԳԱԾ	Համապատասխանություն	Անհամապատասխանություն
Ռեալիզմ-ՄԳԱԾ	<ol style="list-style-type: none"> <li>Ազգային շահի իրազրծում</li> <li>Ազգեցության տարածում</li> <li>Անվտանգության ամրապնդում</li> <li>Ուժերի հավասարակշուրջյան վավերացում</li> <li>Խմբային ուղղություն</li> <li>Քառսային ուղղություն</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>Եսասիրության ուղղություն</li> <li>Ուժի իշխանության ուղղություն</li> </ol>
Նեռուալիզմ-ՄԳԱԾ	<ol style="list-style-type: none"> <li>Դաշտավանական ռեալիզմի ուղղություն</li> <li>Սպառնալիքի հավասարակշուրջյան տեսություն</li> </ol>	

*Մեկ Սահմանական*

Տեսություն-ՄԳԱՀ	Համապատասխանություն	Անհամապատասխանություն
Մարքսիզմ-ՄԳԱՀ	1.Ըստհանուր կանոններով գործող համաշխարհային շուկա	<ol style="list-style-type: none"> <li>Ոչնչացնել մասնավոր սեփականությունն ու դասակարգերը</li> <li>Դրույտարական հեղափոխության միջոցով վերջ տալ կապիտալիստական հասարակարգի գերիշխանությանը</li> <li>Վերացնել տցիալիկան տարբերությունները</li> <li>Վերացնել ազգային պետությունների սահմանները</li> <li>Վերացնել ազգային պետությունների սահմանները</li> </ol>
Իդեալիզմ-ՄԳԱՀ	1.Օգնություն թույլերին, քաղաքականության մեջ բարդական նորմերի պահպանում և օրների գերակայություն	

*Հրամանական «ՄԵԿ ԳՈՒՅԱ, ՄԵԿ ՀԱՆՐԱՊԵԱՄ» ՆԱԽԱՇԵՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ*

Տեսություն-ՄԳԱՀ	Համապատասխանություն	Անհամապատասխանություն
Լիբերալիզմ-ՄԳԱՀ		<ol style="list-style-type: none"> <li>Ամրապնել տարրեր ազգերի շահավետ համագործակցությունը գործարար կապերի, առևտորի զարգացման միջոցով, ինպարագյան պահպանում</li> <li>Ուժի միջոցով այլ երկրների ներքին գործերին խառնվելու անթույլատրելությունն</li> <li>Ճանապարհների կառուցման կարևորություն, ընդհանուր, միջազգային տնտեսական սահմանադրությունների, դրամական միավորների ներմուծում</li> </ol>
Նեոլիբերալ ինստիտուցիոնալիզմ-ՄԳԱՀ		<ol style="list-style-type: none"> <li>Միջազգային բարարականության ինստիտուտների ստեղծում</li> <li>Ըստհանուր խեղիների կենսորունացում</li> <li>Ըստհանուր շահերի ձևավորում</li> <li>Միջավայրական ակումբի տեսությանը բնորոշ տարր</li> </ol>

գում, ինչ կշահեն Հայաստան ու Չինաստանը. Եթե համացրծակցեն այս ոլորտում:

2016թ. հոկտեմբերի 1-ին Չինաստանին հաջողվեց ռենմիերին ընդունելով ԱԱՀ «Փոխառության հասուն իրավունք» (ՓՀԻ) ունեցող արժույթերի ցուցակով<sup>21</sup>. Հաս իս, այս քայլի հիմնական նպատակներն են՝ նպաստել ռենմիերի դիրքերի ամրապնդմանը, ինչը հնարավորություն կտա Պեկինին սեփական արժույթով վարկեր տրամադրել և լայնածավալ ներդրումներ կատարել ԱԳՍՃ մասնակից երկրներում, միջազգային առևտորում մեծացնել ռենմիերի կատարվող փոխանցումների քանակը, նվազեցնել Չինաստանի կախումը ԱԱՆ դրաբանից:

Հաս Զնի Փրիդշանի. «ԱԱՆ-ը յուրահատուկ գենքի է վերածել սեփական արժույթը: Ներկայումս Վաշինգտոնը հնարավորություն ունի վերասկել դրաբանով կատարվող գրեթե բոլոր փոխանցումները, ինչն ԱԱՆ-ին հնարավորություն է տալիս ճնշում գործադրել մյուս երկրների վրա, որոնք միջազգային փոխանցումներ կատարելիս մեծ մասամբ օգտագործում են ամերիկյան արժույթը: Սա նշանակում է, որ Չինաստանը կարիք ունի այլնուրածքային ֆինանսական համակարգի, որպեսզի բոլորին կատարվի առաջարկանկարները կատարված կամականքին համապատասխան առաջարկանկարները կատարված կամականքին:

<sup>21</sup> 国际货币基金组织。基金组织启用包括中国人民币在内的新的特别提款权货币篮子并确定新的货币量。(ԱԱՀ-ն ներկայացնելու է ՓՀԻ արժույթերի նոր զամբյուրը, որի մեջ ներառված է չինական ռենմիերին). 2016, <http://www.imf.org/zh/News-Articles/2016/09/30/AM16-PR16440-IMF-Launches-New-SDR-Basket-Including-Chinese-Renminbi>

## ԳԼՈՒԽ 2.

### «ՄԵԿ գոտի, ՄԵԿ ճամապարհ» ՆԱԽԱԶԵՐՈՒՆՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԵՍՈՒՐՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՎԵԱՆԿԱՅԻՆ ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՇԱԿԱՐՆԵՐԸ

2.1 «ՄԵԿ գոտի, մեկ ճանապարհում» ներդրումների համար տրամադրվող ֆինանսավարկային հիմնական աղյուրները Չինաստանի արտաքին քաղաքականության հիմնական նպատակներից է արևմտյան ֆինանսատեսական աշխարհի ազգեցությունից անկախ, նոր տեստեսական բների ստեղծումը. ինչը Պեկինին բույլ կտա չենքարկվել մտնեսական շրջափակման՝ Արևմտյան հետ հնարավոր առաջարկատման դեպքում: ԱԳՍՃ-ի հետ կապեր հաստատող երկրներն իրենց հերթին կվարողանան ստանալ չինական վարկեր և ներդրումներ:

Հետագործության այս զիսում ներկայացվում է, թե ինչու ինչպես է Չինաստանը փորձուու իրականացնել առանձին տնտեսական բներ դառնալու նպատակը, ինչ ֆինանսավարկային ռեսուրսներ է կենտրոնացրել Պեկինը ԱԳՍՃ-ի ֆինանսավորելու համար, ինչու ի ինչպես պետք է Հայաստանը փորձի ընդունելով ԱԳՍՃ ֆինանսարանկային համակար-

տարել հնարավորինս թիշ դոլարով կամ առանց դոլարի» [62]:

ՄԳՍԸ շրջանակներում շինական ներդրումները մեծացնում են շինական նախաձեռնության համաշխարհային նշանակությունն այն պատճառով, որ ըստ Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) 2017թ. առանցքային հաշվետվության՝ Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի զարգացող երկրներում տնտեսական աճի պահպանման, կյամայի փոփոխության պատճառով առաջացող ազդեցությունների մեղմացմանն ու փոփոխվող միջավայրին հարմարվելու համար անհրաժեշտ է շուրջ \$1.7 տրլն<sup>22</sup>:

Միջավայրում են շին հետազոտողները՝ ՄԳՍԸ-ն անսախադեակ հետարարակությունը է ընկեռում շինական ռենմինիին, որպեսզի այն կայանա որպես տարածաշրջանային [20, թ. 198], իսկ հետազոտությունը՝ որպես համաշխարհային<sup>23</sup> արժույթ [22, թ. 70]: 2017թ. հունվարի դրությամբ «ռենմինիի արտասահմանյան որակավորված ինստիտուցիոնալ ներդրողի» կարգավիճակ ստուգան 16 պետությունների ինստիտուցիոնալ ներդրողներ, որոնց ընդհանուր չափաբաժննը կազմում է 529.6 մլրդ ռենմինի [23]: 2015թ. հոկտեմբերին Չինաստանը տոեղծել է նաև «Անդրասահմանային, միջքանկային վճարում-

<sup>22</sup> Ասիական զարգացման բանկ. «Ասիայի եերականոցվածքների համար անհամեցու գերազանցում է տարեկան \$1.7 տրլն-ը՝ նախընդունած արդյունքների կրկնային». 2017: <https://www.adb.org/hy/news/asia-infrastrucuture-needs-exceed-17-trillion-year-doubtless-previous-estimates>

<sup>23</sup> Չինաստանի կառավարությունը իր պարագանականությունն է հայտնել նաև ներքանուցվածքներ ֆինանսավորելու համար խթանական պարագանելու տակտիկ տրամադրելու գործում [21, թ. 60]:

Չինաստան «Մեկ Գոտի, Մեկ Ճամապահ» ռահացեղանդեքտունը ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ների համակարգը» (հայտնի է նաև որպես «Չինաստանի միջազգային վճարումների համակարգ» (CIPS): Դրա գործառույթը է ռենմինիի հասանելիության ապահովումն արտասահմանյան բանկերի համար, որի շնորհիվ շինական ֆինանսարաններին համակարգը կարող է նվազեցնել կախվածությունը «Միջքանկային ֆինանսական Հեռահաղորդակցության միջուրյան համակարգի» (SWIFT) [23]: «Չինաստանի միջազգային վճարումների համակարգին» արդեն միացել են 11 արտասահմանյան բանկեր [24, թ. 29]:

Կարևոր նշանակություն ունի նաև Պետության կողմից վերասեկվող «Միլիան» (銀聯- Union Pay) փոխանցումների համակարգը: Այն ՄԳՍԸ մասնակից երկրներին շինական արժույթով միջքանկային և արտասահմանյան փոխանցումներ կատարելու հնարավորություն է ընկեռում [21, թ. 107]:

2016թ. Վերջին շինական 9 քանի 62 մասնաճյուղ բացեց ՄԳՍԸ մասնակից 26 երկրներում [24, թ. 29]:

Եյ-Էս-Բի-Սի (HSBC) բանկի «Ասիական տնտեսության հետազոտության» զեկավար Չու Շնիբընը նշում է, որ առտրային բանկերը կարող են նաև տրամադրել նախագային ֆինանսավորում և գործարքային բանկային ծառայություն, ինչը կնպաստի ներդրումների հոսքին և առների զարգացմանը ՄԳՍԸ-ում [25]:

«Մետարի Ճանապարհ տնտեսական գոտու» և «21-րդ դարի մետարի ծովային ճանապարհի» համատեղ կառուցման տեսլականն ու գործողությունները» փաստաթյուն նշված է, որ Չինաստանը պետք է ընդլայնի ՄԳՍԸ մասնա-

կից երկրների հետ արժույթի փոխանակման ծավալները, ստեղծի և զարգացնի Ասիայի պարտատումների շուկան [6]:

Այսպիսով, վերսիշյալ նապատակներն իրազործելու համար Չինաստանը ստեղծում է ֆինանսական համակարգ, որտեղ առաջնային դիրք են գրանցնում վերջինիս կողմից կամ գործընկերների հետ համատեղ ստեղծված միջազգային ֆինանսական կառույցները, իիմադրամներն ու մի շարք չինական բանկեր: Կարող է նշել, որ Չինաստանի արտաքին պահուստները հասնում են մոտ \$3.6 տրլն-ի [26, ս. 30]: Ակնկալվում է, որ ընդհանուր առմամբ Չինաստանի կառավարության ծախսերը UQUS&-ում կհաննի \$1 տրլն-ի [7, թ. 4]: UQUS ֆինանսարանակային համակարգի ուսումնասիրությունը կարող է այնքանով, որ այն հերարփորություն է ընձեռում կայուն ֆինանսարանակային համակարգեր ունեցող երկրներին ընդորլիվ՝ UQUS ֆինանսատեսական համակարգում:

«Մետարի ճանապարհ հիմնադրամ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ԱՃՀ)

Մինչև 2018թ. UQUS-ում հիմնական ներդրումները կատարել են չինական կազմակերպությունները: Դարձ է, որ չինական ընկերությունների հետարքրություններն ու միջոցները սահմանափակ են, և այս ներդրումները շարունակական դարձելու և այլ երկրների կողմից առաջ քաշված ծրագրերը ևս ֆինանսավորելու, համակարգելու համար 2014թ. դեկտեմբերի 29-ին ստեղծվեց ԱՃՀ-ն: Դրա ստեղծման վերաբերյալ Սի Շինփինը խոսել էր 2014թ. նոյեմբերի 8-ին «Ասիա-խաղաղ-

շուկաստան» ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» ՆԱԽԱԶԵՇԽԱՌԻ ԹԹՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԸ օվկիանոսյան տնտեսական համագործակցություն (ԱԱԾ)» կազմակերպության տնտեսական առաջնորդների 22-րդ համայիսման ընթացքում: Նա նշել էր, որ թե՝ Ասիայից, թե՝ տարածաշրջանից դրա գոնսող ներդրողները հրավիրվում են մասնակցելու ԱՃՀ գործունեությանը [3, ս. 544]:

ԱՃՀ-ն համատեղ հիմնադրել են Արտաքին կառավարման պետական մարմինը, Չինաստանի ներդրումային կազմակերպությունը, Չինաստանի զարգացման բանկը և Չինաստանի արտահանման և ներմուծման բանկը: Հիմնադրամի կապիտալը \$40 մլրդ է: ԱՃՀ-ն հիմնականում ներդրումներ է կատարում քանի ստումբների և պարտատումների հիմնադրամներում: Այս կարող է աշխատել միջազգային զարգացման կազմակերպությունների, չինական և օտարերկրյա ֆինանսական ինստիտուտների հետ՝ համատեղ հիմնադրամների ստեղծման շուրջ, ինչպես նաև վասահված ակտիվները կատարելու և վերահսկելու ուղղությամբ: ԱՃՀ հիմնական նպատակն է ներակառուցվածքների, արդյունաբերական, հներգետիկ և ֆինանսական համակարգերի զարգացման խթանումը<sup>24</sup>:

Հատկանշական է, որ 2015թ. Ազգային ժողովրդական կոնգրեսում ԱՃՀ նախագահ Շին պատես Բնութագրեց իր դեկավարված կառույցը: «Հիմնադրամն օգնություն տրամադրող կազմակերպություն չէ: Մենք կփնտրենք հիմնավորված, միջնաժամկետ և երկարաժամկետ ներդրումներ, կա-

<sup>24</sup> 絲路基金(Անուրի ճանապարհ հիմնադրամ).

<http://www.silkroadfund.com.cnweb/19854/19858/index.html>

պահովելու օգուտի վերադարձը և կպաշտպանենք ներդրող բաժնետերերի իրավունքները» [21, p. 58]: Ըստ Սի Շինփինի ելույթի՝ ԱՃՀ-ն մինչև 2017թ. մայիսը տրամադրել է \$4 մլրդ-ի վարկավորում ՄԳԱՀ մասնակից երկրներում իրականացվող ներդրումների համար: ԱՃՀ-ն Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների հետ ստեղծել է 16+1 ֆինանսական կազմակիրությունը<sup>25</sup>: Ի դեպ, ըստ «Եվրոպական բարեփոխումների կենսարոնի» դեկավար Յան Բուենի՝ այս ձևաշափով Զինաստան-Կենտրոնական Եվրոպայի ԵՄ անդամներ-Արևմտյան Բայկանների պետություններ համագործակցությունը մտահոգում է ԵՄ հանձնաժողովին այն պատճառով, որ շինական ներդրումների պատճառով ԵՄ ներսում շինամտությունը պետությունների լորրիտական խումբ կձևավորվի, ինչի հետ կը կարողացի ԵՄ միասնական բաղարականության ձևավորման գործընթացը [5, p. 7]:

### Ասիական ենթակառուցվածքային ներդրումների բանկ (ԱՃՀԲ)

2016թ. հունվարին, չայած ԱԱՆ ճնշումներին՝ Զինաստանին հաջողվեց ստեղծել ԱՃՀԲ-ն<sup>26</sup>, որի կանոնադրական կապիտալը կազմում է \$100 մլրդ [17; 27, p. 108]: Զինաստանը տնօրինում է ԱՃՀԲ բաժնետոսների 26.06%-ին, որոշումներն ընդունվում են, եթե կողմ ընթարկող բաժնետերերի թիվը հաս-

<sup>25</sup> Full Text of President Xi's Speech at Opening of Belt and Road Forum, 2017, [http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c\\_136282982.htm](http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c_136282982.htm)

<sup>26</sup> The Asian Infrastructure Investment Bank, Who We Are, <https://www.aiib.org/en/about-aiib/index.html>

արևատարական մեջ գոտի, Մեկ ճամաչության և անապահությունը Եվրոպայում

նում է 75%-ի: Այսինքն՝ այս հնարավորություն է տալիս, որ պեսզի Զինաստանն ըստ անհրաժեշտության կիրառի վետոյի իրավունքը: Դա որոշ մոտահոգությունների առարկա էր դարձել, ըստ որոնց՝ Զինաստանն ԱՃՀԲ-ն օգտագործելու է սեփական շահերը սպասարկելու համար, և որ ԱՃՀԲ-ն կղատնա ՄԳԱՀ-ն սպասարկող բաղարական գործիք [27, p. 109]:

Այս մոտահոգությունները ցույց են տալիս Պեկինի երաժարկեց բաղարական և վարկավորման հարցերում վետոյի իր իրավունքից, որպեսզի այս քայլով նաև ԱՃՀԲ-ին միանալ ավելի շահավատ դարձենի մյուս երկրների համար [21, p. 57]: Այնուամենայնիվ, ինչպես նշում է սինգապուրցի հետազոտող Հենրի Չան Հին Լին, «ԱՃՀԲ հաջողությունը կամ անհաջողությունը կանխարորշի նաև ՄԳԱՀ ճակատագիրը» [27, p. 111]: Ըստ Սի Շինփինի կորույթի՝ ԱՃՀԲ-ն մինչև 2017թ. մայիսը ՄԳԱՀ շրջանակներում իրականացվող ներդրումների համար տրամադրել էր \$1.7 մլրդ<sup>27</sup>:

Հարավային Կովկասից ԱՃՀԲ-ին անդամակցում են Վրաստանը և Աղրեջանը<sup>28</sup>: Այս երկրների ներկայացուցիչներն ընդգրկված են նաև Կառավարիչների խորհրդում<sup>29</sup>: 2016թ. նոյեմբերին Աղրեջանի հաջողվեց Տրանսականության բնական գազի գազամուղը կառուցելու համար

<sup>27</sup> Full Text of President Xi's Speech at Opening of Belt and Road forum, Xinhua, 2017, [http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c\\_136282982.htm](http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c_136282982.htm)

<sup>28</sup> The Asian Infrastructure Investment Bank, Members and Prospective Members of the Bank, <https://www.aiib.org/en/about-aiib/governance/members-of-bank/index.html>

<sup>29</sup> The Asian Infrastructure Investment Bank, Board of Governors, <https://www.aiib.org/en/about-aiib/governance/board-governors/index.html>

ԱԵՆԲ-ից ստանալ \$600 մլն<sup>30</sup>, իսկ Վրաստանը Բարումը շրջանցող ձախապարհը կառուցելու համար բանկից ստացավ \$114 մլն<sup>31</sup>:

2017թ. մարտի 23-ին Հայաստանի, Աֆղանստանի, Ֆիզիի, Հոնդուրասի, Արևելյան Թիմորի անդամակցության համար դիմումները «Տարածաշրջանային հեռանկարային անդամ» ձևաչափով ընդունվել են ԱԵՆԲ-ի կողմից, որից հետո Հայաստանը ընդգրկվել է Հեռանկարային անդամների ցուցակում, իսկ մյուս չորսը դարձել են լիարժեք անդամ<sup>32</sup>:

Կարծում եմ, որ ԱԵՆԲ-ին ՀՀ անդամակցությունը հնարավորություն կընձեռի հայ-իրանական երկաթօդի կառուցման համար բանակցություններ սկսել ԱԵՆԲ-ի հետ՝ վարկավորում ստանալու նպատակով:

### ԲՈՆՉ (BRICS) զարգացման նոր բանկ (ԶԱԲ)

2014թ. Բրազիլիայում տեղի ունեցած ԲՈՆՉ [28] 6-րդ համաժողովի որոշմամբ հիմնադրվեց ԶԱԲ-ն: 2016-2017թթ. ժամանակահատվածի համար բանկը հաստատեց \$3.4 մլրդ-ի վարկային գիծ: ԶԱԲ-ն նպատակ ուներ այս գործարքը տրամադրել տրանսպորտային ծառայությունների, վերականգնվող էներգիայի, ջրի մաքրման, ռոողման և այլ ոլորտների զարգացման



շինաստանում ԵՄ ներկայացուցություն։ «Ժամանակակից Զինաստանի նոր և լվորական հետազոտություն» գիտաժողով, 2014թ.: Կենտրոնում՝ Միկր Սահակոս, նրանից ձախ պրոֆեսոր Ավելյան Մերի (Լինի Արևելյան Ասխայի հետազոտությունների ինստիտուտ), աջ պրոֆեսոր Մերաստիան Վեգ (Փարիզի Հումանիտար գիտությունների բարձրագույն դպրոցի շնորհականության կենտրոնի տնօրեն), Մարիան Լենք (Զինաստանում ԵՄ պատվիրակության բաղադրական բաժնի ղեկավար) և այլ բանախոսներ:

<sup>30</sup> The Asian Infrastructure Investment Bank, Azerbaijan: Trans Anatolian Natural Gas Pipeline Project, <https://www.aiib.org/en/projects/approved/2016/trans-anatolian.html>

<sup>31</sup> The Asian Infrastructure Investment Bank, AIIB Approves its First Equity Investment, 2017, [https://www.aiib.org/en/news-events/news/2017/20170615\\_001.html](https://www.aiib.org/en/news-events/news/2017/20170615_001.html)

<sup>32</sup> The Asian Infrastructure Investment Bank, AIIB Welcomes New Prospective Members, 2017, [https://www.aiib.org/en/news-events/news/2017/20170323\\_001.html](https://www.aiib.org/en/news-events/news/2017/20170323_001.html)




ՊԵՌ կենտրոնի և Ռուսաստանի Դիվանագիտական ակադեմիայի Համաշխարհայի անվտանգության հիմնախնդիրների միջազգային դպրոց, 2015թ.:

Զախիք՝ Ավելաս Զովլիստրենս (ՊԵՌ կենտրոնի տնօրեն), Մհեր Սահակյան, Ավելասնոր Կոնկով («Վերիմաստավորելով Ռուսաստանը» վերուժական կենտրոնի դեկանը), Սերգեյ Շարկով (Ռուսաստանի ԱԳՆ փոխախարար), պրոֆեսոր Վաղիմիր Օորով, (Ռուսաստանի Դիվանագիտական ակադեմիայի Համաշխարհային հիմնախնդիրների և միջազգային կազմակերպությունների կենտրոնի ղեկավար) և այլ հետազոտողներ, դիվանագետներ:



Նանձինի համալսարանի միջազգային հարաբերությունների ինստիտուտ, 2016թ.:

Զախիք՝ պրոֆեսոր Ֆեն Լիան (Նանձինի համալսարանի միջազգային հարաբերությունների ինստիտուտ), Մհեր Սահակյան, պրոֆեսոր Հոն Յոնչին (Նանձինի համալսարանի Միջազգային հարաբերությունների ինստիտուտի փոխնախազանի), պրոֆեսոր Զայ Ժիայի (Չոն Հոփիկենսի համալսարանի «Նանձինի չին-ամերիկյան հետազոտությունների կենտրոնի» պրոռեկտոր), պրոֆեսոր Ջոն Ֆեն (Չինաստանի Հարավայինական ծովի ուսումնասիրությունների կենտրոնի գործադիր տնօրեն), պրոֆեսոր Ճի Չուժին (Նանձինի համալսարանի գրադարանի ղեկավար, պատմության ֆակուլտետի փոխնախօս), պրոֆեսոր Սոն Տրան (Չինաստանի ժողովրդական-ազատագրական բանակի Միջազգային հարաբերությունների ինստիտուտի Ռազմավարական հետազոտությունների միջազգային կենտրոնի տնօրեն) և այլը:



Միեր Սահմալյանը Նախարարի համալսարանի կողմից ստանում է զիտական կոչում (Doctor of Laws in International Relations), 2016թ.:



Միեր Սահմալյանը երրորդ է ունենում Օրբերդի համալսարանի կազմակերպած «Տեսակետների քայլում. Ռուսաստանի արտաքին քաղաքականքում Միա և Թրամադի ժամանակաշրջանում» գիտաժողովում, 2017թ. Զայտից Մարտիմ Կուլին (Տարտուֆի համալսարան), Միեր Սահմալյան, Վասիլ Չուտյանը (Գորբինենի համալսարան), Կուլի Վալերի (Օրբերդի համալսարան):



Միեր Սահմալյանը երրորդ է ունենում Քեմբրիջի համալսարանում, 2017թ.:  
Զայտից պրոֆեսոր Օլիվյե Բասը (Սորբոնի համալսարան), Ամերիկայի Սենյար (Սուրբ Էնդրյուսի համալսարան), Ֆարենս Թեյմուրզանի (Երևանի համալսարան), Միեր Սահմալյան:



Միեր Սահմալյանը «Նորագույն» ԳՎՀ-ում երրորդ է ունենում «Մետաքսի ճանապարհ տնօւնական գոտու» և Հայաստանի իրավասի հետապնդությունների մասին, 2017թ.:  
Զայտից Ֆեն Վան (Հայաստանում Հինաստանի դեսպանության հյուպատոս), Գու Յուն (Հայաստանում Հինաստանի դեսպանության խորհրդական), պրոֆեսոր Աշոտ Թավաղյան (ՀՊՏՀ տնօւնամաթեմատիկական մերուդների ամբիոնի վարիչ), ք.դ.ք. Գագիկ Զարուհյունյան («Նորագույն» ԳՎՀ գործադիր տնօրին):



Հանհայի համալսարան, «Զինաստան և Մերձավոր Արևելք երրորդ զիտաժողովի» երավիրյա բանախոսեր Սիեր Սահակյանը և Մերձավոր Արևելքում Զինաստանի հատուկ պատվիրակ Վու Սիկը. 2017թ.:



Սիեր Սահակյանը Մուսկվայի պետական համալսարանում ներկայացնելու է իր հետազոտությունը՝ «ՄԳԱՃ նախաձեռնություն Զինաստանի պօզային անվտանգության տեսակելում» վեց, 2018թ.:

Զախիջ Սիեր Սահակյան, դոկտոր-պրոֆեսոր Լարիսա Լապիդոս (Մուսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի տողահանության հիմնախոսի կենտրոնի դեկանը), վ.գ.թ., պրոֆեսոր Օլեգ Բոլցևիչը (Մուսկվայի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի փոխներքան, Տնտեսագիտական հետազոտությունների կենտրոնի դեկանը):



Սիեր Սահակյանը ելույթ է ունենում ՄԳԱՃ-ում Հայաստանի ներգրավման ենունկարների շարք՝ Նեշենիիրի համալսարանում տեղի ունեցած «Զինաստան և Մերձավոր Արևելք» շրջարկ զիտաժողովում, 2018թ.:



Միավորված Ազգերի Կազմակերպության համաժողովում (Վիեննա) Սիեր Սահակյանը մասնակցում է թնարկման նվիրված միջազգային անվտանգության հիմնախորհներին, 2018թ.:



Մեր Սահմալյանը եղուց է ունենում Միավորված Ազգերի Կազմակերպության ԱկտաԵմիական խորհրդի Վիեննայի միջազգային խաղաղության հետազոտությունների համաժողովում, 2018թ.: Զախից Մեր Սահմալյան, պրոֆեսոր Հեյն Գյարբինը (Վիեննայի դիվանագիտական ակադեմիա, Վիեննայի համալրան, Խաղաղության միջազգային ինսիտուտի խորհրդական):

ԹԻԱՄԱՏԱՆ. «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱԼԱՊԱՄ»: ՆԱԽԱՇԵՐՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

ծրագրերի համար: Հաստատվեց, որ ՉՆԲ սկզբնական կապիտալը պետք է կազմեր \$50 մլրդ, որը հավասարության սկզբունքով տրամադրելու էլեն անդամ պետությունները: Որոշվեց նաև, որ բանկի կանոնադրական կապիտալը պետք է հասցի \$100 մլրդ-ի<sup>20</sup>: ՉՆԲ կենտրոնը գտնվում է Չինաստանի Շանհայ քաղաքում, հիմնական նպատակն է ապահովել հիմնադրելու ֆինանսական կայունությունը: Այսինքն՝ ՉՆԲ-ն ներկա փուլում մեծ մասամբ ֆինանսավորելու է ՄԳԱՀ այն նախաձեռնությունները, որոնք իրազործվում են Չինաստանում, Շուսաստանում, Հնդկաստանում, Բրազիլիայում և ՀԱՀ-ում:

ՄԳԱՀ-ն ֆինանսավորող չինական բանկերը.

Չինաստանի զարգացման բանկ - 国家开发银行 (ՉԳԲ)

2014թ. վերջին ՉԳԲ կապիտալ հասավ 10.32 տրլն ռենմինբի:

2014թ. վերջին արտասահմանում ներդրումներ կատարվում են համար ՉԳԲ-ի տրամադրեց 1.56 տրլն ռենմինբի, որի շահառունքը գգալի մասն արտասահմանում ներդրումներ կատարող չինական կազմակերպություններն են [27, p. 112]: ՉԳԲ-ն հայուարարում է, որ այն ծառայում է Չինաստանի ՄԳԱՀ նախաձեռնությանը և օժանդակում է չինական կազմակերպությունների՝ «Գնալ համաշխարհային» քաղաքականությանը<sup>21</sup>: ՉԳԲ նպատակներից է օտարերկրյա կառավա

<sup>20</sup> New Development Bank, About Us, <https://www.ndb.int/about-us/essence/history/>

<sup>21</sup> The State Council, The PRC Chinese Enterprises Enter 'Go Global' Era 4.0, [http://english.gov.cn/news/top\\_news/2016/04/11/content\\_281475325205328.htm](http://english.gov.cn/news/top_news/2016/04/11/content_281475325205328.htm)

բույրունների հետ համագործակցության խորացումը ֆինանսական ինստիտուտների, արդյունաբերական կենտրոնների, ենթակառուցվածքների, ֆինանսների, զուլատնետնության, էներգետիկայի զարգացման ոլորտներում<sup>35</sup>: Օրինակ՝ ՀՉԲ-ն ՀԱԵԱ անդամ պետությունների համար \$10 մլրդ հատուկ վարկային գիծ է բացել որպեսզի վերջիններս զարգացնեն ենթակառուցվածքները: Այս վարկային գծից կարող են օգնվել նաև շինական այն կազմակերպությունները, որոնք պատրաստվում են տվյալ երկրներում կառուցել գործարաններ և զարգացնել արդյունաբերությունը<sup>36</sup>:

2015թ. մայիսին ՀՉԲ-ն հայտարարեց, որ կորամադրի \$890 մլրդ 60 երկրներում իրականացվող ավելի քան 900 նախագծեր վարկավորելու համար [21, p. 58]:

Չինաստանի արտահանման և ներմուծման բանկ -  
中国进出口银行 (ՉԱՆԲ)

ՉԱՆԲ-ն պետության հիմնարած և վերջինիս սեփականությունը հանդիսացող բանկ է, որն ունի իրավաբանական անձի կարգավիճակ: Այս բանկի հիմնական նպատակներից են Չինաստանի արտաքին առևտորին և ներդրումների բնականությանը, արտաքին աշխարհի հետ տնտեսական համագործակցության զարգացմանը նպաստելը, չինական

<sup>35</sup> China Development Bank, Loan Financing,  
<http://www.cdb.com.cn/English/cpfw/gjyw/dkzs/>

<sup>36</sup> China Commits \$1bn to Greater Mekong Subregion, Chinadaily, 2014,  
[http://www.chinadaily.com.cn/world/2014/livisitst/2014-12/20/content\\_19133622.htm](http://www.chinadaily.com.cn/world/2014/livisitst/2014-12/20/content_19133622.htm)

օրականություն, մեկ գոտի, մեկ գումարում: Նպատակներում են շահաստված կազմակերպությունների, «Գնալ համաշխարհային» քաղաքականության օժանդակելը:

Օրինակ՝ 2013թ. ՉԱՆԲ-ն Կրզատանին \$385 մլն-ի վարկ տրամադրեց Բիշրեկի շերմային էլեկտրակայանն արդիականացնելու համար: Չինացիններն այս վարկի առաջարկեցին՝ փոխարենը որպես օգուտ ակնկալելով ընդամենը 20%՝ 20 տարվա ընթացքում վարկը փակելու դիմաց: Կրզատանը տոկոսները պետք է սկսի փակել 11 տարուց [29, p. 63]:

2015թ. ՉԱՆԲ-ն կառավարության կողմից ստուգավ \$48 մլրդ, իսկ ՀՉԲ-ն՝ \$45 մլրդ: Վերոհիշյալ ֆինանսական միջոցները տրամադրվել են ՄԿԱԾ շրջանակներում իրագործվող ներդրումները վարկավորելու համար [27, p. 112]:

Չինաստանի բանկ - 中国银行 (ՉԲ)<sup>37</sup>

2014թ. ՉԲ ակտիվները հասան \$2.458 տրին-ի: Բանկը հայտարարել է, որ 2016-2018թթ. ՄԿԱԾ շրջանակներում արտերկրում իրագործվող ծրագրերը ֆինանսավորելու համար շինական կազմակերպություններին տրամադրելու է \$100 մլրդ [27, p. 113]:

Չինաստանի արդյունաբերական և առևտարային բանկ -  
中国工商银行 (ՉԱԱԲ)

ՉԱԱԲ-ն աշխարհի ամենամեծ բանկն է, մինչև 2016թ. այն աշխարհում առեղծել էր 412 ֆինանսական ինստիտուտ,

<sup>37</sup> 中国银行. (Չինաստանի բանկ), <http://www.boc.cn/index.html>

որոնցից 127-ը տեղակայված է ՄԳԱՀ մասնակից երկրներում: ՉԱԱԲ-ն հայտարարում է, որ օժանդակելու է շինական կազմակերպությունների՝ արտերկրում հաստատվելու բաղադրականությանը<sup>38</sup>:

Չինաստանի ապագայում հոյս ունի ՄԳԱՀ հովանու ներքո իրագործվող ծրագրերը ֆինանսավորելու համար օգտագործել նաև ՇՀԿ-ում ստոդվելիք զարգացման բանկը, որի հենքը պետք է հանդիսանա ՇՀԿ միջազնակային կոնսորցիոնը [21, pp. 59-60]:

Ուստի հետագուող լոգորենը պնդում է, և ևս համամիտ եմ, որ «Չինաստանի բանկերը հետևում են շինական մեծ կազմակերպությունների օրինակին, որոնք գումարներ են տրամադրում բնական հանածոնների մշակման, նորագոյն տեխնոլոգիաների զարգացման և սպառողների մեծածավալ պահանջարկը վայելող ապրանքների արտադրության համար: Սա օգնում է տարատեսակել Չինաստանի բնակային ոլորտի շահույթի աղբյուրերը, ինչպես նաև նվազեցնում է ատիվական շուկայից շափթից ավելի կախվածության մեջ ընկերությունները» [26, c. 35]:

Այսպիսով, Չինաստանը ՄԳԱՀ հաջող իրագործման համար փորձում է օգտագործել թե՝ պետական, թե՝ միջազգային, թե՝ մասնավոր հատվածների ֆինանսները:

Հատկանշական է, որ Չինաստանը համակցել է ունիմիչի միջազգայինացման և ՄԳԱՀ նախաձեռնության համաշ-

խարիսխացման գործընթացները: ՄԳԱՀ իրականացումը հնարավորություն է ընձեռում և հարթակ է տրամադրում, որպեսզի ունիմիչներին հաստատվի որպես միջազգային արժույթ, իսկ ունիմիչների միջազգայնացումն է նպաստում է ՄԳԱՀ ֆինանսական հատվածի կայուն զարգացմանը նաև Չինաստանից դուրս, ինչը երկրին հնարավորություն է տալիս դառնալ առանձին ֆինանսարաններին ընեն:

2.2 Հայ-շինական ֆինանսարանների համագործակցության հետակարները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնության շրջանակներում

Հայշվի առնելով միջազգային փորձը, ըստ որի՝ ՉՀԲ-ն համաձայնել է Եզիդակուս ՍԱՅԲԱԿԱԿԻՆ (SAIBANK) տրամադրել \$40 մլն եզիդական փոքր և միջին ձևունակություններին հատկացնելու համար<sup>39</sup>, իսկ ըստ Չինաստանի շինարարական բանկի (ՉՇԲ) և Սինկապորի միջազգային գործակալության միջև կնքված Փոխըմբռնաման համաձայնագրի՝ ՉՇԲ-ն \$22 մլրդ-ի ֆինանսական օճանակություն պետք է տրամադրի սինկապուրյան և շինական կազմակերպություններին՝ ՄԳԱՀ շրջանակներում ներդրումներ կատարելու համար [21, p. 60], կարծում եմ, որ հնարավոր է հայկական բանկերի միջոցով ՉՇԲ-ից կամ այլ շինական ֆինանսարաններին կազմակերպություններից, որոնք ընդգրկված են ՄԳԱՀ-ում, վարկային գիծ ստանալ Չինաստանից տեխնոլոգիաներ կամ

<sup>38</sup> ICBC Bank, ICBC Business Review,  
<http://www.icbc.com.cn/ICBC/EN/AboutUs/BriefIntroduction/>

<sup>39</sup> Egyptian, Chinese Banks Sign Loan Deals to Enhance Financial Cooperation. *China Daily*, 2017, [http://www.chinadaily.com.cn/business/2017-09/18/content\\_32147872.htm](http://www.chinadaily.com.cn/business/2017-09/18/content_32147872.htm)

ապրանքներ և երբուծող հայկական փոքր, միջին և մեծ բիզնես-կազմակերպություններին տրամադրելու համար:

Արդյունքում՝ ՀՀ գործարքները ենարավորություն կստանան ընդլայնել սեփական բիզնեսը, ձայստան հավելյալ դրամական միջոցներ կմտնեն, իսկ Զինաստան, իր հերթին, կկարողանա շրջանառության մեջ դնել սեփական դրամային միջոցները, որոնք նրան հավելյալ տոկոսներ կրեթեն, ինչպես նաև կմեծացնեն շինացիների կողմից արտադրված տեխնիկայի և ապրանքների եկատմամբ ենարքությունը ԵԱՏՄ անդամ Հայաստանուն:

Հայկական բիզնես-կազմակերպությունները կարող են Հայաստանում համատեղ բիզնեսներ սկսելու համար ուղիղ բանակցությունների մեջ մտնել շինական ձեռնարկությունների հետ, համաձայնության գալ, որից հետո շինական կողմը կարող է դիմել ՍԳՄԸ շրջանակներում ֆինանսավորում տրամադրող վերոհիշյալ շինական բանկերին և սկսել Հայաստանում ներդրումներ կատարելու գործընթացը:

Այս հիպոթեզի լավագույն փաստարկներից է Սի Շինփինի ուղերձը շինական կազմակերպություններին, ըստ որի՝ Զինաստանի դեկազրությունը շահագրգության է, որ շինական կազմակերպությունները մեծացնեն իրենց դերը ՍԳՄԸ շրջանակներում ներդրումներ կատարելու գործում՝ հիմքում ունենալով «Ներփի համաշխարհային գնալու» քաղաքանությունը [3, թ. 547]:

## 2.2.1 ՀՀ-ում շինական բանկի հիմնման գնահատականը ՀՀ տնտեսական շահերի տեսանկյունից

Զինական ունմինիքի միջազգայնացումը լայն հնարավորություններ է ընձևում ՍԳՄԸ-ում ընդգրկված կայուն բանկային համակարգ ունեցող երկրներին, բանկի որ նրանք հնարավորություն են ստանում շինական բանկերի մասնաճյուղեր ներգրավել սեփական բանկային համակարգում կամ շինական արժույթով աշխատող միջնորդ բանկեր հիմնել ապահովել սեփական արժույթի փոխարկումը ունմինիքով:

Իսկ ինչո՞ւ պետք է Զինաստանը հետարքրդված վիճի ունմինիք-դրամ կոնվերտացիայի ապահովմամբ և ՀՀ-ում շինական բանկի հիմնադրմամբ:

Զինաստանը ենարավորություն կստանա Հայաստանի հետ առնուող անել (մոտ \$454 մլն [32]) շինական արժույթով, որի շեռորիկ կամրապնդվելու ունմինիքի դիրքերը համաշխարհային ֆինանսական աշխարհում, իսկ Հայաստանում շինական բանկ հիմնվելու դեպքում շինական կապիտալը կերպավով Հայաստանի ֆինանսարանկային համակարգում:

Տարց է առաջանում, իսկ ի՞նչ կշահի Հայաստանը:

Հայաստանում Զինաստանի առաջատար բանկերի մասնաճյուղեր բացելու կամ համառեղ հայ-շինական բանկի ստեղծման արդյունքում զգալի ֆինանսական ներդրումներ կկատարվեն երկրում, կուտարածեսակի ֆինանսական դաշտը, դրամ-ունմինիքի փոխարկումն ապահովելու դեպքում երկու երկրների միջև առնուուրը կիրականացվի սեփական արժույթներով, ինչի շնորհիվ հայ և չին գործարանները

ստիպված չեն լինի հավելյալ դրամային միջոցներ ծախսել դրամ-դրամ-ռենմինիքի փոխանակումների պատճառով։ Հատ մեր հաշվարկների՝ հայկական կողմը վերոհիշյալ գործառութի պատճառով տարեկան կորցնում է մոտ \$10 մլն, որը կարելի է բացառել, եթե ՀՀ բանկերից հետափր լինի չին գործընկերներին ռենմինիքի փոխանցեն։ Զինաստանում և Հայաստանում բնակվող և տվյալոր հայերն ու չինացիներն են կկարողանան չինական արժույթ փոխանցել Հայաստան և հայառակակի հավելյալ կորուստների։

ԳԼՈՒԽ 3.  
«ՍԵՏԱԲՍԻ ՇԱԱԱՊԱՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏՈՒ»  
ՑԱՍԱԶԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԵՅ ՄԻՋՄՆՑՔՆԵՐԸ,  
«ՀՀ-ՐԴ ԴԱՐԻ ՄԵՏԱԲՍԻ ՇՈՎԱՅԻՆ  
ՃԱՆԱՊԱՀՀԸ» ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

### 3.1 «Մետաքի ճանապարհ տնտեսական գոտու» ցամաքային հիմնական վեց միջանցքները

«Մետաքի ճանապարհ տնտեսական գոտու» և «21-րդ դարի մետաքի ծովային ճանապարհի» համատեղ կառուցման տեսլականն ու գործողությունները» փաստաբառում նշված է, որ ՄՃՏԳ-ն նպատակ ունի միջմանց կապակցել Զինաստանը, Կենտրոնական Ասիան, Ռուսաստանը և Եվրոպան, ինչպես նաև Զինաստանը Կենտրոնական Ասիայի ու Արևմտյան Ասիայի միջոցով կամրջել Պարսից ծոցին և Միջերկրական ծովին, իսկ Հարավարեւելյան և Հարավային Ասիայի միջոցով Զինաստանը կապել Հնդկական օվկիանոսին [6]:

Զինխուա համալսարանի Զինագիտուրյան կենտրոնի դեկանը Հով Անգամը և Սինծիանի արդյունաբերության և շինարարության կորպորատիվ վեցերորդ դիմիզիոնի իրավաբանական բաժնի փոխտնօրեն Մա Վեյը համատեղ հոդվածում

կոնկրետացնում էն շինական կողմի տեսլականը: Նրանք ԱՃՏԳ գարզացման համար առաջնահերթ համարվող պետություններն ըստ կարևորության բաժանել են երեք մակարդակի:

1. Կենտրոնական Ասիայի պետություններ
2. Կենտրոնական Ասիային սահմանակից և մոտակա երկրներ՝ Ռուսաստան, Աֆղանստան, Հնդկաստան, Պակիստան, Իրան, Աղրբեջան, Հայաստան, Վրաստան, Թուրքիա, Սաստան Արաբիա և Իրաք
3. Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ուկրաինա, Եգիպտոս, Լիբիա և Ալժիր [35, p. 167]:

Իսկ Միև Գուանչենը նշում է, որ Չինաստանը մեծ նշանակություն է տալիս աշխարհաբարձրական և տևականական հարաբերությունների զարգացմանը Եվրասիայում, քանի որ Չինաստանը Եվրասիայի կարևոր մասն է, և, բնականաբար, այս հակամանքը թելադրում է, որ այս պետք է կենտրոնական տարածաշրջանի զարգացման միտումների վրա: Երկրորդ պատճառն այն է, որ Եվրասիան կամքում է Աֆրիկան, Հյուսիսային Ամերիկան, Խաղաղ, Սառուցյալ, Աստվանոյան և Հնդկական օվկիանոսները [2, p. 155]:

2017թ. մայիսի 14-ին, ՍԳԱԾ համաժողովի ժամանակ Չինաստանի նախագահ Սի Շինինը կարևորեց տևականական միջանցքների գործարկումը՝ որպես բազմաֆունկցիոնալ ցանցեր, որոնք բաղկացած են ցամաքային, ծովային, օդային բեռնափոխադրման ձանապարհներից: Նա նշեց, որ այս մի-

շրայտական «մեր գույք, Մեր ճամարտաւ և անսահման մեջ հասպառաւ» շանցեների արյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է դրանք պահպանի երկարությներով, նաև անգամ գագամուղերով և նաև թափանուղերով<sup>40</sup>:

Ինչպես եշում է Սի Շինինը, «Մետարսի ձանապարհը» սկսվում է ձանապարհներով, եթե դրանք պատրաստ լինեն, ապա մարդիկ և ապրանքները կկարողանան տեղափոխվել» [3, p. 544]:

Չինաստանի մի շարք նախագետներ Եվրասիայի այլ տարածաշրջանների հետ առևտուրը զարգացնելու համար սկսեցին կառուցել երկարությներ, որոնցից են Չոնչին-Սինձիան-Եվրոպա, Ջեցոն-Սինձիան-Եվրոպա, Վուհան-Սինձիան-Եվրոպա և Սուչոն-Մանչոուլի-Եվրոպա ուղիները [2, p. 150]: Որոշ մասնագետների կարծիքով՝ ԱՃՏԳ գործառնական մեկնարկը համարվում է 2014թ. նոյեմբերի 18-ը, եթե զնացքը չնական Յիփույցից ուղղություն վերցնելու դեպի Մարդիր և նշանակետնին հասավ 2014թ. դեկտեմբերի 9-ին՝ տեղափոխելով 82 քենարկը [36, p. 95]: Չինաստանը ԱՃՏԳ-ում նպատակ ունի կառուցել երկարությներ, ավտոճանապարհներ, որոնց միջոցով կմեծացնի առևտուրի ծավալները գործընկերների հետ, ինչպես նաև Հարավչինական ծովով անցնող ճանապարհների ցամաքային այլլեռնարերը կունենա: Երկարությների շնորհիվ ներկայումս բեռնափոխադրումներ կարող են կատարվել Չինաստանի և Եվրոպայի բաղադրերի միջև՝ ծափսելով այն ժամանակի մոտավորյան մեկ քառորդը, որը

<sup>40</sup> Full Text of President Xi's Speech at Opening of Belt and Road Forum, Xinhua, 2017, [http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c\\_136282982.htm](http://news.xinhuanet.com/english/2017-05/14/c_136282982.htm)

ծախսվում է ծովային բեռնափոխադրումների ընթացքում: Երկարուղային փոխադրումների 65%-ով էծան են նաև օդայինից: Ինչպես նշում է Չինաստանի պաշտոնական լրատվամիջոցը՝ «Մինիտուան», եթե 30-60 օրվա ընթացքում ծովային բեռնափոխադրումների մեծամասնության համար, ապա բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործող կազմակերպությունները, որոնք իրենց առօրյա արտադրության համար հավելյալ սարքավորումների կարիք ունեն, որը նրանց հարկավոր է ստանալ հնարավորինս արագ և էժան, օգտվում են երկարութիւններից<sup>41</sup>:

Այս զիսում ներկայացվում են Չինաստանի աշխարհի հետ կապող Մ&ՏԳ հիմնական միջանցքների երկարութիւնները և ՄԾՀ ուղիները: Վերլուծվում է, թե ինչու է Պեկինը շահագրգումած այդ միջանցքներով անցող ենթակառուցվածքների գարգամամբ, որ միջանցքներն են բնականու զարգանում, որոնցում են առկա քաղաքական և տնտեսական խնդիրները խոչընդոտում, ինչ ներքին և արտաքին քաղաքական խնդիրներ է լուծում Չինաստանը՝ զարգացնելով ցամաքային և ծովային ճանապարհները, ինչու և ինչպես պետք է Հայաստանը փորձի սեփական ենթակառուցվածքներն ընդորկել ու զարգացնել շինական և ախտաձեռնության շրջանակներում:

<sup>41</sup> Forbes Praises China's Belt and Road for Reviving Trans-Continental Rail Transport, Xinhua, 2017, [http://www.xinhuanet.com/english/2016-01/29/c\\_135058406.htm](http://www.xinhuanet.com/english/2016-01/29/c_135058406.htm)

ԶԻԱԱՍԱՄԱՆ «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՀԱՆՈՒՂՈՒՐ» ՆԱԽԱՁԵՐՈՌԻԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Նոր Եվրասիական մայրցամաքային կամուրք (ՆԵԱԱՄԿ)

ՆԵԱԱՄԿ-ի (քարտեզ 1) Խաղաղ օվկիանոսն Աստղանոյան օվկիանոսին կապող միջազգային անցույի է, որի երկարութիւնների երկարությունը մոտ 10.800 կմ է: Այսուղ գործում են երկու հիմնական երթուղիներ, որոնք Չինաստանը կազմում են Եվրոպային: Առաջինը Չինաստանի հյուսիսում միանում է Շուտաստանի Տրանսսիբիրյան երկարություն և շարունակում ճանապարհը դեպի Եվրոպա<sup>42</sup>: Ներկայաւում կառուցվում է Նիֆնելենինսկոյե-Թումանին երկարուղային կամուրջը, որը հնարավորություն կրնաւոր Չինաստանից եկող բեռները տեղափոխել նաև Տրեսական Բնընալար Սարգով և Տրանսսիբիրյան երկարուղու միջոցով ուղարկել դեպի Եվրոպա [37, с. 14]:

Երկրորդ երկարուղային ցանցը, անցնելով արևմտյան Չինաստանով և Ղազախստանով, Եկատերինբուրգում միանում է Տրանսսիբիրյանին և շարունակում ճանապարհը մինչև Լոնդոն<sup>43</sup>:

2016թ. Չինաստանի կողմից Ղազախստանում կատարված ներդրումների ծավալները կազմել են \$20 մլրդ, որի մեծ մասը ծախսվել է տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման վրա [38, с. 277]: Ղազախստանը ջանքեր է գործադրում, որ Ասիա-Եվրոպա մայրցամաքային բեռնափո-

<sup>42</sup> Backgrounder: Economic Corridors Under Belt and Road Initiative. Xinhua, 2017, [http://news.xinhuanet.com/english/2017-05/09/c\\_136268314.htm](http://news.xinhuanet.com/english/2017-05/09/c_136268314.htm)

<sup>43</sup> Kevin Smith, China-Europe Rail Freight Continues to Soar, International Railway Journal, 2017, <https://www.forbes.com/sites/salvatorebabones/2017/12/28/the-new-eurasian-land-bridge-linking-china-and-europe-makes-no-economic-sense-so-why-build-it/#7d51524a5c9c>

խարութեքի մեծ մասն անցելի սեփական տարածքով։ Աստանան նպատակ ունի բեռնափոխադրումներից ստացվող էկամուտները \$800 մլն.-ից հասցնել \$2 մլրդ.-ի 2020թ., ինչ 2050թ.,՝ \$10 մլրդ.-ի [38, с. 277]:

Ղազախստանի տարածքով առաջին շինական գնացքը Մեծ Բրիտանիայի մայրաքաղաք Ժամանեց 2017թ. հունվարի 18-ին, որի համար պահանջվեց 18 օր<sup>44</sup>:

2017թ. Տաշէն ավանի (Մինձիան) և Ղազախստանի կառավարության միջև համաձայնություն ձեռ բերվեց Տաշէնի և Այգողի (Ղազախստան) միջև նոր երկարգի կառուցման վերաբերյալ, որը կդառնա Ասիան Եվրոպային կապող ևս մեկ երկարուղի [38, с. 278]:

Ուստի հետագործող Էվֆան Զուենկոն նշում է, որ, ճիշտ է, Ղազախստանի երկարուղիները և ավտոճանապարհները ի վերջո միանում են ռուսականին, բայց շինական ապրանքների բեռնափոխադրումը Ղազախստանի տարածքով խաղող դուրս վիճակում է բռնում Հեռավոր Արևելքի և Սիրիի ուստական տրանսպորտային համակարգերը [39]. Նա փաստում է, որ ներկայում Ղազախստանը տրանսմայրային բեռնափոխադրումների հիմնական տարածեցիկ երկիրն է: Ի տարբերություն Ռուսաստանի, Ղազախստանը սեփական տարածքով բեռնափոխադրումների քանակը մեծացնելու քայլեր ձեռնարկեց, որին հասնելու համար գարգարեց սեփական տրանսպորտային ենթակառուցվածքները: 2012-2014թթ. մարսային վիճակազրության տվյալ-

<sup>44</sup> Կայի տեղում:

ների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ղազախստանով Ասիայից Եվրոպա փոխադրվող բեռների ծավալները գերազանցում են Արևելյան Սիրիով և Հեռավոր Արևելյով բեռնափոխադրումների քանակները: Այսպէս որ, «Նոր մետաքսի ճանապարհի» ցամաքային հիմնական ուղին, որը միմյաց է կապում Արևմուտքի և Արևելքի զարգացած տնտեսությունները, արդեն գործում է: Այս անցնում է Զինաստանի արեմտյան ենահանգներով, Ղազախստանով և Ռուսաստանի եվրոպական հաստվածով, չի շրջանցում Ռուսաստանի ամրողացությամբ, բայց շրջանցում է Ռուսաստանի արևելյան շրջանները [39]: Շարունակերու այս միտքը՝ ուսև հետազոտող Սերգեյ Սագանովը նշում է: «Մեծ է հավանականությունը, որ պատճամիցների պատճառով «Ռուսաստանի երկարուղիներ» ԲԲԸ և Հեռավորաբենյան նավահանգիստների ենթակառուցվածքների զարգացման նպատակով հատկացվող ֆինանսների անբնիատ կրամատան պայմաններում բեռնափոխադրումների ծավալը Զինաստանից կգնա այլընտրանային տրանսպորտային երթուղիներով՝ շրջանցելով Ռուսաստանը» [38, с. 284]:

Այսպիսով՝ ՆԵԱՄԿ-ն Ասիան Եվրոպային կապող կարևոր կամուրջ է, որի երկարուղիներով գնացքները Զինաստանից ուղևորվում են Եվրոպայում բեռների հիմնական հավաքառելիներ համարվող Վարչակա, Մարդի, Համբուրգ, Դուստրիդ [21, р. 74], Ռոտերդամ, Ամստերդամ<sup>45</sup> և

<sup>45</sup> Backgrounder: Economic Corridors under Belt and Road Initiative, Xinhua, 2017, [http://news.xinhuanet.com/english/2017-05/09/c\\_136268314.htm](http://news.xinhuanet.com/english/2017-05/09/c_136268314.htm)

Լուսդուն: 2017թ. նոյեմբերի տվյալներով՝ Չինաստանից Եվրոպա էլեն ուղարկվել 3,271 քառափակիսատրոն գնացքներ<sup>46</sup>:

Ամֆոփելով՝ կարելի է փաստել, որ Չինաստանը Եվրոպային կապող ցամաքային հիմնական ճանապարհներն անցնում են ԵԱՏՄ տարածքով: ԵԱՏՄ ստեղծումն ու Ռուսաստանի և Չինաստանի միջև ԵԱՏՄ-ն չինական ՄԳՄՀ-ին համակցելու որոշումը նպաստում են նաև այս ցամաքային ճանապարհների զարգացմանը, քանի որ չինական գնացքները բավական արագ են սպասարկվում ԵԱՏՄ մարսակետերում, նրանք մեկ անգամ անցնելով այդ ստուգումը Դաշտասանում կամ Ռուսաստանում՝ անցնում են նաև ԵԱՏՄ անդամ մյուս երկրների տարածքով՝ առանց հավելյալ դադարների և ֆինանսական լրացուցիչ ծախսերի: ԵԱՏՄ և ՄԳՄՀ համակցման մասին որոշումը հետապնդություն է տալիս Ռուսաստանին և Չինաստանին համագործակցել Կենտրոնական Ասիայում և խոյս տալ տարածաշրջանում գերիշխող դիրք գրանցենելու համար միմյանց դեմ պայքարելուց: ՆԵԱՏՎԿ ենթակառուցվածքների զարգացման և Կենտրոնական Ասիայում անվտանգության ամրապնդման գործում կարելու դեր է խաղում նաև ՇՀԿ-ն, որի շրջանակներում Ռուսաստանը, Չինաստանը և մյուս մասնակից երկրները փորձում են հարթել իննիրները և խորացնել համագործակցությունը:

Քառերես 1:



ՆԵԱՏՎԿ

Նոր Եվրասիական մարտադաշտություն  
կամուրջ

<sup>46</sup>3,271 Cargo Train Trips between China, Europe Made in First 11 Months of 2017, People's Daily Online English Edition, <http://en.people.cn/n3/2017/1227/c90000-9309156.html>.


Քարտ 2

ԱՄԱՋՀՆ




Քարտ 3

ԱՌԴԱԾ





Քարտեզ 6



Քարտեզ 7



Հիմնատանի և Արևելյան Արևոյի բարեկղը<sup>45</sup>

1 Map of China and East Asia, Current History, Volume 115, Issue 782

Չինաստան «Մեկ գոտի» մեջ գնապարհ և նախադաշտություն եղ համարվում:

Չինաստան-Կենտրոնական Ասիա-Արևմտյան Ասիա տևեսական միջանցք (ՊԿԱԱՏՍ)

ՊԿԱԱՏՍ-ը (քարտեզ 2) սկիզբ է առնում չինական Արևծիանից, անցնում է Կենտրոնական Ասիայի հինգ երկրներով՝ Ղազախստանով, Ղրղզստանով, Տաջիկստանով, Ուզբեկստանով, Թուրքմենստանով, ապա Արևմտյան Ասիայով հասնում է մինչև Պարսիկ ծոց, Միջերկրական ծով և Արարական ծով<sup>47</sup>:

Չին հետազոտողներ Հու Անգանը, Մա Վեյ ու Յան Յինլուքը նշում են, որ Կենտրոնական Ասիայի, Կասպից ծովի հարակից շրջանների զարգացումը և դրանց կապակցումը Մերձավոր Արևելքի հետավորություն է ընձևում այլնուրարային ճանապարհ ստանալ Մերձավոր Արևելքի ներմուծվող նավթի համար, որը կփորձացի Չինաստանի կախում Մալազյան անցնող ծովային ճանապարհներից [35, թ. 172]: Այս նպատակի իրագործելու համար կարևոր դեր է խաղում Արևծիանը, որի կենտրոնին՝ Ուրումչիին, Չինաստանի Ազգային զարգացման և բարեփոխումների հանձնաժողովի կողմից հարկացվել է Չինաստանը Եվրոպային կապող երկարության հանգույցի դերը<sup>48</sup>: Այս նպատակով 2016թ. Չինաստանի կառավարությունը Սինծիանի ենթակառուցվածքները զարգացնելու համար հատկացրել է \$24,6 մլր [29, թ. 57]:

Պետք է նշել, որ Թուրքիան, Ադրբեյջանը և Վրաստանը, 2017թ. հոկտեմբերին շահագործման հանձնելով Բարու-

<sup>45</sup> Backgrounder: Economic corridors under Belt and Road Initiative, Xinhua, 2017, [http://www.xinhuanet.com/english/2017-05/09/c\\_136268314.htm](http://www.xinhuanet.com/english/2017-05/09/c_136268314.htm)

<sup>46</sup> Xinjiang Launches Daily Cargo Train Service to Central Asia, Xinhua, 2016, [http://www.xinhuanet.com/english/2016-11/30/c\\_135870993.htm](http://www.xinhuanet.com/english/2016-11/30/c_135870993.htm)

Թթվիլսի-Կարս Երկարգիծը, ամրապնդեցին սեփական ոյիքը բր ԱՃՃ ՉԿԱԱՍՍՈ-ում, քանի որ այս միջանցքի ուղիներից մեկն անցնում է չինական Սինդիանով, Ղրղզտանով, Տաջիկստանով, Ղազախստանով, Ուզբեկստանով, Թուրքմենստանով, հասնում է դազախական Ակստան Խավահանգստ, որտեղից Կասապից ծովով միանում է Բարվին, որից հետո՝ Բարու-Թթվիլսի-Կարս Երկարգիծին և Թուրքիայի միջոցով կապվում է Եվրոպայի հետ [40, p. 7]: Կասապից ծովով գործում է նաև Թուրքմենստանի Թուրքմենբաշի Խավահանգստը, որն Աղրբեզան կատարվող բենափոխադրումների համար մրցակցում է Ակստանի հետ, ինչև էլ Բարվին մեծ հնարավորություն է տալիս մաներել այս Երկու Խավահանգստների միջև և ամրապնդել Բարվին Խավահանգստի դիրքերը՝ որպես տարածաշրջանային կարևոր բենափոխադրումների հանդույց [41]: Բարու-Թթվիլսի-Կարս Երկարգիծի շնորհիվ ՉԿԱԱՍՍՈ-ով Զինաստանից Եվրոպա բենափոխադրումը տևում է մոտ 15 օր: Այս Երկարգիծը հնարավորություն է ընձեռում տարեկան տեղափոխել 1 մին մարդ և 6.5 մին տոննա բնակչությանը<sup>49</sup>: Զինաստանը և շահագրգուժ է այս ուղու զարգացմամբ, քանի որ սա ևս մեկ այլնուրանք է դառնում առևկա մյուս ճանապարհներին [40, p. 7]:

Հետաքրքրական է, որ Զինաստանից Ուկրաինա բենափոխադրումները կատարվում են Զինաստան-Ղազախստան-Կասապից ծով-Աղրբեզան-Վրաստան-Սև ծով ուղղությամբ:

<sup>49</sup> Key link in Modern Silk Road, China Daily, 2017,

[http://www.chinadaily.com.cn/cndy/2017-11/01/content\\_33965043.htm](http://www.chinadaily.com.cn/cndy/2017-11/01/content_33965043.htm)

Այսինքն՝ Ուկրաինան շրջանցում է Ռուսաստանի կողմից վերահսկվող ՆԵԱՍԿ-ը՝ նախապատվորությունը տալով ՉԿԱԱՍՍՈ ընձեռած հնարավորություններին: ՉԿԱԱՍՍՈ ներակառուցվածքների շնորհիվ Ուկրաինան Զինաստանից սուազվող և դեսի Զինաստան փոխադրվող բենուրի համար ծախսում է 14 օր: Համեմատության համար նշենք, որ ծովային ճանապարհով տևողությունը 40 օր է [5, pp. 7-8]: Աղրբեզանը, Վրաստանը, Ղազախստանը և Ուկրաինան համաձայնագիր են ստորագրել, ըստ որի՝ ՉԿԱԱՍՍՈ Տրանսկասպյան տրանսպորտային ուղին բենափոխադրումների սակագների վեջանակներ են սահմանվել [39]:

Վրաստանը կառուցում է նաև Անակլիա խոր ծովային նավահանգիստը, որն ըստ վրացական կողմի՝ դառնալու է ՄԳՄՃ կարևոր տրանսպորտային ներակառուցվածքներից մեկը<sup>50</sup>: Զինաստանի Դեստական Էներգետիկայի ներդրումների կորպորացիան հետաքրքրված է Անակլիայում ներդրումներ կատարելու, ինչպես նաև դրան հարող տարածքում արդյունաբերական պարկ կառուցելու գործում [21, p. 84]:

Բարուն, իր հերթին, կառուցել է Աղրբեզանն Իրանին կապող առաջին Երկարգիծը, որով 2017թ. առաջին զարգըն աղրբեզանական Աստարայից ուղևորվեց իրանական հատվածում գտնվող, մինչույն անունը կրող վայրը: Սակայն աղրբեզանական Երկարգիծը իրանականին միացելու համար անհրաժեշտ է ավարտին հասցնել Աստարա-Ռաշդ-Ղազվին հասովածը: Ինչպես նշել է Իրանի տրանսպորտի փոխադրա-

<sup>50</sup> Anaklia Development Consortium, <http://www.anakliadevelopment.com/>

բար Քաջանը, Աղրբէզանի հետ համաձայնություն է ձևոք բերվել, որ Բարոն Սստարա-Ռաշը 164 կմ երկարովի կառուցելու համար ներդնի \$500 մլն<sup>51</sup>, իսկ Թեհրանը՝ \$500 մլն։ Այս ծրագիրն իրագործելու հաստատակամության մասին խոսել էր նաև Աղրբէզանի նախագահ Էլհամ Ալիևն Իրանի կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Մահմուդ Վահեզի հետ հանդիպման ընթացքում<sup>52</sup>։ Աստարա-Ռաշը՝ Նազինի երկարօճի կառուցման դեպքում աղրբէզանական երկարովի կվապքի իրանականի հետ, ինչի արդյունքում Պարսից ծոցը իրանական և աղրբէզանական երկարություների միջոցով կհամակցվի ուսուական երկարություների հետ, այսինքն՝ իրականություն կդառնա նաև Հյուսիշարավ տրանսպորտային միջանցքի ստեղծման հիմնական նպատակը՝ հենկական Մումբայը կապել Մուսլիմայի հետ։ Իրան-Աղրբէզան երկարօճի ՀԿԱԱՍՍՍ շրջանակներում կօգտագործի նաև ջինական կողմը։

ՀԿԱԱՍՍՍ շրջանակներում որպես դեպի Եվրոպա տարանցիկ երկիր ակտիվանում է նաև Իրանը։ 2016թ. փետրվարին 32 բեռնարկղ պարունակող գնացքը ջինական Ջըժիան նահանջեց հասավ իրանական Սարախս քաղաք՝ անցնելով Ղազախստանի և Թուրքմենստանի տարածքով<sup>53</sup>։ 2017թ.

<sup>51</sup> Иран и Азербайджан выделят кредит на строительство ж/д Решт-Астара по 500 млн. долларов. Информационное агентство Исламской Республики (ИРНА), 2016, <http://www.irna.ir/ru/News/3574156>

<sup>52</sup> <http://www.irna.ir/fa/News/82467581>

<sup>53</sup> First Train from China to Iran stimulates Silk Road Revival, Xinhua, 2016, [http://news.xinhuanet.com/english/2016-02/16/c\\_135101037.htm](http://news.xinhuanet.com/english/2016-02/16/c_135101037.htm)

ԴԻԱԱՍՍԱՆ «Մեր Կույ, ՄԵՐ ՃԱՄԱՊԱՐ» ՆԱԽԱՏԵՇՈՒՇԻՇՑՈՒՆԵ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ՝ Փետրվարից Ուրումչից Ալմարա են ուղարկվում քենսաւար Ճեղիսթացներ, որոնք առաջին անգամ Ալաշանբուի հսկչ անցագրային կետի (ՀԱԿ) փոխարեն սահմանը հատեցին Խորդոսի ՀԱԿ-ով։ Հետազոտություն այս երթուղին ընդլայնվեց մինչև Թուրքիա և Իրան [38, с. 280-281]։ Համեմատության համար նշենք, որ զեացեները Զինաստանից Իրան են հանում 12 օրում, իսկ Շահնայի նավահանգստից ծովային ճանապարհով՝ 30 օրում<sup>54</sup>։

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ Կենտրոնական Ասիայի երկրները, Իրանը, Աղրբէզանը, Թուրքիան և Վրաստանը գործնական քայլեր են կատարում շինական Մ&ՏԳ ՀԿԱԱՍՍՍ-ում մեփական դիրքերը որպես տարածություն երկիր ամրապնդելու ուղղությամբ՝ զգալի ներդրումներ կատարելով տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման գործում։ Զինաստանը նպաստելով ՀԿԱԱՍՍՍ տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացմանը՝ փորձում է այլընտրանային ցամաքային ուղիներ ստեղծել, որոնք կարող են մրցակցել Միջանց հետ, ինչից կշահի առաջին երթին ջինական կողմը։

ՀԿԱԱՍՍՍ հետազու զարգացումը բախվում է Շուսաւատանի պիտուական շահին, քանի որ այս տնտեսական միջանցքի պատճառով Զինաստանը Եվրոպային կապող ուսուական երկարօճերին այլլնտրանը է դարձել, ինչպես նաև այս եր-

<sup>54</sup> For China's Global Ambitions, Iran Is at the Center of Everything, The New York Times, 2017, <https://www.nytimes.com/2017/07/25/world/middleeast/iran-china-business-ties.html>

կիր մեծացնում է իր ազդեցությունը Կենտրոնական Ասխայում գտնվող ԵԱՏՄ երկներում: Վերօշարադրյալի վերաբերյալ Միջազգային գործերի ռուսաստանյան խորհրդի զիսավոր տևորն Անդրեյ Կորտունովը հետևյալ կարծիք է հայտնել: «Չինացիները հավաստիացնում են, որ ՄՃԳ ծրագիրն ինտերացիոն չէ, ուստի այն չի կարող հակադրվել, քայլ կարող է փոխացնել ԵԱՏՄ-ին, որի շնորհիվ նախաձեռնությունը կարող է դառնալ տնտեսությունների զարգացման կարևոր գոտի»: Այնուամենայնիվ, Կորտունովն ավելացրել է: «Քրականում ԵԱՏՄ-ից է կախված, թե ինչպես հետագայում կզարգանան իրադարձությունները, եթե ԵԱՏՄ-ն դանդաղ զարգանա, ապա ՄՃԳ-ն ավելի կարևոր կդառնա, և վասն կա, որ չինական տնտեսությունը կուլ կտա այս գոտում ընկած տնտեսությունները» [59]:

#### Չինաստան-Մոնղոլիա-Ռուսաստան տնտեսական միջանցք (ՉՄՌԸ)

ՉՄՌԸ (քարտեզ 3) գաղափարը 2014թ. Տաջիկստանի մայրաքաղաք Դուշանեկում առաջարկել է չինական կողմը Չինաստանի, Ռուսաստանի և Մոնղոլիայի դեկավարների եռակողմ հանդիպման ընթացքում: ՉՄՌԸ-ն ունի երեք պետություններն իրար կապող հիմնական երկու ճանապարհային գարկերակ:

1. Առաջինն անցնում է Չինաստանի Թիանշեին-Նույի երթուրով դեպի Հոնհեո և այսուհետից շարունակվում դեպի Մոնղոլիա ու Ռուսաստան:

ՉԻՆԱՍՏԱՆԻ «ՄԵԿ ԳՈՅՆ, ՄԵԿ ՃԱՐԱՊԱՐՀ» ՆԱԽԱՉԵՇՈՒՆԻՇՑՈՒՆԻՑ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

2. Երկրորդ ուղին հետևյալն է: Չալիան-Շենյան-Չախցին-Խարբին-Մանջունովի (Չինաստան)-Չինու (Ռուսաստան):

ՉՄՌԸ շրջանակներում Պեկինի, Ռուսական Բատորի և Մուսկվայի համագործակցության հիմնական ուղղություններից են՝ բնուափոխադրյան համար և ախտատեսված ենթակառուցածների զարգացումը, նավահանգիստների շինարարությունը, մաքսային և սահմանային համատեղ ստուգումները, արդյունաբերության ոլորտում ներդրումները, առևտուրը, մշակութային և երեք երկների բաղաքացիների փոխադարձ շփումների ակտիվացումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը<sup>55</sup>:

2015թ. մայիսին շահագործման հանձնվեց Զամիին-Ռուսդ-Ռուսական Բատոր արագընթաց ճանապարհը, իսկ 2016թ. օգոստոսին տեղի ունեցավ Ռուսական Ռուսաստան-Ռուսակառու (Մոնղոլիա)-Չինաստանի բնուափոխադրյան համար և ախտատեսված ճանապարհի բացումը, որի երկարությունը հասնում է 2152 կմ-ի [21, p. 78-89]:

ՉՄՌԸ հիմնական բարդություններից է ռելսուղիների լայնության տարրերությունը: Եթե Չինաստանում այլ 1435 մմ է, ապա Ռուսաստանում՝ 1520 մմ, իսկ Մոնղոլիայում՝ 1524: Անհրաժեշտություն է առաջանալ փոխել վարենքները կամ տեղադրել այլ անիվներ, որոնք համապատասխանում են տվյալ երկարգծի ռելսուղու չափերին [38, c. 279]: Ըստ իս-

<sup>55</sup> Backgrounder: Economic corridors under Belt and Road Initiative, Xinhua, 2017, [http://www.xinhuanet.com/english/2017-05/09/c\\_136268314.htm](http://www.xinhuanet.com/english/2017-05/09/c_136268314.htm)

Չինաստանը ՉՍՌԾՄ զարգացման միջոցով փորձում է իր ազդեցության գոտում ընդգրկել նաև Մոնղոլիան, որի հետ հարաբերությունների սերտացման հետաքրքրություն են ցուցաբերում նաև Ճապոնիան և ԱՄՆ-ը: Մոնղոլիան ընդգրկելով ՄՀՏԳ շրջանակներում՝ Ռուսաստանի հետ համատեղ իրականացվող ծրագրում, ներդրումներ կատարելով՝ Պեկինը հետաքրություն է ստանում ապահովագրել իր հյուսիսային սահմանները, զարգացնել յյուսիսում գտնվող՝ մոնղոլներով բնակեցված, Չինաստանի նահանգը հանդիսացող Ներքին Մոնղոլիան, ինչպես նաև Ռուսաստանի հետ հաղորդակցության հաստատման ևս մի ուղի զարգացնելու որն անցնում է Մոնղոլիայի տարածքով:

### Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցք (ՉՊՏՄ)

Չինաստանը ՄԳՄ շրջանակներում խորացնում է քաղաքատնտեսական հարաբերությունները՝ Պակիստանի հետ, որը Չինաստանի համար կարևոր էշանակություն ունի, քանի որ Խորամարդի հարաբերությունները լարված են Պեկինի տարածաշրջանային մրցակցի՝ Չինկաստանի հետ:

Չինաստանի դեկավարությունը՝ 2015թ. ապրիլին հայտարարեց, որ Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցքում (քարտեզ 4) \$46 մլրդ-ի ներդրումների է իրականացներու: Այս գումարի 76%-ը պետք է ներդրվի Պակիստանի Էներգետիկ համակարգում, իսկ 24%-ը՝ ճանապարհների և հաղորդակցությունների ոլորտում [42, p. 31]: Ինչպես նշվել է ՄՀՀ դեկավարության կողմից՝ Չինաստան-Պակիստան

Չինաստան-ՄԵԿ գոտը, ՄԵԿ ճնշակայություններից են, և ՄՀՀ-ն հետաքրքրված է՝ Պակիստանի Էներգետիկ համարդրումներ կատարելով<sup>56</sup>: Խորամարդը ՉՊՏՄ կարգում ներդրումներ կատարելով՝ Խորամարդը շրջանակներում շինական ներդրումներին ու չին աշխատակիցներին պաշտպանելու համար կենտրոնացրել է 12 հազ.-ի հասեղ Հատուկ էշանակության գորամիավորում, որի թիվը նախատեսված է հասցնել 30 հազ.-ի [21, p. 77-78]:

Հսկ Մին Գուանչենի՝ Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցքի նպատակներից է ՄՀՏԳ-ն կապել ՄԾՀ-ին [2, p. 146]:

Չինաստան-Պակիստան տնտեսական միջանցքը համարվում է ՄԳՄ պիլոտային ծրագիրը, այսինքն՝ Չինաստանը պատրաստվում է ՉՊՏՄ-ում ձևոր բերված փորձն օգտագործել ՄԳՄ մասնակից այլ երկրներում [46, p. 6]: ՉՊՏՄ շրջանակներում Մինչինան և Պակիստանի միջև հզոր տնտեսական կապեր են ստեղծվում [46, p. 4]:

Պակիստանի հետ խորացներով քաղաքատնտեսական համագործակցությունը, զարգացնելով վերջինս ենթակառուցածքները՝ Չինաստանը լուծում է երեք հիմնական խնդիր:

1. Չին-պակիստանական հարաբերությունների զարգացման արդյունքում աշխատատեղեր են ստեղծվում և ներդրումներ են կատարվում Մինչինանում, որուել աղբատությունն ու գործազրկությունը մեծ ծավալների են հասնում: Մինչինան սոցիալական ծանր իրավիճակն

<sup>56</sup> Q & A about the Silk Road Fund's First Project Investment, 2015,  
<http://www.silkroadfund.com.cn/enweb/23809/23812/23942/index.html>

- օգտագործում են ահարեկշական կազմակերպությունները, որոնք կարողանում են տեղի խալամադավան ուղղութերին ներքութեավել ահարեկշական գործողություններում: Վերոհիշյալ հանգամանքը շահարկում են նաև ուղղուր ազգայնականները, որոնք փորձում են աხջատողական շարժումներ հրահրել՝ պատճառաբանելով, որ եթե Մինծիանն անկախանա Զինաստանից, ապա բնականու զարգանալու հենարանարքը երկար ժամանակ խաղարքու է եղել նաև նԱՀՄ-ի և Թուրքիայի ձեռքին ըստին Զինաստանի: Այսպիսով, ՄՃՏԳ Շրջանակներում, զարգացնելով Մինծիանի տնտեսությունը՝ Պեկինը նախուակ ունի նաև լավ պայմաններ ստեղծել այս շրջանում՝ նվազեցնելով տեղի բնակչության դժգոհությունն ու ահջատողական տրամադրությունները:
- Ինչպես եշտում է Մին Գուանչենը, «Զինաստան-Պակիստան տնտեսական միջանքը զարգացումը պետք է միախառնվի Զինաստանի հյուսիս-արևմուտքում և հատկապես Մինծիանում տարվող աշխատանքների հետ» [2, p. 158]:
2. Զարգացնելով և հզորացնելով Պակիստանը՝ Պեկինն իր ազդեցության գոտում է պահում Խալամարաշը, առավելություն է ստանում տարածաշրջանային հիմնական հակառակորդի՝ Հնդկաստանի նկատմամբ, հետաքաղաքություն է ստանում օգտագործել Պակիստանի տա-

Զինաստան-ԱՄԿ գոտի, ՄԵԿ ձևակարգը՝ ՆԱԽԱՇԵՐՈՒՄՈՒՆ և ՀԱՅԱՍՏԱՆԸ

բածքն ու զինված ուժերը Հնդկաստանի դեմ հնարավոր ռազմական բախման դեպքում:

3. Պեկինը ներկայում կառուցում է Զինաստանի Կաշգարը Պակիստանի Գվաղար նավահանգստին կապող, ինչպես նաև այդտեղից դեպի Կարաչի նավահանգիստ ձգվող երկաթուղիները [46, p. 14], որոնք Զինաստանին հնարավորություն կընձեռն ցամաքային ճանապարհներով սեփական բնուները տեղափոխել Արաբական ծով:

Այս երկաթուղիները հնարավորություն կընձեռն Զինաստանի՝ ցամաքային ճանապարհներով սեփական բնուները տեղափոխել Արաբական ծովում գտնվող Պակիստանին պատկանող Գվաղար և Կարաչի նավահանգիստներ:

Արդյունքում՝ Զինաստանը կկարողանա կրծատել Մերձավոր Արևելքից ստացվող և այնտեղ առարկող բնուների փոխադրման ժամանակը և այլընտրած ստեղծել Մալակայի նեղուցին, որով անցնում են Զինաստանի տնտեսության զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող, Մերձավոր Արևելքից ներմուծվող հերթակիրները [42, p. 7]: Այս նոր ճանապարհի ուղիմավարական նշանակությունն այն է, որ եթե ԱՄՆ ռազմածովային ուժերի կողմից վերահսկվող Մալակայի նեղուցը [42, p. 7] փակեն ԱՄՆ-ը և դաշնակիցները՝ հնարավոր հակամարտության պատճառով, սա Զինաստանը կօգտագործի որպես այլընտրանք:

## Չինաստան-Հնդկաշխն թերակղզի տնտեսական միջանցք (ՀՀԹԾՄ)

ՀՀԹԾՄ-ն (քարտեզ 5) սկիզբ է առնում Մարգարտի գետի դելտայից, ձգվում է դեպի Նախչևն-Գուլանկան արագընթաց ճանապարհը և Նախին-Գուլանցոու ձեպընթաց երկարության վեցանինով և Փինսիանով հասնում է դեպի Հանոյ և Սիենգապուր: Այս կամուրջն անցնում է Վիետնամով, Լաոսով, Կամբոջայով, Թաիլանդով, Մյանմարով և Մալազիայով: Այն նապատակ ունի խթանել Չինաստանի և ՀԱԵԱ անդամների հարաբերությունների գարգացումը<sup>57</sup>:

2014թ. դեկտեմբերի 20-ին Չինաստանի վարչապետ Լի Քշիանը Սեն Սեկոնզի ենթատարածաշրջանի (ՄՄԵ) տնտեսական հիմքերորդ զարգացմողվայր հայտարարեց, որ Չինաստանը պատրաստվում է ներդնել \$1 մլրդ ՄՄԵ-ում: Նա հավելեց, որ Չինաստանի առաջ քաշած ՄՃԳ և ՄԾՀ զարդարանքները ենթատարածաշրջանում հարաբերությունների խորացման եղանակաբառություններ են ընձեռում: Երկրոյա զարգացմողության ընթացքում Չինաստանն ու Թաիլանդը երկարուղային համագործակցության վերաբերյալ Փոխնարար ընթանական հուշագիր ստորագրեցին, ըստ որի՝ Չինաստանը հնարավորություն է ստանում ներդրումներ կատարել Թաիլանդի երկարուղիներում<sup>58</sup>:

<sup>57</sup> Backgrounder: Economic corridors under Belt and Road Initiative, Xinhua, 2017, [http://www.xinhuanet.com/english/2017-05/09/c\\_136268314.htm](http://www.xinhuanet.com/english/2017-05/09/c_136268314.htm)

<sup>58</sup> China Commits \$1 bn to Greater Mekong Subregion, Chinadaily, 2014, [http://www.chinadaily.com.cn/world/2014/livisitkt/2014-12/20/content\\_19133622.htm](http://www.chinadaily.com.cn/world/2014/livisitkt/2014-12/20/content_19133622.htm)

## Չինաստան-Մեծ Չին, Մեծ ՀԱՄԱՐԴՐՈՒՄ: ՆԱԽԱՏԵՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

2015թ. հունվարի 9-ին չինական Սահինայա Ռաջապակ-սան, որի օրոր չինական ուղմածովային ուժերի սուզանավերը կայանում էին Շրի Լանկայում, ընտրությունների ժամանակ պարտություն կրեց Մաֆրիպալա Սիրիսենայից, որը հայտարարեց, որ պատրաստվում է ավելի հավասարակշռված բաղադրականության վարել Պակիստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի հետ: Սիրիսենայի իշխանության գործց հետո չինական շինարարական ընկերության՝ Կոլուրյի մուտքադիր բաղադրի ապագան դարձել է մշուշու [36, p. 100]:

Այսպիսով, Չինաստանը փորձում է դիրքերն ամրապնդել նաև Հնդկային թերակղզում: Կարելի է նշել, որ այս տարածաշրջանում Պեկինը բախվում է որոշակի խնդիրների, որոնցից կարելի է նշել Շրի Լանկայում տեղի ունեցող զարգացումները: Վերջինի հետ Չինաստանը հույսեր էր կապում առ այն, որ Շրի Ջայավարդինեպուրա Կոտեն հնարավորություն կտա Պեկինի սեփական ուղմածովային ուժերը տեղակայել Հնդկական օվկիանոսի իրեն պատկանող ջրային տարածքներում, բայց Շրի Լանկայում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները խոչընդոտեցին Չինաստանի հրագործմանը: Այս գործընթացում առկա էր նաև Հնդկաստանի դրավագությունը, որին ձեռնուու չեն նաև Հնդկաստանի դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում:

## Բանգլադեշ-Չինաստան-Հնդկաստան-Մյանմար

### տնտեսական միջանցք (ԲՀՀՄԾՄ)

ԲՀՀՄԾՄ (քարտեզ 6) ստեղծման զարդարանք սկիզբ է առնում

1999 թվականից, երբ հիմնադրվեց ԲՀՀՄ համաժողովը՝ ԲՀՀՄՍՄ-ն ԱՃՏԳ շրջանակիներում ակտիվացնելու համար 2013թ. դեկտեմբերին Չինաստանը Քունչին քաղաքում Բանգլադেշի, Հնդկաստանի և Մյանմարի հետ համաժողով կազմակերպեց, որի հիմնական նպատակն էր համատեղ ծրագրեր իրագործել բնունափոխադրման, եներգետիկայի, հեռահարդարկության ոլորտներում [21, p. 76]:

Տեսագրում Չինաստան-Մյանմար \$20 մլրդ արժողությամբ երկարագիծ կառուցման ծրագիրը ձևադրվեց ցուցերի պատճառով, որոնց միջոցով ցուցարքները Մյանմարի կառավարությանը ստիպեցին հետ կանգնել Պեկինի հետ ձեռք բերված պայմանավորվածությունից [17]:

2016թ. հոկտեմբերին Սի Շինփինը ժամանեց Բանգլադেշի մայրաքաղաք Դաքա, որտեղ կերեց 27 պայմանագիր և Փոխնարկումնան համաձայնագիր՝ \$13.6 մլրդ ընդհանուր արժողությամբ: Համագործակցության պայմանավորվածությունները մեծ մասամբ վերաբերում էին ՄԿԱՀ շրջանակներում ֆինանսական, ենթակառուցվածքային, էներգակիրների, տեղեկատվական ծրագրերի իրագործմանը: Կարևոր է նաև նշել, որ Վերջին տարիների ընթացքում Բանգլադեশը Պակիստանից հետո Չինաստանում արտադրված գների երկրորդ խորհրդ գերող է<sup>59</sup>: ԱՃՏԳ ԲՀՀՄՍՄ հատվածում Չինաստանը հանդիպում է Հնդկաստանի դիմակայությանը, որն

<sup>59</sup> Arafat Kabir, Chinese President Xi Jinping's Visit To Bangladesh Gives Boost To Bilateral Relations, Forbes, 2016, <https://www.forbes.com/sites/arafatkabir/2016/10/14/chinese-president-xi-jinpings-visit-to-bangladesh-gives-boost-to-bilateral-relations/#5b5b55f56ccb>

Չինաստանը՝ «Մեր գործի ՄԵԿ ՀԱՆՐԱՊԵԱՆ» ՆԱԽԱԶԵՐՈՒՈՒԹՅՈՒՆԸ Եղ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

ազգեցություն ունի նաև տարածաշրջանի երկրների վրա և կարգանում է խոշնդրութել ՄԿԱՀ հետագա զարգացմանը: Հնդկաստանը դեմ է հանդես գալիս ՄԿԱՀ-ին պատճառաբանելով, որ այն անցնում է Պակիստանի և Հնդկաստանի միջև վիճելի տարածք հանդիսացող Քաշմիրով:

3.2 «ՀՀ-ող դարի մետարքի ծովային ճանապարհ» ուղիները նշագետ նշում է Սի Շինփինը. «Հարուստ դարնայում համար անհրաժեշտ է ճանապարհներ կառուցել, իսկ ծովափելյա շրջաններում՝ նավահանգիստներ»<sup>60</sup>:

Ալյոնական շրջանում ՄԿԱՀ հիմնական թիրախը ՀԱԵԱ-ի հետ տնտեսական համագործակցության խորացումն էր: Սրա մասին խոսելով 2013թ. Չինաստան-ՀԱԵԱ ցուցահանդեսի ժամանակ՝ Չինաստանի վարչապետ Լի Քշիանը նշեց, որ դեպի ՀԱԵԱ ուղղված ՄԿԱՀ ստեղծումը կնպաստի տարածաշրջանի երկրների զարգացմանը [6]: Սակայն ընդամենը մի քանի տարվա ընթացքում ՄԿԱՀ-ն դուրս եկավ տարածաշրջանյին մակարդակից, և ներկայում ՄԿԱՀ մեկ ուղին, սկսվելով Հարավշինական ծովից և անցնելով Հնդկական օվկիանոսը, հասկամ է Եվրոպա, իսկ մյուսը, անցնելով Հարավշինական ծովով, դուրս է գալիս Խաղաղ օվկիանոս [6]: Չին հետագույն Զան Ցունինը նշում է, որ Ասիա-խաղաղօվկիանոսան տարածաշրջանը Չինաստանին մեծ հնարավորություններ է տալիս՝ վերջինիս վարած «արտաքին աշ-

<sup>60</sup> China Exclusive: Xi urges promoting 21st Century Maritime Silk Road, Xinhua, 2017, [http://www.xinhuanet.com/english/2017-04/20/c\\_136223415.htm](http://www.xinhuanet.com/english/2017-04/20/c_136223415.htm)

խարիს բացվելու քաղաքականության՝ ժամանակաշրջանում: Այս տարածաշրջանն է Զինաստանի արտաքին առևտուրի հիմնական շուկան: Անվտանգային տեսանկյունից այն կարևոր նշանակություն ունի Զինաստանի համար, և վերջինս, սեփական ռազմավարությունը ճշգրտելու նպատակով, հետևում է Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում տեղի ունեցող զարգացումներին [11, p. 21]: Զինաստանի Ազգային ժողովրդական կենցրեսի Արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նեկավար, նախկին ֆոխարտօքոքնախարար Ֆու Յինը նշում է, որ ԱՄՆ-ը թերահավատ է Հարավ-Հինական ծովում Զինաստանի մտադրությունների նկատմամբ: Ըստ նրա, ի դեմք ԱՄՆ-ի շինացիները տեսնում են «ճարպիկ արծվի», որը ներխուժում է «շինական շուկա» և խափանում է մինչ այդ Զինաստանի և նրա հարևանների միջև ընթացող բանակցությունները, որոնց նպատակն առկա տարածայնությունների և խնդիրների համար լրացնումներ գտնելի է [47, p. 87]:

«Խոտարիք ճանապարհ տեսնական գոտու» և «21-րդ դարի մետարիք ծովային ճանապարհի» համատեղ կառուցման տեսլականն ու գործողությունները» փաստարդում ՄՈՃ զարգացման վերաբերյալ նշված է, որ Զինաստանը պետք է խթանի Շանհայի պիլտուային ազատ առևտորի գոտու զարգացումը, օժանդակի, որ Ֆուծիան նախանզգ վերածվի ՄՈՃ կենտրոնի, նպատի Զինհայի (Շենժեն), Նանչայի (Գուանչուո), Հընչինի (Չուհայ), Փինթանի (Ֆուծիան) արտաքին աշխարհի հանդեպ բացվելուն, և որ խորացվի համագոր-

շուականությունը և առաջարկությունը նպաստական ծավալու և արտադրությունը Հայկական կազմակերպությունից հետո: Դեկինը նպատակ ունի նաև ՄՕՃ շրջանակներում զարգացնել Ջրծիանի ծովային տեսնական զարգացման ցուցարական գոտին, Ֆուծիանի ծովային տեսնական պիլտուային գոտին և Ջոուչան կղզեխմբի նոր շրջանը, իսկ հետազայտմ Հայնան նահանգը վերածել միջազգային տուրիզմի կարևոր հանգույցի [6]:

Ինչպես նշում է Մինչ Գուանչենը, «Զինաստանը պետք է ծովային ուժ դառնալու սեփական ռազմավարությունը կապի «21-րդ դարի մետարիք ծովային ճանապարհի» իրազորման հետ» [2, p. 158]:

Արտաքին աշխարհի հետ առևտորի հիմնական կենտրոնները տեղակայված են մեծ մասամբ Զինաստանի արևելքում և հարավային ծովափնյա շրջաններում, հատկապես հարավ-արևելքում: Այս պատճառով երկիրը կախում ունի ծովային սահմանափակ ուղիներից: Զինաստանի ապրանքների ներկրման և արտահանման 87.4%-ը, արտահանման 86.4%-ը և ներկրման 88%-ը տեղի է ունենալ ծովափնյա շրջանների միջոցով՝ Լիանսենից մինչև Գուանչոն նահանգ:

Ինարկե, մինչև 2013 թվականն է, երբ պաշտոնապես հայտարարվեց ՄՕՃ մեկնարկը, ծովային ուղիները գործում էին: Այս նոր ձևաշափոր հնարավորություն է տալիս Զինաստանին, վերաբերությունները ծովափնյա երկների հետ, ներդրումներ կատարել կրանց նապահանգամբ և ստեղծելով ընդհանուր տնտեսական հետազոտությունները:

բրդություններ՝ այս երկրներին պահել Պեկինի ազդեցության գոտում և ապահովել ծովային ճահապարհների ախսափական աշխատաքարտը: Ակտիվացնելով ՄԾՃ-Ն Շինաստանը մեծացնում է սեփական նավահանգստների նշանակությունը, արդիականացնելով դրանք՝ Պեկինը զարգացնում է թե՛ ծովափնյա նահանգները, թե՛ կարողանում է իրազործել ծովային ուժ դառնայու սեփական ռազմավարությունը:

### 3.3 «Մեկ գոտի, մեկ ճահապարհում» Հայաստանի ենթակառուցվածքների ընդունումը և հետանկարները

Առաջ քաշելով ՄԳԱՃ նախաձեռնությունը՝ Շինաստանը նպատակ ունի այս նախաձեռնությանն ակտիվիտեն մասնակցող երկրների հետ ստեղծել մի ընդհանոր տնտեսական դաշտ, որի արդյունքում էլ բացվում էնան չինական անձայրածիր շուկան: Այս աշխիցից պետք է փորձի օգոտվել նաև Հայաստանը, բայց, համեմատնեապա, ըստ Շինաստանի տանը իր նախարարության տվյալների՝ վերջին շրջանում տնտեսական հարաբերություններում նկատվում է անելում: 2016թ. Հայաստանը Շինաստան է արտահանել \$96 մլն-ի ապրանք, ինչը 40%-ով քիչ է նախորդ տարվանից, իսկ Շինաստանից Հայաստան է արտահանվել \$358 մլն-ի ապրանք: Շինաստանը Հայաստանում վերջին անգամ տնտեսական բնույթի նշանակալի ներդրում է կատարել 2015թ., եթե մետաղուրգիայի մեջ ներդրել էր \$7.51 մլն, բայց համաշխարհային շուկայում մետաղի գիֆ անկման պատճառով հոնկունցյան ընկերությունը դադարեցրել է աշխատանքները [32]:

Հայաստանը ՄԳԱՃ տրանսպորտային ենթակառուցվածքներին միանալու համար պետք է գործնական բայլեր իրականացնի սեփական ճահապարհները, երկարութիւնները զարգացնելու միջոցով: Ուստի, կարևոր է չուսիս-Հարավ ճահապարհային միջանցքի ներդրումային ծրագրի վերջնական և հնարավորինս արագ իրազործումը, որը խսչոր ենթակառուցվածքներին ծրագրի է և նպատակ ունի միջազգային չափանիշները բավարարող 556 կմ ընդհանուր երկարությամբ Մեղրի-Երևան-Բայլու ավտոճանապարհի միջոցով կրկի հարավ կապել հյուսիսի հետո<sup>61</sup>: Պետք է նշել, որ այս ծրագրի դաշտագույն շարժվում և կառուցվել է ընդամենը 31 կմ, ընդհանառություններ են հեցում նաև անորակ ճահապարհաշինության մասին<sup>62</sup>: Այս խնդիրները շուտափոյթ լուծման կարիք ունեն, այլապես կլուզընդունեն Հայաստանը տարանցիկ երկիր դարձնելու նպատակին:

Անհրաժեշտ է այսինք ձևանարկել նաև հայ-իրանական երկարությունը շինարարությունը սկսելու գործում, որի մեկնարկի համար կարելի է Հայաստանում և սփյուռքում կազմակերպել դրամահավաքիներ, որին բյուջեից գումարներ ավելացնելով՝ սկսել Հայաստան-Երան երկարագիծ շինարարությունը: Այսուհետև, եթե ի հայու կզան առաջնի արդյունքները, փորձել վարկեր ստանալ վերը՝ երկրորդ զինում

<sup>61</sup> «Հյուսիս-Հարավ ճահապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» մասին,  
<http://www.northsouth.am/>

<sup>62</sup> Հյուսիս-Հարավ ճահապարհի Երևան-Արտաշատ հասվածի վերին շերտն արդեն բարային է: «Ազգային բյուջե» ռայոնակայան, 2018,  
<https://www.azatutyun.am/a/28980953.html>

թվարկված շինական այև ֆինանսական կառույցներից, որոնք կարող են ՄԳՄԸ շրջանակներում ներդրումներ կատարել ենթակառուցվածքների գարգաման գործում:

Հաշվի առնելով Վրաստավի՝ Արխազիայի և Հարավային Օսիայի նկատմամբ քաղաքականության փոփոխությունը, ըստ որի՝ վրացական կողմը ջանում է փափուկ քաղաքականության<sup>63</sup> միջոցով հաշոտության հասել երանց հետ, հարկ է փորձել ուսու-վրացական հարաբերություններում միջնորդի դեր խաղալով՝ կարգավորման տանկել երկու երկրների միջև առկա խնդիրները, որի արդյունքում կրացվի նաև ուսու-վրացական երկարցին ու կմեծանա հայ-իրանական երկարգծի կառուցման շահավետությունը, քանի որ հայկական երկարգծերը միմյանց հետ կկապէն իրանական, վրացական ու ռուսական երկարությները:

Հայաստանն, իր հերթին, հնարավորություն կստանա մասնակցել ՄԳՄԸ-ին որպես տարանցիկ երկիր, որի շնորհիվ կմեծանա Հայաստանի քաղաքական նշանակությունը, վերջինի համար հնարավորություն կստեղծվի գարգացնել սեփական տրանսպորտային ենթակառուցվածքները, Հայաստանի տարածքով փոխադրվող բեների շնորհիվ հավելյալ գումարներ կմուտրագրվեն Հայաստանի բյուջե:

Հետազոտմ Հայաստանը պետք է փորձի բանակցել և սկզբանական շրջանում բեներափոխադրումների սակագների վճարման համար ընդհանուր պայմաններ սահմանել ՄԳՄԸ

մյուս մասնակից երկրների հետ: Վերոհիշյալ երկրները պետք է փորձեն պայմանակիրվածություն ձեռք բերել, որ մարսակետերում բնոների ստուգման ընդհանուր համակարգ ներդրվի, որպեսզի օրինակ՝ բեները, ստուգում անցնելով Չինաստանում կամ Հայաստանում, անարգել անցնեն նաև մյուս մասնակից երկրների տարածքով՝ առանց հավելյալ դադարների և ֆինանսական լրացուցիչ ծախսերի: Անհրաժշշու է ստեղծել ենթակառուցվածքներ, որոնց միջոցով կլուծվի ՄԳՄԸ մասնակցի երկրների ուղևողիների շախտերի տարբերությունների հարցը: Հայ-չինական համագործակցության խորացումը ճանապարհների և երկարգծերի համատեղ գարգացման գործում համապատասխանում է նաև Սի Շինփինի՝ ՄԳՄԸ-ի վերաբերյալ հայտարարած փիլիստիայուրիան տրամաբանությանը, ըստ որի՝ պետք է գարգանել և ստեղծել նոր տրանսպորտային ուղիներ, որոնք աշխարհի տարբեր տարածաշրջաններն իրար կապող կարևոր օղակներ կդանանա և կիրանեն տնտեսության գարգացումը [4, pp. 315-319]:

ՄԳՄԸ շրջանակներում գարգանում է նաև «Տեղեկատվական մետարքի ճանապարհը», որը հնարավորություն է ընձեռում օպտիկամանրաբելային մալուխով գարգանել ենթասիական տարածաշրջանի հեռահաղորդակցային ենթակառուցվածքները [21, p. 85]:

Նպատակահարմար է Չինաստանի կիրեռուարածիք վարչության առաջարկել, որ Հայաստանը և Միանա «Մետարքի թվային ճանապարհ» և «Մետարքի ճանապարհը կի-

<sup>63</sup> Government of Georgia, New Peace Initiative “Step Toward a Better Future,” 2018. [http://gov.ge/index.php?lang\\_id=ENG&sec\\_id=497&info\\_id=64442](http://gov.ge/index.php?lang_id=ENG&sec_id=497&info_id=64442)

բեռուարածքում» և ամսաձեռնորդայն իրազործմանը, ինչպես նաև համագործակցության եզրեր գունվեն Զինաստանի «Համացանց պյուսի» և Հայաստանի Թվային փոխակերպման ռազմավարության միջև:

Նպատակահարմար է, որ Հայաստանը ու Զինաստանը 5G բջջային ցանցի զարգացման մասին համատեղ հոշակագրի ընդունեն, բայց որի երկու կողմերը կիրանեն այս ոլորտում համատեղ հետազոտությունները:

Վերոշարադրյալի վերաբերյալ կիրեռանվազության և թվային ռազմավարությունների մշակման փորձագետ Անահիտ Պարզյանը նշել է. «Արդի աշխարհում զարգանում է էլեկտրոնային առևտուրն ու մեծանում է թվային տեխնոլոգիաների միջոցով դրամային փոխանցումների քանակը. որոնք սպասարկելու գործում ՄԳԱԸ-ում առաջատարներից են չինական կազմակերպությունները. Օրինակ՝ կարելի է նշել «Ալիքրա» կազմակերպությունները՝ «Այլիփեյ», և «Թեկստրին»՝ իր «Վիշարժիե» առցանց գնարումների համակարգերով. Նարկ է նշել, որ ՄԳԱԸ նախաձեռնորդությունը հնարակություն է ընձեռում Զինաստանին՝ էլեկտրոնային շուկայի միջոցով չինական ապրանքների արտահանել և առարկել ամբողջ աշխարհով. Հայաստանում էլեկտրոնային առևտուրն ու վերոհիշյալ տեխնոլոգիաները նոր են ձևափորվում, ուստի հայ-չինական համագործակցությունն այս ոլորտում կնապատի Հայաստանում էլեկտրոնային առևտուրի և թվային տեխնոլոգիաների զարգացմանը, որոնց միջոցով հայկական ընկերությունները նոյնպես հնարավորություն կստանան

Զինաստան՝ «Են գոտի, Են գալուստում» և Ամսաթունաթթանիւ Են համաստաւմասնակցիւ և ամսաթունաթթանիւ մասնակցիւ «Մետարքի թվային ճանապարհում» տեղի ունեցող զարգացմաններին» [62]:

Զինաստանի Անտական խորհրդի խորհրդական, պրոֆեսոր Շի Խնչոնը նշում է, որ Զինաստանը չափությունում է միջոցները կենտրոնացնեն միայն ենթակառուցվածքների և առևտուրի վրա և ՄԳԱԸ երկրների հետ հարաբերությունները խորացնելու գործում կարևորում է նաև համագործակցությունը գործադրության ոլորտում [8, թ. 208]:

Հայաստանը պետք է փորձի Զինաստանից ներդրումները ստանալ գործադրության համար՝ պայմանով, որ ստացված տեխնիկայի և նորարարական տեխնոլոգիաների փոխարեն Զինաստանին կմատակարարվեն էկոլոգիակես մարդու միջոց և բանջարելեն: Այսիսի ընամքերը կարող է հաջողություն ունենալ Զինաստանում, որտեղ հոդի և օդի աղոտության մակարդակը բարձր է: Նոյն սրամարանությանը կարելի է նաև ներդրումներ ստանալ մասմքերը արտադրելու համար (Զինաստանում հատկապես մեծ է տափարի մսի պահանջարկը): Այս դեպքում ևս մասմքերը լինելու է առանց բիմական հավելանութերի<sup>64</sup>: Օրինակ՝ Տաշիկստանի և այլազագան համար Ամսունի Պեկին այցելության ժամանակ Զինաստանի Հենանգի կառավարիչը պայմանագիր ստորագրեց Տաշիկստանի հետ, որով Հենանը պետք է \$800 մլն-ի ներդրում կատարեր Տաշիկստանի գյուղատնտեսության մեջ [29, թ. 57]: Զինացիներին կարող է հե-

<sup>64</sup> Միկր Սահմանական, «Մետարքի ճանապարհի ոլորտաներում», 2017, [http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=15894&phrase\\_id=67541](http://noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15894&phrase_id=67541)

տարրքել նաև հայկական մեղրը, այս ճուղը Հայաստանում ևս զարգանում է, իսկ մեղրի զինը համեմատաբար (մոտ 3-4 անգամ) թանկ է Չինաստանում: Ի՞նչ պետք է անել, որ հայկական մեղրն արտահանվի Չինաստան: Պետք է ստեղծել հզոր լաբորատորիա, որի պատասխաններն արժանահավատ կլինեն շինական կողմից համար: Նմանատիպ լաբորատորիա ստեղծելու համար կարելի է փորձել ներդրումներ ստանալ շինական կողմից [10]:

#### ԳԼՈՒԽ 4.

«ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՏԱՎԱՐՊԱՐՀԻ»  
ԾՐՁԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅ-ՉԻՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՅՄԱՆ  
ՆԱԽԱԴՐՅԱՎԱՆԵՐԸ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ,  
ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

4.1 Հայ-շինական ռազմատեխնիկական, ռազմաքաղաքական համագործակցության խորացման նախադրյալները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» շրջանակներում

ՄԱԿ խաղաղապահ առաքելությունները (ԽԱ) կարող են նպաստել շինական ՍՃՏԳ բևականու զարգացմանը, քանի որ այս նախաձեռնությունը հնարավոր է իրազորել այն տարածաշրջաններում, որոնք կայուն են և անվտանգ շինական ներդրումների համար: Եթե ՄՃՏԳ-ն իրազորելի, ապա սա մեծ ներդրում կլինի ձեռավոր Արեւելից մինչև Մերձավոր Արևելք, Եվրոպա և Աֆրիկա ձգվող երկրների տնտեսություններում: Կատեղծվեն նոր աշխատատեղեր, անտեսական առաջընթացն աշխարհը կդարձնի ավելի անվտանգ և կայուն: Կարևոր է նաև նշել, որ ՄԱԿ ԽԱ-ն մեծացնում է Չինաստանի հեղինակությունը որպես պատասխանատու ուժ [34, pp. 57-58]:

Եթե հետևենք Զինաստանի կողմից ՄԱԿ ԽԱ-ին մասնակցելու քարտեզին, ապա կենաւնենք, որ դրանք տեղակայվում են այն տարածաշրջաններում, որտեղ առկա են շինական ներդրումներ: ՄԳՎԾ Տախաճեռնությունն ապահովագրելու համար Զինաստանը էլ ավելի է մեծացնում ներդրավագծությունը խաղաղապահ առաքելություններում:

Խնդիրն նշել է Շախմայի Ֆուլան համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի փոխդեկան Շեն Դիլիթին, «Զինաստանը մեծացնում է իր դերը խաղաղապահ գործողություններում, որպեսի դրանց միջոցով ևս ապահովի իր կատարած ներդրումների, բեռնափոխադրումների անվտանգությունը» [61]:

ՄԱԿ ԽԱ-ին մասնակցելու հարցում շահագրգոված է նաև Հայաստանը, ինչպատճ է Զինաստանի հետ բանակցել և ստործի մի առաձին խաղաղապահ գորամափորում, որը ՄԱԿ ԽԱ շրջանակներում կգործի չին գործնկերների հետ համատեղ: Արդյունքում՝ կիրարացին հայ-շինական ուսումնարարական կապերը, ՀՀ-ում կատեղօվեն բարձր վարձատրվող աշխատատեղերը, հետազոտում՝ հայ-շինական համատեղ ՄԱԿ ԽԱ ընթացքում, արդեն գործնական մակարդակով տեղի կունենա ուսումնավարության փորձի փոխանակում հայկանական և շինական գորամափորումների միջև:

Հարց է առաջանաւում, ի՞նչ շահ կարող է հետապնդել Զինաստանը Հայաստանի հետ ուսումնական համագործակցությունը խորացնելու դեպքում: Պետք է հաշվի առնել, որ երկար ժամանակ Զինաստանը պատերազմական գործողու-

թյուններ չի վարել, իսկ Հայաստանն ունի որոշակի ուսումնական փորձ: Ուստի, 2016թ. ապրիլյան պատերազմում հայկական գիլնդրականության ձեռք բերած փորձը կարող է հետաքրքրել շինական կողմին: Զինական կողմին մասնավորապես կիետարքրի, թե ինչպես էր հայկական կողմը պայքարում խրայելական անօդաչու թշողը սարքերի և Ադրբեյչանի կողմից օգտագործված ուսական ժամանակակից գինատեսակների դեմ:

Պետք է փաստել, որ ներկայումս որոշակի համագործակցությունն կա Հայաստանի և Զինաստանի միջև ուսումնական ոլորտում: Վեջինս ժամանակ առ ժամանակ Հայաստանին տրամադրում կամ վաճառում է որոշ գինատեսակներ<sup>65</sup>: Բայց իրականում Զինաստանում արտադրվող սովորական սպառագիններունները՝ թնդանորթներ, տանկեր և այլն, կարող են և շինտարքրել Հայաստանին, քանի որ դրանք որակով գիշում են ուսական արտադրանքին, որոնք առկա են նաև Հայաստանի գինանոցում:

Պետք է փաստել նաև, որ վերջին տասնինգ տարում Զինաստանը զգալիորեն զարգացրել է ուսումնարյունաբերությունը, արտադրում է մի շաբթ մրցունակ գինատեսակներ, որոնցից հատկապես աշքի են ընկերում ոչ «ավանդական» գինատեսակները, օրինակ՝ անօդաչու թշող սարքերը, որորուացկան գինատեսակները, գերձայնային հրթիռներն ու թշող սարքերը:

<sup>65</sup> Մեր Հայու. «Օջու ուս, օճան ույ» և վերլուստուար Արմենիա, 2017. <https://www.youtube.com/watch?v=3ecZt83hjlQ>.

Այսինքն՝ Հայաստանում Զինաստանի հետ համագործակցությունը կարող էն զարգացնել «ոչ սովորական» զինատեսակների բնագավառում։ Կարելի է համատեղ կառուցել ոռորոտացված զինատեսակների և անօդայու թշող սարքերի ու պահմարդունաբերական կենտրոն Հայաստանում, որի արտադրանքը կարելի է սպառնել Մերձավոր Արևելքում և ԵԱՏՄ-ում<sup>66</sup>։

**Կայուն «Մետարքի ճանապարհ» հենարավոր համագործակցությունն Արցախյան հիմնահարցում**

Զինաստանը միշտարդների ներդրում է կատարում ԱԳՍՃ գամարային հատվածում՝ ԱՃՏԳ-ում, ուստի Պեկինին ձեռնուու է ամրապնդել այս ճանապարհի և դրան հարող տարածաշրջանների անվտանգությունը։ Նարարաջան հակամարտություններ անկայունությունն է տասնդում Հարավային Կովկասում և հարցականի տակ է դնում չինական ներդրումներն այս տարածաշրջանում, որտեղ գտնվում են էներգետիկների գզայի ուսուրականեր և որը գտնվում է ուղղմափարական նշանակություն ունեցող խաչմերուկում։ Հարց է առաջանում, իսկ ինչպէ՞ս կարելի է համագործակցել Զինաստանի հետ վերոհիշյալ բնագավառում։ ԱՄԿ Անվտանգության խորհրդի (ԱԽ) անդամներ Սեղ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը զեկը շեն վաճառում է.Դ հակամարտության կողմերին։ Այսուղ մնում էն միայն Ռուսաստանը ու Հինաստանը, որոնք նման

<sup>66</sup> Հետակար - Միեր Սահակյան, 2017, [https://www.youtube.com/watch?v=a6P9\\_u98PUo](https://www.youtube.com/watch?v=a6P9_u98PUo)

սահմանափակում չունեն։ Եթե կրանցից մեկը, ովքալ դիպում՝ Զինաստանը, Հայաստանի դիվանագիտական շանրերի շնորհիվ ՄԱԿ ԱԽ-ին առաջարկի մի բանաձև, որով արգելվի Նարարաջան հակամարտության կողմերին գենք վաճառելը, բանաձևը կը նոյնինի, բանի որ ԱՄՆ-ը, Սեղ Բրիտանիան և Ֆրանսիան այսպես, թե այնպես զենք չեն վաճառում հակամարտուղ կողմերին, իսկ ԱՄԿ ԱԽ-ում Զինաստանն ու Ռուսաստանը սովորաբար պաշտպանում են միմյանց առաջ բաշած բանաձևերը։ Ինչպէս, մինչև բվեարկությունը հայկական կողմը պետք է բանակցի նաև ուսական կողմի հետ<sup>67</sup>, որ ռազմագիտական դաշնակիցը ևս օժանդակություն ցուցաբերի այս հարցում։ Արդյունքում՝ Աղրթեշանը կզրկվի զենք զնելու հենարավորությունից, իսկ Հայաստանը ստիպված չի լինի Աղրթեշանի հետ ուղմական հակամարտակշուրությունն ապահովելու համար տնտեսարքունից կտրել միջոցները և նոր զենքատեսակներ գնել։ Եվ հիմնախնդիրը կլուծվի ոչ թե զենքի ուժով, այլ դիվանագիտական, խաղաղ ճանապարհով, իսկ Հինաստանը Հարավային Կովկասում լայնամասշտար ներդրումներ սկսելու հենարավորություն կստանա։

Զինաստանի և Հայաստանի քաղաքականություններն Արցախյան հակամարտության շուրջ կարելի է համակցել նաև ՀՆԳՀՍ հիմնա վրա։ Տեսականըքն թե՝ Հայաստանը, թե՝ Հինաստանն ընդունում են ինքնիշխանության և տարածքա-

<sup>67</sup> Միեր Սահակյան, «Ինչպէ՞ս կանեցնել պատաժնությունների մքանաքար Հայաստանի և Աղրթեշանի միջև», 2015, [http://www.diplomat.am/publ/authors/mher\\_sabacyan/1/112-1-0-1483](http://www.diplomat.am/publ/authors/mher_sabacyan/1/112-1-0-1483)

յին ամբողջականության սկզբունքը, երանք դևմ են Աղրբեշանի առաջ բաշած՝ հարցը բազմական գործողություններով լուծերուն և կողմ են Հայաստանի առաջարկած խաղաղ լուծումներ գտնելուն։ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի և Աղրբեշանի փարած բաղադրականությունը, ըստ որի՝ նրանք փորձում են մեկուսացնել Հայաստանը տարածաշրջանային և աշխագթերից, հակասում է ՀՆԳՀՍ միջպետական հարաբերություններում հավասարության և փոխադարձ օգուտի սկզբունքին։ Այս կետերի շուրջ բանակցելով Պեկինի հետ՝ կարելի է Զինաստանի միջոցով ճնշում գործադրել Թուրքիայի և Աղրբեշանի վրա, որպեսզի վերջններս ՄԿՍ & տարածաշրջանային հնարավորությունները չօգտագործեն Հայաստանը մեկուսացնելու գործում։

Եթե հետևենք ՉԿԱԱՍՄ-ով անցնող ուղիներին, ապա պետք է փաստենք, որ դրանց մեծ մասն անցնում է թյուրքական պետություններով, որտեղ առանցքային դերականություն ունեն Թուրքիան, Ղազախստանը և Աղրբեշանը։

Հաշվի առնելով Սինծիանի պայքանավտանք իրավիճակը<sup>68</sup> և չին-ուղղութական բախումների [30] պատճառով երթևն-երթեմն սրվող չին-թյուրքական հարաբերությունները՝ պետք է փաստել, որ եթե ՉԿԱԱՍՄ կարևոր առանձքը է Թուրքիան, որն իր հերթին մեծ ազդեցություն ունի թե՝ Աղրբեշանի, թե՝ Կենտրոնական Ասիայի մյուս թյուրքական երկր-

ՉԿԱԱՍՄ-ը՝ Մեկ գումար, Մեկ ճառապարհ, Ալմաշենութթանուշ և Վ ՀԱՅԱՍՏԱՆԸ Հրամանակերում ներփակիորեն փոխկախված իրավիճակում է հայտնվում ուղղութերի հովանավոր հորչողօվող Թուրքիայից։

Կարենոր է նաև նշել, որ Թուրքիայում, ճիշտ է՝ ոչ պաշտոնական մակարդակով, բայց շարունակում է մեծ ժողովրդականություն փայտելի համարութքականության զաղափարախոսությունը, այն է՝ ստեղծել թյուրքախոս ժողովուրդների միություն, որի կազմի մեջ կմտնեն Թուրքիան, Աղրբեշանը, միջինասիական երկրները, Շուսաստանի արեւելքը, Իրանական Աղրբեշանն (Աստրավասական) ու Զինաստանի Սինծիանը։ Ուստի, հայկական կողմը չինական կողմի հետ բանակցելիս պետք է ներկայացնի այն իրավիճակը, որ վերոհիշյալ պետության ստեղծումն անմիջականորեն կվտանգի Զինաստանի և Իրանի տարածքային ամբողջականությունն ու ազգային անկտանգությունը<sup>69</sup>, հետևաբար Հայաստանի բնականուն զարգացումն ու հզրացումը կիսաստեն Զինաստանի անվտանգության ամրապնդմանը, քանի որ հետո Հայաստանն է խոշնուռում թյուրքական այս ծրագրի իրագործմանը։

<sup>68</sup> Միեր Մահական, «Թիշպէն և ինչո՞ւ ներկայացնել Հայոց ցեղասպահությունը չինացիներին», Ղիևաստանում այս հետազոտությունը և ուսանողների 1-ին առաջնամերժությանը, 2014, <http://online.fliphtml5.com/yrpd/zvek/>, 2014թ. նոյեմբերի 30, Ղիևաստան, [http://www.diplomat.am/publ/an/divanagitakan\\_dproc/102-1-0-963](http://www.diplomat.am/publ/an/divanagitakan_dproc/102-1-0-963).

<sup>69</sup> Rian Thum, What Really Happens in China's 'Re-education' Camps, The New York Times, 2018.

<https://mobile.nytimes.com/2018/05/15/opinion/china-re-education-camps.html>

Աղուսակ 2

ՄԳԱՃ շրջանակներում ՀՆԳԱԾ ու Արցախյան հիմնախնդիրը

	Համապատասխանում է	Նակասում է
ՀՆԳԱԾ- Հայաստան	1. Արցախյան հիմնա- խնդիրի խաղաղ համար- ցալուծմանը 2. Հայ-թուրքական հարա- բերությունների խաղաղ կարգավորմանը	
ՀՆԳԱԾ- Արդիքան (Թուրքիա)		1. Հայաստանին տարածաշրջանային և այլազգերից դուրս թողնելու քաղաքա- կանությանը 2. Արցախյան հիմ- նախնդիրը գենքի ուժով լուծելուն

4.2 ՀՀ քաղաքացիների համար Զինաստանի Հոնկոնգի հատուկ վարչական շրջան այցելելու մուտքի արտօնագիրը հանելու գնահատականը ՄԳԱՃ-ում ՀՀ մասնակցության տևանկյունից

Հոնկոնգի հատուկ վարչական շրջանը (Հոնկոնգ) Զինաստանի ֆինանսատեսական, գիտական և ուսուարությունների հիմնական կենտրոններից մեկն է, որին Պեկինը կարևոր դերակատարում է վերապահել չինական ՄԳԱՃ նախաձեռ- նության շրջանակներում [48, թ. 1]:

Ցայժմ, նոյնինչ Զինաստանի մուտքի արտօնագիր ստանալու դեպքում՝ ՀՀ քաղաքացին պարտավոր է հավելյալ



Զինաստանի հայկական համայնքը Նանդինի կոուռաձների քան- գարան-ինստիտուտում անցկացնում է Հայոց ցեղապահնորդա- գոների հիշատակին նվիրված միջոցառությունը. 2015թ.:



Զինաստանի հայկական համայնքը Նանդինում մշակութային մի- ջոցառություններ է անցկացնում:



Չինաստանի հայկական համայնքը Գուանչոու քաղաքում հայկական պատուրագ է կազմակերպել 2014թ.:



Չինաստանի հայկական համայնքի հայկառույթ Գուանչոու քաղաքում: Ներկա են Շանհայում, Հոնկոնգում, Կանծինում, Գուանչոուում, Ֆոշանում և այլ քաղաքներում բնակվող հայեր:



Չինաստանում հայ հետազոտողների և  
ուսանողների III-րդ առցանց գիտաժողով  
2016թ. Նոյեմբերի 27. Ժինուար

第三次在华亚美尼亚研究者和学生在线会议  
2016年11月27日

The Third Online Conference of Armenian  
Researchers and Students in China

China, 27 November 2016

**ChinaHAY**



## ՉԻՆԱՀԱՅ ԼՐԱԳԻՐ #5

- ՉԻՆԱՀԱՅ ԼՐԱԳԻՐ #5, 2016թ. Խոհեմբեր-2017թ. Մարտ  
 • Խոր խնամքից  
 • Չինասառության պահպանի համարից և պահպանի հարցադրությունը  
 • Չինասառության հուշագրության և պահպանից 3-րդ առաջնորդությունը  
 • Չինասառության պահպանի համարից շարժական առաջնությունը  
 • Չինացար մասնակիցներից գործություն  
 • Չինասառության հուշագրության համարից հետ  
 • Երևանացոր Չինասառարի և ամսահանությունը /քատօնքորոշություն համարից Առաջնությունը/

2016թ. տպագրված «ՉինաՀայ լրագրի» շապիկը:

ՉՐԱՎԱՍՏԱՆԻ «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՎԱՐԴԱՐ» ԱԿԻԱՅԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

գումար և ժամանակ վաստել Հոնկոնգի առանձին մուտքի արտօնագիր ձեռք բերելու համար: Մինչդեռ աշխարհի բազմաթիվ զարգացող երկրների բաղադրացիները հեարավորություն ունեն ճանապարհորդել Հոնկոնգում առանց մուտքի արտօնագրի (տե՛ս Աղյուսակ 3):

### Աղյուսակ 3

Հոնկոնգ առանց մուտքի արտօնագրի այցելության իրավունքը  
 ունեցող մի շարք զարգացող երկրների ցուցակ

90 օր	30 օր	14 օր
Չինարվիէն	Բահրեյն	Մալազիակար
Չամբիա	Թունիս	Սուզամիկի
Նամիբիա	Գվատեմալա	Ղազախստան
Բուսավանա	Կոստա Ռիկա	Մալի

Ինչ Աֆրիկանտանի, Հայաստանի, Սոմալիի, Ադրբեյջանի, Բանզարայիշի և այլ երկրների բաղադրացիներն, օրինակ, Հոնկոնգ այցելու համար պարտավոր են ունենալ Հոնկոնգի մուտքի արտօնագրի:

Հոնկոնգի և Չինաստանի հայկական համայնքի (ՉինաՀայ) կողմից Հոնկոնգում 2013թ. հիմնեց Հոնկոնգի հայկական կենտրոնը: Հոնկոնգ մտնելու համար անհրաժեշտ մուտքի արտօնագիրը դիմարություններ է ստեղծում նաև Հայաստանի այն բաղադրացիների համար, որոնք Բակվում են մայրաքաղաքային Չինաստանում և ցանկություն ունեն մասնակցել ՉինաՀայի կողմից ժամանակ առ ժամանակ այդ

կենտրոնում կազմակերպվող միջոցառումներին: Այս պատճառով համայնքային հավաքրույթները, որոնց նպատակն է ամրապնդել կապը Զինաստանում ապրող և աշխատող հայերի միջև, Հայկական կենտրոնից տեղափոխվում է մայրամարային Զինաստանի մի այլ վայր:

Հաշվի առնելով Հայաստանի դեկավարության՝ ՍԳԱԾ նախաձեռնությանը միանալու պատրաստակամուրյունը՝ կարևոր է դառնում, որ Հայաստանի քաղաքացիները առանց մուտքի արտոնագրի հեարաբորություն ստանան այցելել ՍԳԱԾ ֆինանսատեսական, գիտական կենտրոններից մեկը՝ Հոնկոնգ, որը կրած հնարավորություն կտա, ինչպես Զինաստանի դեկավարությունն է նշում, կապեր հաստատել «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» առաջնակարգ համակցող Հոնկոնգի» ֆինանսական, տնտեսական կազմակերպությունների հետ:

Ճանելով մուտքի արտօնագրերը՝ կիեշտանան նաև շփումն ու համագործակցությունը մայրամարային Զինաստանում և Հոնկոնգում քնակիոր հայերի միջև, որնք համախմբված են Հոնկոնգի և Զինաստանի հայկական համայնքի շուրջ: Այս կազմակերպությունը նոյնպես պաշտոնապես գրանցված է Հոնկոնգի ռեզիստրում:

Կարևոր է նշել նաև, որ Հոնկոնգում գործում է ՍԳԱԾ գրասենյակը, Հոնկոնգի կառավարիչն այս գրասենյակը դեկավարելու համար նշանակել է հասուլ համակարգող հանձնակատար: Անհրաժեշտ է կապեր հաստատել նաև

ՍԳԱԾ հոնկոնցան գրասենյակի հետ և մասնակցել վերջինիս կողմից կազմակերպվող Զինաստանի ու ՍԳԱԾ երկրներն իրար միացնող ծրագրերին:

Ինչպես ցույց է տալիս հետագոտությունը, Հոնկոնգի մուտքի արտօնագրի անհրաժեշտ չէ այնպիսի երկրների համար, ինչպիսիք են Չինբարավեն, Չամբիան, Ալբանիան և Սադազակարը, ինչի հիման վրա կարելի է եղանակացնել, որ բանակցելու դեպքում Հայաստանի քաղաքացիները նա կարող են առանց մուտքի արտօնագրի Հոնկոնգ այցելելու իրավունք ստանալ:

1. Հաշվի առնելով Հոնկոնգի կառավարության «2017թ. քաղաքական ուղերձի» «Հեշտացնել մուտքի արտօնագրեր ստանալը՝ շարժը մեծացնելու նպատակով» 3-րդ ենթագլիքի 49-րդ կետը, ըստ որի՝ Հոնկոնգի դեկավարությունը ՍԳԱԾ երկրների հետ համագործակցությունը բարեկավելու նպատակով պատրաստակամ է վերանայել և հեշտացնել Հոնկոնգի մուտքի արտօնագրի ստանալը տվյալ երկրների քաղաքացիների համար, քանակություններ սկսել և ապահովել Հայաստանի քաղաքացիների՝ առանց մուտքի արտօնագրի այցելությունների իրավունքը Հոնկոնգի տարածքը:
2. Նկատի ունենալով Հոնկոնգի կառավարության «2017թ. քաղաքական ուղերձի» 48-րդ կետը՝ բանակցություններ սկսել Հոնկոնգի մետրոպոլիտենի ակադեմիայի կողմից կազմակերպվող քննարկումներին մասնակցելու

- համար, որոնք միտված են ՄԳԱԾ մասնակից երկրների երկարուղիների փոխկապվածության արդյունավետությունը բարձրացնելուն։ Ներկայացնել Հայաստան-Իրան երկարօճի նախագիծը, փորձել զանել շահագրգիռ կողմեր, որոնք պատրաստակամ կլինեն մասնակցել կառուցման աշխատանքներին։
- Հաստ 48-րդ կետի մեջ այլ դրույթի՝ Հոնկոնգի միջազգային ավիացիոնի ակադեմիան պայմանագիր է կնքել ֆրանսիական ավիատիների հետ, ըստ որի՝ համատեղ վերապատրաստման դասընթացներ են անցկացվելու ՄԳԱԾ երկրների օրաշուների համար։ Հաշվի առնելով այս հանգամանքը՝ հայ օդաչուներին ևս գործուղել մասնակցելու այդ դասընթացներին։
  - Հաստ «2017թ. քաղաքական ուղերձի» 48-րդ կետի՝ Հոնկոնգի կառավարությունը պատրաստակամություն է հայտնել վերապատրաստման դասընթացներ անցկացնել ՄԳԱԾ երկրների պաշտոնյաների համար։ Ուստի, նապատակահարմար է, որ ՀՀ կառավարությունը պայմանավորվածություն ձեռք բերի, որ հայ պաշտոնյաները գործուղվեն ֆինանսական և կառավարման նորարարությունների կենտրոն համարվող Հոնկոնգ։

4.3 Զինաստանի հայկական համայնքը որպես հայկական «Փափուկ ուժի» գործոն օգտագործելու հնարավորությունները «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունում Հայերը տարբեր ժամանակներում այցելել են Զինաստան, բայց չեն հաստատվել այստեղ։ Այսինքն՝ ի տարբերություն շատ այլ երկրների, որտեղ հայկական համայնքներն անընդհատ գոյություն են ունեցել կամ մի քանի դարի պատմություն ունեն, այստեղ որոշակի պատճառներով երկար չեն մնացել, որոց ժամանակ Զինաստանում թևակվելուց հետո տեղափոխվել են այլ երկրներ։

Զինայինները թիջ են տեղեկացված Հայաստանի մասին։ Կարծում եմ՝ պատճառն այն է, որ մի քանի տասնամյակ Զինաստանում հայկական համայնք չի գործել։

Հայաստանն ընդամենք երկու տասնամյակից ավելի է, ինչ դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Զինաստանի հետ։ Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ շինացիները մեծ մասամբ հետարրըքված են արևմտյան երկրներով և նրանց մշակությով։

Զինաստանի հայկական համայնքի գործադիր մարմինը, կառուցվածքը և գործունեությունը

2013թ. նոյեմբերին ստեղծվեց համայնքի գործադիր մարմինը, որի անդամները ներկայացնում են Զինաստանի հայաշատ քաղաքների՝ Հոնկոնգի, Գուանչզուի, Նանչժինի (կամ Նանկին), Շանհայի, Պեկինի, Շենժենի և այլ քաղաքների հայերի

շահերը: Գործադիր մարմինն ամեն ամիս հեռաձայնային ժողով է անցկացնում, որի ընթացքում որոշում և կազմում է տվյալ ամսավա գործուելության պլանները: Համայնքի գործունեության կշիռն ու կազմակերպվածությունը բարձրացնելու համար Հոնկոնգում գրանցվեց Հոնկոնգի և Չինաստանի հայկական համայնք կազմակերպությունը [49], որի տնօրենների խորհրդում ընդգրկվեցին գործադիր մարմինի անդամները: Համայնքը ունի Խորհրդականների խորհուրդ, որտեղ ընդգրկված են հայտնի մարդիկ ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի, Արգենտինայի հայկական համայնքների կազմից: Գործադիր մարմին համար կարևոր ձեռքբերում են նաև համայնքի ժողովրդավարական սկզբունքներով անցկացվող ընտրությունները, որոնց հավասարապես մասնակցում են թե՝ տղամարդիկ, թե՝ կանայք: Նրանք Չինաստան են ժամանել Արևմուտքից. Արևելից, Շուսաստանից և Հայաստանից: Չինաստանի հայկական համայնքի նախագահ կարելի է ընտրվել միայն երկու տարրով, որից ետու նախկին նախագահը նորից անմիջապես առաջարկվելու իրավունք չունի:

Ի դեպ, կարևոր է նշել, որ համայնքը կառավարվում է տեղեկատվական հասարակության հայեցակարգի սկզբունքներով: Կառավարում ամբողջովին իրազրծվում է համացանցի միջոցով, որի շնորհիվ թոթարանություն գրեթե գոյություն չունի. ամեն ինչ կատարվում է էլեկտրոնային շրջանառությամբ:

### Հոնկոնգի Հայկական կենտրոնը

2013թ. համայնքի կայացմանը մեծ լիցք հաղորդեց բարերարներ Զեր և Ջուլի Մարզյանների Նվիրատվությամբ ատեղծված Հոնկոնգի Հայկական կենտրոնը: Հայկական կենտրոնի բացմանը մասնակցեց և իր օրինական բերեց Ն.Ս.Օ.Ս.Ս. Գարեգին Բ կարողիկոսը: Բացման համար արարողությանը մասնակցեցին նաև Չինաստանում ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանը, տարբեր երկրների հայկական համայնքների դեկապարներ<sup>70</sup>:

### Ուսանողական միություն

2014թ. ատեղծվեց Չինանայի ուսանողական միությունը, որի նպատակն է համախմբել Չինաստանում գտնվող հայ ուսանողներին, օքնել միմյանց, փոխանակել գիտաժողովների, կրթառոշակների վերաբերյալ տեղեկատվություն, նպաստել հայ-չինական բարեկամությանը: Ուսանողական միության անդամները Չինաստան են ներկ թե՝ ՀՀ-ից, թե՝ Սփյուռքից: Տարբեր քաղաքներում գտնվող հայ ուսանողները մշտական կապի մեջ են wechat սոցիալական ցանցի միջոցով:

Ուսանողական միությունը հատկապես ակտիվ է Հայաստան ու հայկական մշակույթը Չինաստանում ճանաչելի դարձնելու գործում, որի անդամները ժամանակ առ ժամանակ տարբեր քաղաքներում հայկական մշակութային երեկոներ են կազմակերպում, ներկայացնում Հայաստանը:

<sup>70</sup> Միեր Սահմանական, «Չինաստանի Հայկական համայնքը մեր օրերում», 2014, [http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=12749](http://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=12749)

## Չինաստանում հայերեն է դասավանդվում

2014թ. սեպտեմբերից Չինաստանի ԿԳՆ աջակցությամբ Դեկինի օտար լեզուների համալսարանում (ՊՈԱՀ) Չինաստանի հայկական համայնքի Գործադիր մարմնի անդամ Մերի Կոյազյանը դասավանդում է հայերեն, որի շորեհիվ մի քանի շին ուսանողներ ցանկություն են հայտնել ուսումը շարունակել Հայաստանում<sup>71</sup>:

## Պատարագ

Անցյալ տարիների ընթացքում Չինաստանում հայ համայսր կազմակերպել է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են եղել Հայաստանի ճանաչելիության բարձրացմանը:

2014թ. դեկտեմբերի 14-ին Չինաստանի հայկական համայնքը պատարագ էր կազմակերպել, որը մատուցելու համար հրավիրվել էր Ավատրափայի և Նոր Զեանդիայի Հայոց թեմի առաջնորդ, գերաշնորհ ու Հայկազուն և պատուական նախարար Շահան Անդամանը<sup>72</sup>. Պատարագին մասնակցելու համար Չինաձայի անդամները Գուանչուու էին ժամանել Չինաստանի տարբեր քաղաքներից:

Չինաստան «ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՀԱՍՏԱՐԱՐ» ՆԱԽԱՅԵՐՈՒԹՅՈՒՆ ԵԿ ՀԱՅԱՍՏԱՆ

## Հայոց ցեղասպանությունը Չինաստանում Ներկայացնելու ցանքերը

2015թ. ապրիլին Չինաստանի Նանչին քաղաքում Չինաձայի կողմից կազմակերպվեցին Հայոց ցեղասպանության հարյուրամյակը ոգեկոչող միջոցառումներ: Ներկաներն այցելեցին Նանչինի կոտորածների քանգարան, հարգանքի տուրք մատուցեցին հայ, շին և մյուս ազգերի անմեղ գոհերի հիշատակին: Նշեց, որ ցեղասպանությունների և կոտորածների շարունական լինելու հանգամանքը պայմանավորված է անպատճելիության մրնուրուսով: Եթե միջազգային համբույրունը ժամանակին կատեցներ և դատապարտեր Հայոց ցեղասպանությունը, հետազոտում ճապոնացիները կգործադրանքին և չին կոտորի շինացիներին, իսկ Հինդերը՝ հրեաներին, պատճառարանելով, որ հայերի ցեղասպանությունը ոչ ոք չի հիշում:

Որպեսզի Հայաստանը ներկայացվեր նաև որպես զարգացող երկիր և համակրաք առաջացներ շին և արտասահմանցի հարյուրավոր մասնակիցների մեջ, որոշվեց կազմակերպել «Վերածնննո՞ց» մշակութային միջոցառումը: Տեղի ունեցած տաղանդավոր նկարիչ Սևադա Գրիգորյանի ցուցահանդեսը և Թիեննինում քնակիող հայտնի դաշնակահար Միքայել Հայրապետյանի համերգը<sup>73</sup>:

Չինաձայը շարունակում է ամեն տարի ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության մասին տեղեկատվություն սփոռել:

«Նաև ներկայացնելու հայկական համայնքի անցկացքեց Հայոց ցեղասպանության հիշատակամակ և կիրակած և շաբաթային միջոցառումներ», 2015,  
<http://www.chinahay.com/genocide/>

<sup>71</sup> «Չինաստանում հայերեն է դասավանդվում», Արմենիա, 2015,

<http://armmedia.am/arm/news/23715/chinanastanum-hayeren-e-dasavandvum.html>

<sup>72</sup> «Չինաստանում առաջին անգամ սուրբ պատարագ է մատուցվել հայերի համայնք», 2014, Արմենիա, <https://armenpress.am/arm/news/788037/chinanastanum-arajin-angam-surb-patarag-e-matucvel-hayeri.html>

շինական հայտնի սոցցանցերում, միջոցառումներ կազմակերպել շինական բաղաքաներում։ Կարևոր է նշել, որ համայնքի ջննիքերով շինարեն է բարգամանել նաև Միքայել Հակոբյանի «Գետը վաղում է կարմիր» ֆիլմը, որը նույնպես օգտագործվում է Շինաձայի կողմից շինացիներին 1915թ. դեպքերի մասին պատմելու համար։

### Արցախ, տեղեկատվական պատերազմ, դրամահավաք

Համայնքի համականության պատերազմ, դրամահավաք Համայնքի համականության պատերազմ (2016թ.) օրերին։ Պատրաստվեցին շինարեն հաղորդագրություններ, ինչպես նաև ստեղծվեցին հակամարտության ճշմարտացի պատմության վերաբերյալ շինարեն տեքստեր, որոնք բացահայտում էին աղբեջանական ազրեախան։ Համեմատությունները տարվում Աղբեջանի և «Բայրամական պետություն» ահարքելական կազմակերպության գործութեաւորյան միջև, նշվում եր, որ բազմաթիվ աղբեջանցիներ և ուղություններ անդամակցում են «Բայրամական պետությանը», այսինքն՝ վտանգում են թե՝ Հայաստանի, թե՝ Շինաստանի անվտանգությունը։

Հաշվի առնելով այս հանգամանքը, որ Շինաստանի հայկական համայնքի անդամներից շատերը զերազանց տիրապետում էին շինարենին և գործում էին կոռորդինացված, կրած հաջողվեց շինական սոցցանցերում՝ Վիշար, Քյություն և այլն, տեղեկատվական պատերազմում հաղթանակ տանել մեծ մասամբ անզերեն զորու աղբեջանցիների նկատմամբ։

ՇԻՆԱՍՏԱՆԻ «ՄԵԼՔ ՎԱՅԻ ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» ՆԱԽԱՌԵՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Կազմակերպվեց նաև դրամահավաք, որի արդյունքում հավաքված գումարը Շինաստանի հայկական համայնքի անունից փոխանցվեց Արցախի կառավարության տրամադրած հաշվին։<sup>74</sup>

Հայ հետազոտողների և ուսանողների առցանց գիտաժողով Հայկական համայնքը կազմակերպում է Հայ հետազոտողների և ուսանողների ամենամաս առցանց գիտաժողով։ Որի նպատակն է աշխարհին ներկայացնել Շինաստանում սովորող և աշխատող հայ հետազոտողների և ուսանողների գիտական աշխատանքները։ Գիտական կապ է ստեղծվում Շինաստանում գտնվող փորձառու հետազոտողների և ուսանողների միջև, որի արդյունքում ավագներ օժանդակում են կրտսեր գործնկերներին։ Կայացել է նմանատիպ չորս գիտաժողով։

Սիյուրում երիտասարդ հայ հետազոտողների առաջին առցանց գիտաժողովը<sup>75</sup>

2017թ. հունիսի 22-ին Շինաստանի հայկական համայնքը Սիյուրություն նախարարության, «Նորավակը» հիմնադրամի, «Շի-

<sup>74</sup> «Շինաստանի հայկական համայնքը Արցախին օժանդակելու համակարգեց դրամահավաք», Արարաք, 2016, <http://araratz.com/arm/>

<sup>75</sup> «Շինաստանում մէկնարկի և հայ հետազոտողների ուսուանողների երրորդ առցանց գիտաժողովը», Առավոտ, <http://www.aravot.am/2016/11/29/831674/>

<sup>76</sup> «Գիտաժողովի ծրագիր - Սիյուրություն հայ հետազոտողների առցանց առցանց գիտաժողովը, Հումանիտար և հասարակական գիտությունների 22 հունիսի 2017թ.», Արտակար, [https://armacad.info/gitazhoghovit-tsragir-agriculture-humanitar-ew-hasarakan-gitutyunner-22-hulisi-2017-t#=\\_](https://armacad.info/gitazhoghovit-tsragir-agriculture-humanitar-ew-hasarakan-eritzzard-hay-hetatzotgothenev-artshain-argants-gitzazhoghov-humanitar-ew-hasarakan-gitutyunner-22-hulisi-2017-t#=_)

Խաստան-Եվրասիա» բաղարական և ուսումնավարական հետազոտությունների խորհուրդ» հիմնադրամի, ԱՐՄԱԿԱԴ-ի և Diplomat.am-ի աջակցությամբ կազմակերպեց Սփյուռքում երիտասարդ հայ հետազոտողների առաջին առցանց գիտաժողովը, որի նպատակն էր միավորել և կապեր հաստատել աշխարհի տարբեր բնիերում աշխատող և սպորող երիտասարդ գիտնականների միջն ներկայացնել Հայկական աշխարհի գարզացման նրանց տեսականը:

Առցանց գիտաժողովում գեկոյցներով հանդես եկան երիտասարդ հայ գիտնականներ Ներերանելներից, Լիհատանից, Էստոնիայից, Չինաստանից, ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Գերմանիայից և այլ երկրներից<sup>77</sup>:

### Չինաձայ-ՀԱՀ կրթարշակ չին ուսանողների համար

Խոսելով հայ-չինական հարաբերությունների մասին՝ պետք է կարևորել երկու երկրների մարդկանց շփումները միմյանց հետ: Այս նպատակով 2016թ. Չինաձայի և Հայաստանի ամբողյան համաշարանի (ՀԱՀ) համատեղ ջաներով կրթարշակ տրամադրվեց մեկ շին ուսանողի՝ ուսումը Հայաստանում շարունակելու նպատակով<sup>78</sup>:

<sup>77</sup> Տեղի ունեցած «Սփյուռքում երիտասարդ հայ հետազոտողների առաջին առցանց գիտաժողովը», 2017, <http://hayernayor.am/archives/255256>

<sup>78</sup> «Չինաստանի հայկական համայնքը կրթարշակ կը տրամադրի շինացի ուսանողներին Հայաստանում առջրելու համար», Ապրիլի 2015, <http://asbarez.com/arm/>

Չինաձայ-«Գյուլբենկյան» հիմնադրամի համատեղ կրթաթոշակ

Չինաձայի և «Գյուլբենկյան» հիմնադրամի մեկ այլ կարևոր նախաձեռնությամբ հայ և չին հետազոտողները գիտական աշխատություններ են գրում Չինաստանում հայկական ներկայության պատմության վերաբերյալ: «Գյուլբենկյան» հիմնադրամը Չինաստանում հայկական համայնքի պատմությունն ուսումնասիրելու համար կրթաթոշակ հասուլացրեց, որի նպատակն է ուսումնասիրել Չինաստանում հայերի ներկայությունը 20-րդ դարում<sup>79</sup>:

### «Չինաձայ լրագիր»

Համայնքի կանորում կարևոր նշանակություն ունի երկինությագիրը, որը հասանելի է առցանց: «Չինաձայ լրագիր» լուրահատուկ արյուր է դարձել որտեղ ամրագրվում են Չինաձայի առօրյան և պատմությունը [50]:

Ամփոփելով՝ նշենք, որ հզորացող Չինաստանում կանոր է ունենալ միավորված և կարող հայկական համայնք, որը կեպաստի Հայկական աշխարհ-Չինաստան կապերի ամրապնդմանը: Փորձը ցույց է տվել, որ այն երկրներում, որտեղ հայկական համայնքները կազմակերպված են, հայության շահեր և ալիքի լավ են ներկայացված: Թեև Չինաստանում հայկական համայնքը մեծ չէ, բայց ունի կիրթ և լավ կազմակերպված մարդկային ռեսուրս: Համայնքը համարվում են

<sup>79</sup> «Չինաձայ լրագիր» # 2, 2014, էջ 1, [http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Chinahay/2014/2014\(2\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Chinahay/2014/2014(2).pdf)

կամ բարձր որակավորում ունեցող սփյուռքահայ մասնագետներն ու ներդրողները, կամ հայաստացի ուսանողները, ովքեր սովորել են Զինաստանում: Նրանց մեծամասնությունը տիրապետում է շինարենին, անզերենին, անզերենին կամ ոռուերենին, երանք ունեն շինական դիպլոմներ և հեշտությամբ աշխատանք են գտնում, հարմարվում տեղի կյանքին:

Այսպիսով, Զինաստանի հայկական համայնքը, համաստարար երիտասարդ և կրթված լինելով, արագ կազմակերպվում է ինչպես նաև փորձում է միավորել և առաջնորդել թե՝ Զինաստանի, թե՝ Հետավոր Արևելքի հայկական մյուս համայնքները: Օրինակ՝ հայկական տարբեր չափերի համայնքներ կան Թաթիւանում, Վիետնամում, Մինեզապուրում, Մայալիհայում, Զարավյան Կորեայում, Հեղևաստանում, Բանգլադշում և Մյանմարում: Տվյալ հայկական համայնքների դեկավարներն ամեն եռամյակ քննարկումներ էին անցկացնում, որոնց ընթացքում միմյանց տեղեկացնում էին նախաձեռնությունների, կատարած աշխատանքի մասին [58]:

Հայկական համայնքը Խորհրդականների խորհրդի միջոցով կապված է ԱՄՆ, Կանադայի, Լիբանանի, Ավստրալիայի և այլ հայկական համայնքների հետ: Համայնքի տարբեր երկներից եկած անդամները ևս օգնում են Արևելքից Արևմտաք ցրված հայկական համայնքների միջև հարաբերություններ ստեղծելու: Զինաստանի հայկական համայնքը հայկական «Փափուկ ուժի» լավագույն դրսերումն է Զինաստանում, եթե մարդկային ռեսուրսի միջոցով ներկայացվում են հայկական մշակույթը, կրոնն ու պատմությունը, իսկ գոր-

ծալիք մարմնի նպատակացաց աշխատանքի շնորհիվ Զինաստանում Հայաստանն ավելի ճանաչելի և գրավիչ է դրանում:

#### 4.4 Հանրային դիվանագիտության նշանակությունը «Մեկ գուշ, մեկ ճանապարհում»

Պետք է կարենուի նաև այն փաստը, որ ՄԳՄՃ-ում կարեոր դեռ է խաղալու մարդկային գործոնը, ուստի պետք է հեշտացնել և հաճախակիցնել հայ և յին գործարարների, գիտեականների, ուսանողների, տուրիստների փոխադարձ այցելություններն ու անմիջական շփումները, կազմակերպել հասուլ ծրագիր, որի ընթացքում Հայաստան կիրավիրվեն յին գործարարներ, որոնց հարկ է ներկայացնել, որ Հայաստանում աշխատումն ավելի էժան է, քան Զինաստանում և հարավայինական մի շարք երկրներում: Հայաստանում արտադրելու դեպքում նրանք ենարավորություն կունենան արդյունք վաճառել նաև ԵԱՏՍ շուկայում:

Պետք է փորձել ուղղի չվերթներ կազմակերպել՝ Երևան-Դեկին-Երևան, Երևան-Շահնայ-Երևան, Երևան-Գումանու-Երևան: Այս քայլի միջոցով կիեշտանա հայ գործարարների մուտքը Զինաստան, կմեծանա յին գրոսաշրջկների թիվը: Ի դեպ, քանի որ Զինաստանում մեծ հետաքրքրություն կա ըրբառուելության նկատմամբ, ճիշտ ներկայացնան դեպքում, կարծում եմ, շատերը կցանկանան այցելել ՀՀ, որն աշխարհում առաջինն է քրիստոնեությունն ընդունել որպես պետական կրոն: Հնարավոր տարբերակ է, որ հետաքրքրություն

առաջացեն նաև էլեւուրիզմն ու «մարուր օդ» շնչելու գաղափարը: Սա հետավոր կիյնի, եթե կրծատվեն չվերթերի ժամանակն ու տումերի գինը, Հայաստանը հավոր պատշաճի գովազդվի և դառնա ՄԳԱԾ հետաքրքրություն առաջանող տուրիստական հանգրվաններից մեկը<sup>30</sup>:

Դեսք է փորձել կապեր հաստատել նաև Հայոց ցեղասպանության քանզարան-ինստիտուտի<sup>31</sup> և Նանձինի կոտրածերի թանգարան-ինստիտուտի միջև: Երկու գյուտական կենտրոնները կարող են համատեղ հետազոտություններ կատարել և արդյունքները տպագրել թե՝ հայերեն, թե՝ չինարեն, թե՝ տարբեր լեզուներով, որի արդյունքում առաջին հերթին Չինաստանում և Հայաստանում կտեղեկանան Հայոց ցեղասպանության և Նանձինի կոտրածերի մասին: Երկու ազգերը նմանատիպ խնդիր ունեն և կարող են միասնական շանթերով պայքարել ընդում ցեղասպանությունների:

## ԱՄՓՈՓՈԽ

Սույն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս 2013թ. մեկնարկած նախաձեռնությունը կարճ ժամանակում դուրս եկավ ասիստական տարածաշրջանից և համաշխարհային նշանակություն ստացավ:

Կարող է հարց առաջանալ, ի վերջո, ի՞նչ է ՄԳԱԾ-ն: Ին կարծիքով՝ աս գործիք է, որի միջոցով Չինաստանը սկզբանական շրջանում փորձելու է նպաստել սեփական տնտեսական աճի ապահովմանը, ամրապնդել իր անվտանգությունը, և եթե այս հայաձեռնությունը հաջողությամբ պարվի, հետագայում այս երկիրը կփորձի նաև տարածել իր քաղաքական ազդեցությունը:

Չինաստանը ՄԳԱԾ-ի միջոցով իր զարգացումը հաջողությամբ իրականացնելու համար փորձում է փասել, որ իր տնտեսական և քաղաքական հզորացումը հնարակիրություն է, այլ ոչ թե մարտահրավեր աշխարհին: Փորձ է արվում մյուս երկրներին հավաստիացնել, որ երկիրը հակված է սեփական խաղաղ առաջընթացի միջոցով նպաստել նաև այլ երկրների զարգացմանը: Խնդիրն աշել է Սի Ծինիինը: «Առանց խաղաղության մեր ի վիճակի չենք լինի կենտրոնացնել մտքերը մեր նպատակների վրա և կարգավորել սեփական խնդիրնե-

<sup>30</sup>Հային տեղում:

<sup>31</sup>侵华日军南京大屠杀遇难同胞纪念馆, <http://www.nj1937.org/index.html>

քբ։ Ասվածն ավելի ամրապնդելու համար Մին մեջքերել է չինական հետևյալ ասացվածքը։ «Եթե դու ցանկանում ես գնալ արագ, ապա զեա մենակ, իսկ հեռուն հասնելու համար անհրաժեշտ է միասին գնալ» [51]։

Չինական տնտեսության զարգացման տեխնոլոգի դասդադումը զգալով՝ չինացիները փորձում են առաջնորդվել չինական հետևյալ ասացվածքով։ «Ամբարտակի ներքին կորուստները պետք է լրացնել դրանից դուքս զննվող միջոցների հաշվին» [22, p. 216]։ Այսինքն՝ չինական տնտեսությունը դիտարկվում է որպես «ամբարտակ», որը կորուստներ է կրում, իսկ դրան «միջոցներ» այն բոլոր հետարակոր արտաքին շուկաներն են, որոնց պոտենցիալը դեռևս ամրողություն օգտագործված չէ, և ՍԳՍԱՀ-ն օգտագործելով որպես յուրահատուկ «թունելային համակարգ»՝ կարելի է այդ ջրային պաշարներն ուղղել դեպի «ամբարտակ» Չինաստան։

ՍԳՍԱՀ-ի միջոցով վարվող ակտով քաղաքականությունը ցույց է տալիս, որ Պեկինում որոշել են, որ Դրն Սիան-ֆինի առաջ քաշած տեսությունում (քողարկել կարողությունները և սպասել սեփական պահին - 能力超强但是善于隐藏能力的星座！ / Nénglì chāo qiáng dànsī shàngyú yǐncáng nénglì de xīngzūò! ) հիշատակվող ժամանակը եկել է, և Չինաստան արդեն կարող է դուքս գալ ատելերից և կուտակած ներուժն օգտագործել համաշխարհային գործերում։

Հստ էության՝ հայ-չինական հարաբերությունները նոր են ձևավորվել։ Դա կշանակում է, որ անհրաժեշտ է զարգաց-

շրամանական աշխատանքներում նաև համաշխատ աշխատանքներում նոր ուղիներ գտնել և վերիմաստավորել հարաբերությունները։

Հարկ է երկկողմ հարաբերություններում հրաժարվել «մշտնշենական» ու «վաղնջական» բառերը որպես հիմնարար կամ առավելություն օգտագործելու հնացած վորձից. այս բառերն ընդհանրական են և իրականում ոչինչ չեն տալիս։ Հիշենք, որ ներկայիս աշխարհաքաղաքական իրավունքում ժամանակագրության հիշատակումները չեն աշխատում և ոչ մի նշանակություն չունեն, իսկ արդի ժամանակաշրջանում հին կամ նոր քաղաքակրթություն լինելը, նախկինում եղած կամ իրականում մի մասն էլ հորինված հարաբերությունների մասին պատմությունները ոչ մի դեր չեն խարդարում։ Առավելություն կարող է տալ միայն հետևյալ հարցի դրական պատասխանը՝ արդյոք որ երկրում արդար և կայուն տնտեսական իրավիճակ առեղծի՞լ են<sup>62</sup>։ Միայն այս հանգամանքը կարող է արտասահմանցի կամ տեղացի գործարաների համար երկիրը զրավիչ դարձնել։ Այսինքն՝ հայ-չինական հարաբերություններում զգայի փոփոխություններ ի հայոց կոմայ, եթե Հայաստանին հաջողվի չինական, իսկ Չինաստանում էլ հայկական կապիտալի որոշակի ներկայություն ապահովէ։ Տես սա էլ կօգնի Երևանին՝ չին և հայ գործարաբների, գիտականների, երիտասարդների միջոցով իր խոսքը լսելի դարձնել ներկայիս միջազգային հարաբերություններուն կարևոր խաղացող դարձած Պեկինում։ Հայ-չի-

<sup>62</sup> «Անդրամեջն է վերիմաստավորել Շինասանակ հետ հարաբերությունները։ Միկր Մահակցություն 2016, <http://hayernayor.am/archives/220917>

նական հարաբերությունների պրոտեցիալը չի օգտագործվում ոչ քաղաքական, ոչ տնտեսական ոլորտներում: Մրա վառ ասպարույցը չնշին չափերի հասնող չինական ներդրումներն են, երբ Հայաստանի հարևան Երկրներում Հինաստանը կատարում է միջարդիների ներդրումներ: Հայկական կողմը պետք է փորձի օգտագործել նաև Հինաստանի հայկական համայնքի պատեսչիալը, ինչպես նաև ճիշտ օգտագործի այդ Երկրի կողմից տրամադրվող կրթարժաշակները: Հինաստանում սփյուռք հայ ուսանողների զգայի մասը սփյուռք է ոչ բարձրակարգ բուհերում<sup>69</sup>, նրանց զգայի մասն ուսանում է լեզվաբանություն կամ չինարենի ուսուցման հետ կապված մասնագիտություններ: Ավարտելով ուսումը՝ նրանք չեն կարողանում աշխատանք գտնել Հայաստանում, ստիպված վերադառնում են Հինաստան՝ անզերեն դասավանդելու հոյսով: Կարծում եմ, որ հաջի առելով Հինաստանի զգայի հաջողությունները ենթուելինորդիաների, տնտեսության և կառավարման բնագավառներում՝ հենց այս ուղղություններով խրանալու համար պետք է գործուղվեն հայ ուսանողները: Հարկ է նաև գործարաններից և պետական հիմնարկություններից ճշտել, թե Հինաստանի կամ չինական կազմակերպությունների հետ կապերը խորացնելու համար ինչ ուղրուի մասնագետներ պետք է պատրաստել, որպեսզի ուսանողները Հինաստանի վերադառնալով աշխատանք գտնեն:

<sup>69</sup> Սայըստանային Հինաստանի առաջնակարգ բուհերն են համարվում Պեկինի, Հինչինա, Ճայռն, Ռենմին, Նանչենի, Ֆուշանի, Չժժինի համալսարանները:

Հինաստանը և Ռուսաստանը հայտարարել են, որ ԵԱՏՍ և ՄԳԱՀ համակցման միջոցով փորձելու են խորացնել համագործակցությունը և նվազեցնել տարածայնությունները: Ինչպես նշել է քաղաքագետ Անդրեյ Բակլիցիկին, «Հինական ՄԳԱՀ-ի չի հակարգվում ԵԱՏՍ-ին: Վերջինս արդեն գոյություն ունի համաշխարհային քաղաքականության բարտեղի վրա, մեծ շուկա է, որը կարող է լավ հնարավորություններ տրամադրել չինական նախաձեռնության իրականացման համար: Մի խորոշ՝ ԵԱՏՍ-ի և ՄԳԱՀ-ի կիրակացնեն միմյացեց» [64]:

ԵԱՏՍ-ն և Հինաստանն ստորագրել են նաև Առօրբատնտեսական համագործակցության մասին համաձայնագրը: Անդրադառնայով այս համաձայնագրին՝ նշենք, որ մինչև 2019թ. դրա իրավական կիրարկումը դեռ ժամանակ կա, ուստի հայկական կողմը պետք է լավագույն հետազոտի այս պայմանագիրը և գտնի այն կետերը, որոնք կարելի է օգտագործել Հայաստան-Հինաստան հարաբերությունների գորգացման համար<sup>70</sup>:

ԵԱՏՍ-ին անդամակցությունը Հայաստանին հնարավորություն է տալիս ավելի լավ պաշտպանել իր շահերը Հինաստանի հետ հարաբերություններում, ինչպես նաև Հայաստանին հետաքրքրող բազմակողմ ծրագրերն ընդգրկել ԵԱՏՍ օրակարգը և թիմային, ամբաղջված դիրքերից ներկայացնելը

<sup>70</sup> «Որպեսզի համալսարանը շման լին բորի վրա, հարկ է լինել պահանջկու, ապրելով և հախաձեռնու: Մեր Ստանդարտը ԵԱՏՍ-Դրան, ԵԱՏՍ-Հինաստան համայնացրելի մասին», Թերք.am, 2018, <http://www.terq.am/am/news/2018/05/17/Mher-sahakyan/2687967>

Հյուսվածական կողմին: Օրիենտ Հայաստանը կարող է համապատասխան քայլեր ձևաբարել, որ ԵԱՏՆ-ն հետևողականություն ցուցաբերի հայ-իրանական երկարօգի նախազծում Չինաստանից ներդրումներ ստանալու համար, որի իրականացումն էականորեն կմեծացնի Հայաստանի հնարավորությունները ՄՃԳ-ում:

Հիշու ե՞ս հանձնաժողովը կասկածանով է վերաբրում շինական ՄԳԱԾ-ին և մոռավախություն ունի, որ այն կփորձացի ԵՄ ազդեցությունը Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում, քայլ պետք է հաշվի առնել նաև այն փաստը, որ Երկու կողմերը 2015թ. համաձայնեցին ներդաշնակություն ապահովել ՄԳԱԾ-ի և ԵՄ Ներդրումային ծրագրերի միջև, ուստի, եթե Հայաստանին հաջողվի նաև բանակցությունների միջոցով ցոյց տալ, որ ԵՄ-Հայաստան-Չինաստան համագործակցությունը համապատասխանում է, մի կողմից, ԵՄ-Չինաստան վերոհիշյալ համաձայնությանը, մյուս կողմից՝ ՀՀ-ԵՄ համապարփակ և ընդամենը գործնկերության համաձայնագրի տրամադրությանը, ապա հնարավոր է, որ այս ոլորտում նույնպես համատեղ ծրագրեր իրականացվեն:

Այսպիսով, սույն ուսումնասիրությունը ցոյց է տալիս, որ ՄԳԱԾ-ն հայ-չինական հարաբերությունների վերաբերումն այս հնարավորությունների է ընձեռում, որոնց նպատակային կիրառումը հնարավորություն կտա լավագույն օգտագործել Հայաստանի ներուժը ՄԳԱԾ-ում:

### Օգոստոսի ած գրականության ցանկ և հարցազրոյցներ

1. *Zhong Feiteng*, Beyond Geopolitical Myth: China's New Asia Strategy, in Shao BinHong (ed.), Looking for A Road. China Debates Its and the World's Future, BRILL, Leiden/Boston, 2016.
2. *Xing Guangcheng*, Understanding China's One-Belt-One-Road Initiative—A New Link Pattern for Deepened Interaction between China and the World, in Shao BinHong (ed.), Looking for A Road. China Debates Its and the World's Future, BRILL, Leiden/Boston, 2016.
3. *Xi Jinping*, The Governance of China II, Foreign Languages Press Co., Beijing, 2017.
4. *Xi Jinping*, The Governance of China, Foreign Languages Press Co., Beijing, 2014.
5. *Ian Bond*, The EU, the Eurasian Economic Union and One Belt, One Road: Can they work together? Center for European Reform, 2017.
6. National Development and Reform Commission People's Republic of China, Vision and Actions on Jointly Building Silk Road Economic Belt and 21st-Century Maritime Silk Road, 2015, [http://en.ndrc.gov.cn/newsrelease/201503/t20150330\\_669367.html](http://en.ndrc.gov.cn/newsrelease/201503/t20150330_669367.html)
7. *Joel Wuthnow*, Chinese Perspectives on the Belt and Road Initiative: Strategic Rationales, Risks, and Implications, China Strategic Perspectives 12, Institute for National Strategic Studies, National Defense University Press, Washington, 2017.
8. *Shi Yinhong*, Prudence Crucial for the One-Belt-One-Road Initiative, in Shao BinHong (ed.), Looking for A Road. China Debates Its and the World's Future., BRILL, Leiden/Boston, 2016.

9. *Xue Li*, Diplomatic Risks Facing China's One-Belt-One-Road Initiative, in Shao Binhong (ed.), *Looking for A Road. China Debates Its and the World's Future*. BRILL, Leiden/Boston, 2016.
10. *Мгер Саакян*, Перспективы вовлечения Армении в Китайскую инициативу «Один пояс, один путь», 21-й Век, № 4 (45), 2017г.
11. *Zhang Yunling*, Return of China's Regional Concept and Construction of a New Order, in Shao Binhong (ed.), *Looking for A Road. China Debates Its and the World's Future*, BRILL, Leiden/Boston, 2016.
12. *Hillary Clinton*, America's Pacific Century, Foreign Policy, October 11, 2011, <http://foreignpolicy.com/2011/10/11/americas-pacific-century/>
13. *Douglas A. Irwin*, The False Promise of Protectionism, Foreign Affairs, Volume 96, No. 3, May/June 2017.
14. *Bonnie S. Glaser*, Armed Clash in the South China Sea, Contingency Planning Memorandum, Council on Foreign Relations, 2012, <https://www.cfr.org/report/armed-clash-south-china-sea>
15. U.S. Energy Information Administration China, International Data and Analysis, May 14, 2015.
16. *Mher Sahakyan*, Comparative Analyses of Iran's and the DPRK's Nuclear Issues in the UNSC (2006–2013), Iran and the Caucasus, Volume 21, Issue 2, BRILL, 2017.
17. *James McBride*, Building the New Silk Road, Council on Foreign Relations, 2015, <https://www.cfr.org/backgrounder/building-new-silk-road>
18. *Mher Sahakyan*, China's Policy on the DPRK'S Nuclear Issue: Cooperation and Disagreements with Russia and the US, Moscow University Bulletin, Series 13. Oriental Studies (Вестн. Моск. ун-та. Сер. 13. Востоковедение), No. 1, 2017.
19. The White House, Washington, National Security Strategy of the United States of America, December 2017.
20. *Lu Feng, Li Xin, Li Shuangshuang, Jiang Zhixiao, Zhang Jieping, and Yang Yewei*, Why China? The Economic Logic behind China's One-Belt-One-Road Initiative, in Shao Binhong (ed.), *Looking for A Road. China Debates Its and the World's Future*, BRILL, Leiden/Boston, 2016.
21. *Nadege Rolland*, China's Eurasian Century? Political and Strategic Implications of the Belt and Road Initiative, National Bureau of Asian Research, Washington, 2017.
22. *Zhang Ming*, Integration of China Renminbi Internationalization with Asian Monetary Cooperation, in Shao Binhong (ed.), *Looking for A Road. China Debates Its and the World's Future*, BRILL, Leiden/Boston, 2016.
23. *Saori N. Katada*, Can China Internationalize the RMB? Foreign Affairs, 2018, <https://www.foreignaffairs.com/articles/china/2018-01-01/can-china-internationalize-rmb>
24. *Илья Чубаров, Денис Калашников*, Один Пояс – Один Путь: Глобализация по-китайски, Мировая экономика и международные отношения. Том 62, № 1, 2018.
25. *Qu Hongbin*, Financing China's Belt & Road Initiative, HSBC, 2017, <http://www.gbm.hsbc.com/insights/rmb/financing-china-belt-and-road-initiative>
26. *Станислав Ноздрев*, Китай в системе мировых финансов, Мировая экономика и международные отношения. Том 60, № 10, 2016.
27. *Henry CHAN Hing Lee*, The One Belt One Road Initiative — Who's Going to Pay for It? in China's One Belt One Road Initiative, Imperial College Press, 2016.
28. *Георгий Толорая*, Зачем России БРИКС?, Россия в глобальной политике, № 2. 2015, <http://www.globalaffairs.ru/number/Zachem-Rossii-BRIKS-17309>
29. *Raffaele Pantucci*, Sarah Lain, China's Eurasian Pivot, Royal United Services Institute, London, 2016.
30. *Yitzhak Shichor*, Ethno-Diplomacy: The Uyghur hitch in Sino-Turkish relations, East-West Center, Honolulu, 2009.
31. Full Text of Xi Jinping Keynote Speech at the United Nations Office

- in Geneva, China Global Television Network, 2017, <https://america.cgtn.com/2017/01/18/full-text-of-xi-jinping-keynote-speech-at-the-united-nations-office-in-geneva>
32. 中华人民共和国商务部,“一带一路”上的亚美尼亚 (ՉԺՀ առևտի նվազարդություն, «ԱԳՍՀ-ի վրա զննվող Հայաստան»), 2017, <http://fec.mofcom.gov.cn/article/fwydyl/zgzx/201708/20170802629742.shtml>
33. 中华人民共和国外交部。中国倡导和平共处五项原则 (Չինաստանի պաշտպանության կ խաղաղ գործադրյան հիմք սկզբունքը), <http://www.mfa.gov.cn/chn//gxh/xsb/wjzs/t8987.htm>
34. *Mher Sahakyan*, China's Reforms to Improve its Peacekeeping Capabilities: Chinas Growing Role in UNPKO (2000-2013), Moscow University Bulletin, Series 13. Oriental Studies (Вестн. Моск. ун-та. Сер. 13. Востоковедение), No. 1, 2016.
35. *Hu An-gang, Ma Wei, and Yan Yilong*, Connotation, Orientation and Path of the One-Belt-One-Road Initiative, in Shao BinHong (ed.), Looking for A Road. China Debates Its and the World's Future, BRILL, Leiden/Boston, 2016.
36. *LIM Tai Wei*. The One Belt One Road Narratives, in China's One Belt One Road Initiative, Imperial College Press, 2016.
37. Содружество Независимых Государств, Исполнительный комитет. Проект «Экономический пояс Шелкового пути». Перспективы для СНГ (информационно-аналитическая записка), Москва, 2016.
38. Сергей Сазонов, Центральноазиатское направление транспортной стратегии Китая. В кн.: Елена Сафонова (отв. редактор). Китай в мировой и региональной политике. История и современность, ИДВ РАН, 2017.
39. Иван Зуенко, Как пройдет китайский Шелковый путь, и кто на нем заработает, Московский Совет Карнеги, 2016, <http://carnegie.ru/commentary/63395>
40. Central Asia's Silk Road Rivalries, Europe and Central Asia Report N°245, International Crisis Group, 27 July 2017.
41. *Bai Lianlei*, Azerbaijan in the Silk Road Economic Belt: A Chinese Perspective, China Institute of International Studies, 2016, [http://www.cisis.org.cn/english/2016-08/30/content\\_8999522.htm](http://www.cisis.org.cn/english/2016-08/30/content_8999522.htm)
42. *Richard Ghiasy and Jiayi Zhou*, The Silk Road Economic Belt Considering Security Implications and EU-China Cooperation Prospects, Stockholm International Peace Research Institute (SIPRI) and Fridrich Ebert Shiftung, 2017.
43. *Mathieu Duchatelet and Phillip Schell*, China's Policy on North Korea, Economic Engagement and Nuclear Disarmament, SIPRI, 2013.
44. *Yuan Li*, Belt and Road: A Logic Behind the Myth, in Allessia Amighini (ed.), A China's Belt and Road: A Game Changer? The Italian Institute for International Political Studies, 2017.
45. Ministry of Foreign Affairs of the PRC, "Foreign Minister Wang Yi Meets the Press," March 8, 2015. [http://www.fmprc.gov.cn/mfa\\_eng/xxxx\\_662805/t1243662.shtml](http://www.fmprc.gov.cn/mfa_eng/xxxx_662805/t1243662.shtml)
46. Government of Pakistan Ministry of Planning, Development and Reform and People's Republic of China National Development & Reform Commission, Long Term Plan for China-Pakistan Economic Corridor, (2017-2030).
47. *Fu Ying*, China and the United States: It's Complicated! In Shao Bin-Hong (ed.), Looking for A Road. China Debates Its and the World's Future, BRILL, Leiden/Boston, 2016.
48. One Belt One Road, for Meeting on 3 July 2015, Paper Ref: CSD/2/2015. [https://www.pico.gov.hk/en/CSD\\_2015\\_2017/csd\\_2\\_2015e.pdf](https://www.pico.gov.hk/en/CSD_2015_2017/csd_2_2015e.pdf)
49. *The Government of the Hong Kong Special Administration Region*, The Armenian Community of Hong Kong and China Limited, Companies Registry, [http://www.cr.gov.hk/docs/wrpt/wk\\_new&changednamecoys\\_20140324.pdf](http://www.cr.gov.hk/docs/wrpt/wk_new&changednamecoys_20140324.pdf)
50. "ChinaHay" Newsletter/ «ՉինաՀայ» լրացի, <http://fliphml5.com/bookcase/rzwp>

51. Speech by Xi Jinping President of the People's Republic of China at the State Great Khural of Mongolia. Open up New Horizons for China-Mongolia Relations Through Mutual Assistance, 22 August 2014, [http://www.fmprc.gov.cn/mfa\\_eng/wjdt\\_665385/zjh\\_665391/t1185681.shtml](http://www.fmprc.gov.cn/mfa_eng/wjdt_665385/zjh_665391/t1185681.shtml)
52. Jack Donnelly, The Ethics of Realism, in Christian Reus-Smit and Duncan Snidal (ed.), *The Oxford Handbook of International Relations*, Oxford University Press, 2009.
53. William C. Wohlgforth, Realsim, in Christian Reus-Smit and Duncan Snidal (ed.), *The Oxford Handbook of International Relations*, Oxford University Press, 2009.
54. Сергей Ланцов, Валерий Ачкасов (ред.), *Мировая политика и международные отношения*, Питер Пресс, 2007.
55. Beppino Teschenke, Marxism, in Christian Reus-Smit and Duncan Snidal (ed.), *The Oxford Handbook of International Relations*, Oxford University Press 2009.
56. Полный текст доклада, с которым выступил Си Цзиньпин на 19-м съезде КПК. 19-й Всекитайский Съезд КПК, 2017, СИНЬХУА, <http://russian.news.cn/19cpnc/index.htm>
57. Arthur A. Stein, Neoliberal Institutionalism, in Christian Reus-Smit and Duncan Snidal (ed.), *The Oxford Handbook of International Relations*, Oxford University Press 2009.
58. Հիմաստանի Հայկական համայնքի հայտագան Հենրի Արյանյանի հարցազույցը, 2015, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=13827](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=13827)
59. Հեղինակի հարցազույցը Միջազգային գործերի ռուսաստանյան խորհրդի գլխավոր տնօրին Անդրեյ Կորտունովի հետ, Սուլվա, 2015թ. ապրիլի 16:
60. Հեղինակի հարցազույցը Սուվայի պետական համալսարանի Ասխայի և Աքրիկայի երկրների ինստիտուտի հետազոտող Շահնա Եսպիլինայի հետ, Սուվայ, 2015թ. ապրիլի 18:
61. Հեղինակի հարցազույցը Շահնայի Ֆուդան համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի փոխտէկնան Շեն Դինլիի հետ, Չինաստան, 2016թ. հունվարի 6:
62. Հեղինակի հարցազույցը գործարար, Չինաստանի հայկական համայնքի Խորհրդականների խորհրդի անդամ Զոն Փրինչյանի հետ, 2018թ. մարտի 23:
63. Հեղինակի հարցազույցը կիրառական գործության և թվային ռազմագործությունների մշակման փորձագետ Անահիտ Պարզյանի հետ, 2018, Երևան, փետրվարի 25:
64. Հեղինակի հարցազույցը ԴԻՌ կենտրոնի «Ռուսաստան և միջազգային գեներացի շուրածման ծրագրի» տնօրին Անդրեյ Բակլիցկու հետ, Արքանցի, Ռուսաստան, 2015, սեպտեմբերի 5:

2018թ. Նաևին-Երևան-Սուվայ-Վիեննա

*Մհեր Սահակյան*  
ԶԻՆԱՏԱՆԻ  
«ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ»  
ՆԱԽԱԶԵՐՆԱՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՀԱՅԱՏԱՆԸ

*Mher Sahakyan*  
THE ONE BELT, ONE ROAD  
INITIATIVE AND ARMENIA  
(Monograph in Armenian Language)

*Մհեր Սահակյան*  
ОДИН ПОЯС, ОДИН ПУТЬ И АРМЕНИЯ  
(Монография на армянском языке)

---

Twitter: @mhereast  
Researchgate: [https://www.researchgate.net/profile/Mher\\_Sahakyan](https://www.researchgate.net/profile/Mher_Sahakyan)  
Գույք՝ <https://chinastan.org/>  
Էլ. -փոստ՝ sahakyanmher@outlook.com

## *Մեկ Սահմանական*

# **«ՄԵԿ ԳՈՏԻ, ՄԵԿ ՃԱՆԱՊԱՐՀ» ՆԱԽԱԶԵՇՈՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ**

*Գիտական խմբագիր՝  
Վալերի ՊՈՂՈՍՅԱՆ*

*Առյաջական խմբագիր՝  
Անդրանիկ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

*Տեխնիկական խմբագիրներ՝  
Խոնարհիկ ՔԱՐԱՌԻԴԱՆՅԱՆ  
Լուսին ԲԱՐՄԱՍՅԱՆ*

*Նորավանք գիտակրթական հիմնադրամ  
ՀՀ, 0026 Երևան, Գարեգին Նժդեհի 23/1  
Կայք՝ [www.noravank.am](http://www.noravank.am)  
Էլ.-փոստ՝ [office@noravank.am](mailto:office@noravank.am)  
Հեռախոս/ֆաքս՝ (374 10) 44 04 73*

---

*Թուղթը օֆսեթ, ծավալը՝ 10 տպ.մամուլ  
Տպարանակը՝ 320: Տարատեսակը՝ Syntex:  
Տպագրութեալ է «Օսկան Երևանցի» ԲԲԸ տպարանում:*



**Միեր Սահակյան  
«Գինաստանի թերթը՝  
ԱԿՏԵՐ ՄԻՋՈՒԼԱԿ»  
2016թ. պատմա-  
բանի (Nanjing U-  
նիւրի ինստիտու-  
տի դոկտորական գիտական հիմքում հասելով հանդես է եկեց՝  
Օգոստոսի 26-ը Թիֆլիսի, Լոմոնտովի, ծանհայի, Նախիջևանի, Արցախի, Աղումայի, Հայաստանի և Ադրբեյչանի մասնակիցների կողմէն՝ առաջարկությունում, Հինաստանում ԵՄ ՆԵՐԿԱՎԱՐԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԽՈՐԻՐՈՒՄ Ակադեմիա:**

Չինաստանի արտաքին քաղաքականության և մշագգային անվտանգության հիմնախնդիրների վերաբերյալ երկու տասնյակ գիտական հոդվածների և բազմաթիվ վերլուծական խոսեների հեղինակ է, որոնց տպագրովել են «Вестник Московского университета. Серия 13. Востоковедение», «Iran and the Caucasus» (Brill Publishers), «21-րդ դար» և այլ գիտական ամսագրերում: Միեր Սահակյանը 2016թ. հիմնադրել է Ներկայական Եղբայրական և առմավարական և հետազոտությունների խորհրդը՝ հիմնադրամը՝ Անդամակցությունը՝ Բարձրագիտության մշագգային ասոցիացիային, Մեծ Բրիտանիայի չինագիտության ասոցիացիային, Շվեյցարիայի հունական «Ժամանակակից դիվանագիտություն» վերլուծական կենտրոնի խորհրդականների խորհրդի կազմում:

2006թ. պարտը է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետը՝ 2006-2008թ. ծառայել է ՀՀ ՊՆ Հատում Աշխանական գնդում, արժանացել է պատվոգրի, «Քաջազի մասունք», «Քանակի գերազանցիկ» կրծքանշաններով: 2010թ. գերազանցությամբ ավարտել է ԳԱԱ ԳՎԿ մագիստրուսության ստանուլով արևելագիտության բարձագործություն: 2011թ. պարտը է ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական դպրոցը: 2015թ. պարտը է ԴԻՌ կենտրոնին և ՌԴ Դիվանագիտական ակադեմիայի համաշխարհային ավագության հիմնախնդիրներին նվիրված միշագգային դպրոցը: 2015թ. հայողող է ճանաչվել նորարարական գաղափարների մրցույթում, որը կազմակերպվել էր «Նորայնակը» ԳՎՀ-ի և «Եվրասիական հստօքացիա» ՀԿ-ի կողմից: 2015թ. Սովորական լուսնության անվան պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի երկրների հստակության կողմից արժանացել է պատվորի: 2012-2016թ. սովորել է Համամալիքի համալսարանի Միշագգային հարաբերությունների ինստիտուտի դրամագիտական դոկտորական պատրունիքում:

2013թ. ընտրվել է Չինաստանի հայկական համայնք (ՉինաՅայ) գրոթաղիր մարմնի անդամ: 2014թ. Չինաստանում հիմնադրել է Չինաստանի Յայկական ուսանողական միուլյունը, որը դեկավարել է մինչև 2016թ.: 2014-2016թ. գրադեցրել է Չինաստանի հայկական համայնքի արտաքին կապերի գծով փոխականացի պաշտոնը: 2014թ. հիմնադրել է Չինաստանում Հայ հետազոտությունի և ուսանողների առցանց գիտաժողովը: 2017թ. հոկտեմբերին նախաձեռնել է Սփյուռքում Երիտրասարք հայ հետազոտողների առաջին առցանց գիտաժողովը: 2016թ. ընտրվել է Չինաստանի հայկական համայնքի նախագահ, որը դեկապարել է մինչև Յայաստան Վերադառնալը: 2017թ. նոյեմբերի 27-ը: 2017թ. դեկտեմբերին Երևանում կազմակերպել է «Վերահիմնաստավորելով Չինաստանի արտաքին քաղաքականությունը» հառուկ դասընթացը:

«Սովորելով իր տեսակի մեջ առաջինն է և միակը հայկական իրականությունում:

Այս ճանապարհային քարտեզը է դեպի Չինաստան Յայաստանի առաջանայու համար»:

**Միման Նավաստարյան**

Արտակարգ և լրացր դրամական:

Բայուրական գիտությունների թեմաներու, դրեւես

**32 (53)  
Հ-154**

ISBN 978-9939-825-36-6

